

**«ՀԱՅԱՍՏԱՆԸ ԻՐԱՎՈՒՆՔ ՉՈՒՆԻ ՊԱՐՏՎԵԼՈՒ
ԵՎ ՈՉ ՄԻ ՊԱՏԵՐԱԶՄՈՒՄ»**

**«АРМЕНИИ НЕ ДАНО ПРОИГРАТЬ НИ ОДНОЙ ВОЙНЫ»
«ARMENIA CAN NOT AFFORD TO LOSE ANY WAR»**



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՊԱՆԱԿԱՆ ԲԱՐԵՓՈՒՆՈՒՄՆԵՐ.
ՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԱՏՐԱՍՏՈՒՄ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆԸ**

**ОБОРОННЫЕ РЕФОРМЫ РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ:
ПОДГОТОВКА ГОСУДАРСТВА К ОБОРОНЕ**

**THE DEFENSE REFORMS OF THE REPUBLIC OF ARMENIA:
STATE'S PREPARATION FOR DEFENSE**

**ԱԶԳԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅՈՒՆ՝
ԿԱՅՈՒՆ ԺՈՂՈՎՐԳԱՎԱՐԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՄԲ**



Նորանկախ պետության պատրաստում պաշտպանությանը
Արցախյան ազատամարտի ժամանակ.
Կենտրոնում՝ ԼՂՀ Ինքնապաշտպանության ուժերի
կոմիտեի նախագահ Սերժ Սարգսյանը, աջից՝ Մոնթե Մելքոնյանը
ԼՂՀ, 1993 թ. ապրիլ



ՀԱՅԿԱԿԱՆ ԲԱՆԱԿ

Լույս է տեսնում 1995 թվականից տարին չորս անգամ

3(61). 2009

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

- Քոբանջյան Հ. Ս.**
քաղաքական գիտությունների դոկտոր (Ռ-Գ), Ռ-ազմական գիտությունների ռուսաստանյան ակադեմիայի իսկական անդամ, հակաահաբեկչության գծով փորձագետ (ԱՄՆ) (նախագահ)
- Չիլինգարյան Գ. Ս.**
(գլխավոր խմբագիր)
- Այդինյան Ռ. Ա.**
- Ապրիանով Է. Ա.**
- Ավետիսյան Վ. Պ.**
(գլխ. խմբ. տեղակալ)
- Բաբայան Ն. Մ.**
- Գասպարյան Վ. Ս.**
- Գասպարյան Տ. Շ.**
- Դավթյան Ա. Մ.**
- Թունյան Վ. Վ.**
- Իսախանյան Մ. Ռ.**
- Խաչատուրով Յու. Գ.**
- Կարապետյան Մ. Ն.**
- Կարապետյան Մ. Ս.**
- Մաթևոսյան Ի. Ժ.**
- Մարգարյան Վ. Հ.**
(գլխ. խմբ. տեղակալ)
- Մարտիրոսյան Ս. Ս.**
- Մարտիրոսով Լ. Ա.**
- Միրզաբեկյան Ա. Ռ.**
- Նազարյան Ա. Ս.**
- Սեդրակյան Գ. Գ.**
- Տեր-Գրիգորյանց Ն. Գ.**
- Տոնոյան Դ. Է.**
- Փարսադանյան Ա. Մ.**

Բ Ո Վ Ա Ն Դ Ա Կ ՈՒ Թ Յ ՈՒ Ն

ՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԱՏՐԱՍՏՈՒՄ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆԸ

- Յու. Գ. Խաչատուրով, Պաշտպանությանը պետության և նրա Ձինված ուժերի պատրաստման որոշ հարցեր 8*
- Մ. Լ. Շահգեղյան, Արտակարգ իրավիճակներից և պատերազմի հետևանքներից բնակչության պաշտպանության համակարգի կատարելագործումը 21*
- Հ. Ս. Քոբանջյան, Պետության տարածքային պաշտպանության կազմակերպման հարցի շուրջ՝ Իսրայելի օրինակով 25*
- Վ. Բ. Տերտերյան, ՀՀ տարածքային կառավարման համակարգի կատարելագործումը պաշտպանությանը պետության պատրաստման համատեքստում 34*
- Հ. Գ. Բեգլարյան, Տրանսպորտի և կապի ենթակառուցվածքների պատրաստումը պաշտպանությանը 43*
- Հ. Մ. Դարբինյան, Առողջապահության համակարգի պատրաստումն ըստ պետության պաշտպանության պահանջների 48*
- Ա. Ռ. Գևորգյան, ՀՀ տնտեսության մոբիլիզացիոն պատրաստման համակարգի կատարելագործման որոշ խնդիրներ 56*
- Ա. Ա. Գալստյան, Վերականգնվող էներգետիկայի զարգացումը՝ որպես ՀՀ էներգետիկ անվտանգության ապահովման և պետության պաշտպանունակության ամրապնդման երաշխիքներից մեկը . . . 62*
- Ա. Մ. Դավթյան, Պաշտպանությանը պետության բնակչության պատրաստման հիմնական ուղղությունները 68*
- Վ. Պ. Ավետիսյան, Պետությունը պաշտպանությանը պատրաստելու իրավական հիմքերի կատարելագործումը պաշտպանական բարեփոխումների համատեքստում 78*

Վ. Հ. Մարգարյան, Ակտիվ մարտական գործողություններին զինծառայողների հոգեբանական պատրաստումը՝ որպես պաշտպանությանը պետության պատրաստման կարևոր բաղադրիչ 87

ՔԱՂԱՔԱԿԱՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

Լ. Լ. Ուխտեղբայրյան, Միջպետական հարաբերությունների հաստատումը և զարգացումը Հայաստանի Հանրապետության և Ռուսաստանի Դաշնության միջև 1991—1997 թթ. 98

ՈԱԶՄԱԿԱՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

Մ. Լ. Կարապետյան, Հայաստանի առաջին հանրապետության հրացանաձգային զնդերի զինվորական կանոնադրությունը 107

ՈԱԶՄԱԳԻՏԱԿԱՆ ՏԵՐՄԻՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

Ն. Ս. Մկրտչյան, Գ. Ս. Չիլինգարյան, Համարի բառարան 115

ԳԻՏԱԽՈՐՀՐԴՏՎԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

- Ռ. Վ. Աղուզումցյան, հոգեբանական գիտությունների թեկնածու, դոցենտ,
Ն. Հ. Առաքելյան, ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս,
- Գ. Ե. Բաղդասարյան, ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս,
Հ. Ա. Գևորգյան, ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս,
- Ռ. Գ. Գևորգյան, երկրաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր,
Ա. Հ. Թռչունյան, ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ,
Վ. Մ. Հարությունյան, ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս,
Ա. Հ. Մանթաշյան, ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս,
- Է. Գ. Մինասյան, պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր,
Մ. Մ. Միրիջանյան, բժշկական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր,
Կ. Ս. Մուսոյան, տեխնիկական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր,
Յու. Ս. Չիլինգարյան, ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս,
Վ. Ս. Մարգարյան, ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս,
Հ. Ս. Միսակյան, բժշկական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

«АЙКАКАН БАНАК» («АРМЯНСКАЯ АРМИЯ»)

ВОЕННО-НАУЧНЫЙ ЖУРНАЛ ИНСТИТУТА
НАЦИОНАЛЬНЫХ СТРАТЕГИЧЕСКИХ ИССЛЕДОВАНИЙ
ИМЕНИ ДРАСТАМАТА КАНАЯНА
МИНИСТЕРСТВА ОБОРОНЫ РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ

№ 3 (61). 2009

Издается 4 раза в год

РЕДАКЦИОННАЯ КОЛЛЕГИЯ

Котанджян Г. С., доктор политических наук (РФ), Действительный член
Российской Академии военных наук, научный эксперт
по контртерроризму (США) (председатель), *Чилингарян Д. С.* (гл. редактор),
Аветисян В. П. (зам. гл. редактора), *Айджинян Р. А.*, *Априамов Э. А.*, *Бабаян Н. М.*,
Гаспарян В. С., *Гаспарян Т. Ш.*, *Давтян А. М.*, *Исаханян М. Р.*, *Карапетян М. Н.*,
Карапетян М. С., *Маргарян В. Г.* (зам. гл. редактора), *Мартirosов Л. А.*,
Мартirosян С. С., *Матевосян И. Ж.*, *Мирзабекян А. Р.*, *Назарян А. С.*,
Парсаганян А. М., *Сегракян С. Г.*, *Тер-Григорьянц Н. Г.*,
Тоноян Д. Э., *Тунян В. В.*, *Хачатуров Ю. Г.*

СОДЕРЖАНИЕ

ПОДГОТОВКА ГОСУДАРСТВА К ОБОРОНЕ

<i>Ю. Г. Хачатуров.</i> Некоторые вопросы подготовки государства и его Вооруженных сил к обороне	8 (18) *
<i>М. Л. Шахгельян.</i> Совершенствование системы защиты населения от чрезвычайных ситуаций и последствий войны	21 (24)
<i>Г. С. Котанджян.</i> О проблеме организации территориальной обороны государства на примере Израиля	25 (30)
<i>В. Б. Тертерян.</i> Совершенствование системы территориального управления РА в контексте оборонных реформ	34 (41)
<i>Г. Г. Бегларян.</i> Подготовка инфраструктур транспорта и связи к обороне	43 (47)
<i>А. М. Дарбинян.</i> Подготовка системы здравоохранения в соответствии с требованиями обороны государства	48 (54)
<i>А. Р. Геворкян.</i> Некоторые проблемы усовершенствования системы мобилизационной подготовки экономики РА	56 (61)
<i>А. А. Галстян.</i> Развитие возобновляемой энергетики как одна из гарантий обеспечения энергетической безопасности РА и укрепления обороноспособности государства	62 (66)
<i>А. М. Давтян.</i> Основные направления подготовки населения государства к обороне	68 (77)
<i>В. П. Аветисян.</i> Усовершенствование правовых основ подготовки государства к обороне в контексте оборонных реформ	78 (85)

* Цифры в скобках обозначают страницу, с которой начинается текст на русском языке.

В. Г. Маргарян. Психологическая подготовка военнослужащих к активным боевым действиям как важная составляющая подготовки государства к обороне 87 (96)

ПОЛИТИЧЕСКАЯ ИСТОРИЯ

Л. Л. Улубабян. Установление и развитие межгосударственных отношений между Республикой Армения и Российской Федерацией в 1991—1997 гг. 98 (105)

ВОЕННАЯ ИСТОРИЯ

М. А. Карапетян. Военный устав стрелковых полков Первой Республики Армения 107 (114)

ВОЕННАЯ ТЕРМИНОЛОГИЯ

Н. С. Мкртчян, Д. С. Чилингарян. Словарь номера 115 (116)

НАУЧНО-КОНСУЛЬТАЦИОННЫЙ СОВЕТ:

- Р. В. Агузумцян, кандидат психологических наук, доцент;*
 - Н. У. Аракелян, академик НАН РА;*
 - В. М. Арутюнян, академик НАН РА;*
 - Г. Е. Багдасарян, академик НАН РА;*
 - Г. А. Геворкян, академик НАН РА;*
- Р. Г. Геворкян, доктор геологических наук, профессор;*
 - А. А. Манташян, академик НАН РА;*
- Э. Г. Минасян, доктор исторических наук, профессор;*
- М. М. Мирижанян, доктор медицинских наук, профессор;*
 - К. С. Мосоян, доктор технических наук, профессор;*
 - В. С. Саркисян, академик НАН РА;*
- А. С. Сисакян, доктор медицинских наук, профессор;*
 - А. А. Трчуянян, член-корреспондент НАН РА;*
 - Ю. С. Чилингарян, академик НАН РА*

«HAIKAKAN BANAK» («ARMENIAN ARMY»)
DEFENSE-ACADEMIC JOURNAL,
DRASTAMAT KANAYAN INSTITUTE FOR NATIONAL STRATEGIC STUDIES,
MINISTRY OF DEFENSE, REPUBLIC OF ARMENIA

№ 3 (61). 2009

Is published 4 times a year

EDITORIAL BOARD

Kotanjian H. S., Doctor of Political Sciences (RF), Fellow Member,
Russian Academy of Military Sciences, Counterterrorism Fellow (USA) (Chairman),
Chilingaryan D. S. (Editor-in-Chief), *Apreamov E. A.*,
Avetisyan V. P. (Deputy Editor-in-Chief), *Babayan N. M.*, *Davtyan A. M.*,
Gasparyan T. Sh., *Gasparyan V. S.*, *Idynyan R. A.*, *Isakhanyan M. R.*,
Karapetyan M. N., *Karapetyan M. S.*, *Khachatourov Yu. G.*,
Margaryan V. H. (Deputy Editor-in-Chief), *Martirosyan S. S.*, *Martirossov L. A.*,
Matevossyan I. Zh., *Mirzabekyan A. R.*, *Nazaryan A. S.*, *Parsadanyan A. M.*,
Sedrakyan S. G., *Ter-Grigoryants N. G.*, *Tonoyan D. E.*, *Tounyan V. V.*

CONTENTS

STATE'S PREPARATION FOR DEFENSE

<i>Yu. G. Khachatourov.</i> Some issues of the state's and its Armed Forces' preparation for defense	8 (19)*
<i>M. L. Shahgeldyan.</i> The improvement of the system of the population protection from emergency situations and war aftermath	21 (24)
<i>H. S. Kotanjian.</i> On the problem of organizing the state's territorial defense by Israel's example	25 (32)
<i>V. B. Terteryan.</i> The improvement of the system of territorial administration of the RA in the context of defense reforms	34 (42)
<i>H. G. Beglaryan.</i> The preparation of transport and communication infrastructures for defense	43 (47)
<i>H. M. Darbinyan.</i> The preparation of the health system according to the requirements of the state's defense	48 (55)
<i>A. R. Gevorkyan.</i> Some problems of improving the system of preparedness activity of the RA economy	56 (61)
<i>A. A. Galstyan.</i> The development of renewable energy as one of the guarantees of ensuring the RA energy security and strengthening the state's defense capability	62 (67)
<i>A. M. Davtyan.</i> The basic directions of preparation of the state's population for defense	68 (77)
<i>V. P. Avetisyan.</i> The improvement of legal bases of the state's preparation for defense in the context of defense reforms	78 (86)

* Numbers in brackets mean the page of the text in English.

V. H. Margaryan. Servicemen's psychological training for active combat actions as an important component of the state's preparation for defense 87 (97)

POLITICAL HISTORY

L. L. Ulubabyan. The establishment and development of interstate relations between the Republic of Armenia and the Russian Federation in 1991–1997 98 (106)

MILITARY HISTORY

M. L. Karapetyan. The military regulations of rifle regiments of the First Republic of Armenia 107 (114)

MILITARY TERMINOLOGY

N. S. Mkrtychyan, D. S. Chilingaryan. Volume Dictionary 115 (117)

SCIENTIFIC-ADVISORY COUNCIL:

- R. V. Aghouzoumstian*, Candidate of Psychological Sciences, Docent;
 - N. H. Arakelian*, Full Member, NAS RA;
 - G. Y. Baghdassarian*, Full Member, NAS RA;
 - Y. S. Chilingarian*, Full Member, NAS RA;
 - H. A. Gevorkian*, Full Member, NAS RA;
- R. G. Gevorkian*, Doctor of Geological Sciences, Professor;
 - V. M. Haroutyunian*, Full Member, NAS RA;
 - A. H. Mantashian*, Full Member, NAS RA;
- E. G. Minasyan*, Doctor of Historical Sciences, Professor;
- M. M. Miridjanian*, Doctor of Medical Sciences, Professor;
- K. S. Mossoyan*, Doctor of Technical Sciences, Professor;
 - V. S. Sargsian*, Full Member, NAS RA;
- H. S. Sissakian*, Doctor of Medical Sciences, Professor;
 - A. H. Trchounian*, Fellow Correspondent, NAS RA

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՊԱՇՏՊԱՆԱԿԱՆ ԲԱՐԵՓՈԽՈՒՄՆԵՐ.
ՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԱՏՐԱՍՏՈՒՄ
ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆԸ**

**ОБОРОННЫЕ РЕФОРМЫ
РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ:
ПОДГОТОВКА ГОСУДАРСТВА
К ОБОРОНЕ**

**THE DEFENSE REFORMS
OF THE REPUBLIC OF ARMENIA:
STATE'S PREPARATION
FOR DEFENSE**

ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆԸ ՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՎ ՆՐԱ ՁԻՆՎԱԾ ՌԻՇԵՐԻ ՊԱՏՐԱՍՏՄԱՆ ՈՐՈՇ ՀԱՐՑԵՐ

Յու. Գ. ԽԱՉԱՏՈՒՐՈՎ, գեներալ-գնդապետ, ՀՀ ՁՈՒ-ի ԳՇ պետ



Պաշտպանությանը¹ պետության և նրա զինված ուժերի պատրաստումը համապատասխան պետական և ոչ պետական կառույցների կողմից համադասված միջոցառումների համակարգի կազմակերպման և իրականացման բարդ, բազմակողմ և շարունակական գործընթաց է՝ ուղղված զինված հարձակումից պաշտպանությանը նրա բոլոր ոլորտների պատեհաժամ և լրիվ պատրաստության համակողմանի ապահովմանը:

Պաշտպանությանը պետության և նրա ՁՈՒ-ի պատրաստումը կատարվում է *նախ* պետության կենսագործունեության բոլոր ոլորտներում (ոչ թե միայն ռազմական): *Երկրորդ*, դա արվում է մշտապես՝ խաղաղ ժամանակ, սպառնալից շրջանում և նույնիսկ ռազմական գործողությունների ընթացքում: Ընդամին առավել դինամիկ կերպով այն կատարվում է ռազմական վտանգի աճման, հակառակորդի անձնավորման, կոնկրետ ուղղություններից կոնկրետ ռազմական սպառնալիքների ի հայտ գալու պահից սկսած:

Այսպիսով՝ պաշտպանությանը պետության և նրա ՁՈՒ-ի պատրաստման նպատակն այն է, որ անմիջական սպառնալիքի ի հայտ գալու պահին ապահովված լինեն հակառակորդ պետությունների համեմատությամբ իր պետության ավելի շահավետ դիրքը, նյութական և հոգևոր ոլորտներում ուժերի հարաբերակցության ձեռք բերված ընդունելի մակարդակը (կողմերի համախումբ հզորությունների (ներուժների) հարաբերակցությունը) կամ այնպիսի գերակշռությունը, որը խելացի օգտագործելու դեպքում ապահովեր պատերազմի կանխումը կամ այդ պատերազմում հաղթանակը:

Հետևաբար, պաշտպանությանը պետության պատրաստումն ընդգրկում է ՁՈՒ-ն (խաղաղ ժամանակ՝ նաև մյուս գորքերը*), բնակչությունը, տարածքը,

¹ «Պաշտպանության մասին» ՀՀ օրենքին համապատասխան պաշտպանություն ասելով պետք է հասկանալ «ռազմական անվտանգության համակարգը, Հայաստանի Հանրապետության տարածքը, հասարակությունն ու տնտեսությունը պաշտպանության նախապատրաստելու և Հայաստանի Հանրապետության անկախությունը, տարածքային ամբողջականությունը, պետական սահմանի անձեռնմխելիությունն ու անվտանգությունը պաշտպանելու՝ ռազմական, քաղաքական, տնտեսական, տեղեկատվական, սոցիալական, իրավական և այլ միջոցների ու միջոցառումների, ինչպես նաև ռազմական անվտանգության միջազգային երաշխիքների ապահովման մեխանիզմների կիրառման համալիր գործունեության համակարգ» (տես «Պաշտպանության մասին» ՀՀ օրենքը, հոդված 3, կետ 1 (<http://www.arlis.am/DocumentView.aspx?docid=38877>)):

* Թեև բոլոր քաղաքական-իրավական փաստաթղթերում (ՀՀ Սահմանադրություն, համապատասխան օրենքներ, «Ռազմական դրկտիրն») կիրառվում է «այլ գորքերը» տերմինը, մենք, հիմնվելով հայերենի քերականական նորմերի (*այլ-ը* թույլ չի տալիս որոշյալ հոդի կիրառում) և ռուսերենից *группе*

տնտեսությունը, ինչպես նաև տրանսպորտի և կապի, քաղաքական-դիվանագիտական, իրավական, տեղեկատվահոգեբանական, գիտության, կրթության, մշակույթի, առողջապահության և այլ ոլորտներ:

ՀՀ ռազմական անվտանգության համակարգի* (Ռ-ԱՀ) խնդիրները կարող են կառուցավորված լինել ըստ երեք հիմնական ուղղությունների՝ ՀՀ անվտանգության դեմ ուղղված ռազմական սպառնալիքների չեզոքացում, խաղաղ ժամանակի ոչ ուժային (տեղեկատվահոգեբանական, ռազմաքաղաքական, կազմակերպական և այլն) և ուժային օպերացիաների ու գործողությունների իրականացում, ռազմական ուժի կիրառում:

ՀՀ անվտանգության դեմ ուղղված ռազմական սպառնալիքների չեզոքացումը ապահովվում է.

– ռազմաքաղաքական իրադրության սպառնալից զարգացման և ՀՀ-ի վրա զինված հարձակման նախապատրաստման պատեհաժամ հայտնաբերմամբ,

– ՁՈՒ-ի և մյուս գորքերի կազմի, վիճակի, մարտական ու զորահավաքային պատրաստության, նրանց գործունեությունն ու կիրառումն ապահովող ուժերի և միջոցների պատրաստման, ինչպես նաև կառավարման համակարգերի պահպանմամբ այնպիսի մակարդակում, որով երաշխավորված լինեք հակառակորդին ցանկացած պայմաններում տրված վնասի պատճառումը,

– ՁՈՒ-ի մարտական ներուժի պահպանմամբ այնպիսի մակարդակում, որ երաշխավորված լինեն հնարավոր հարձակման կասեցումը և հետմղումը,

– օպերատիվ ծավալմանը ՁՈՒ-ի պատրաստության պահպանմամբ:

Խաղաղ ժամանակի ոչ ուժային և ուժային օպերացիաների ու գործողությունների իրականացումը ենթադրում է.

– ստանձնած պարտավորությունների կատարում՝ ըստ ազգային անվտանգության ոլորտում միջազգային պայմանագրերի, մասնակցություն խաղաղարարական օպերացիաներին,

– գորքերի մասնակի կամ լրիվ օպերատիվ ծավալում և կիրառմանը պատրաստության պահպանում,

– տարածքային և հակաօդային պաշտպանության միացյալ համակարգի կազմակերպում,

воїска (ոչ քե՝ уніе) ճշգրիտ թարգմանության վրա, սույն հոդվածում գործածել ենք «մյուս գորքերը» տերմինը: – *Խմբ.*

* «Ռազմական անվտանգության համակարգը Հայաստանի Հանրապետության պետական լիազորված մարմինների ու պաշտոնատար անձանց, Ձինված ուժերի և ռազմարդյունաբերական համալիրի, ռազմական անվտանգության խնդիրների լուծման համար նախատեսված հաստատությունների և կազմակերպությունների ամբողջությունն է: Այն իրականացնում է ռազմական անվտանգության ապահովմանը նպատակաուղղված համալիր գործունեություն, որը ներառում է՝

1) Ձինված ուժերը, Հայաստանի Հանրապետության տարածքը, հասարակությունը և տնտեսությունը պաշտպանության նախապատրաստող քաղաքական, ռազմական, տնտեսական, տեղեկատվական, սոցիալական, իրավական և այլ միջոցներ ու միջոցառումներ,

2) ռազմական անվտանգության միջազգային երաշխիքների ապահովման մեխանիզմների կիրառում» («Հայաստանի Հանրապետության ռազմական դոկտրին», էջ 42):

– բոլոր տեսակների տեղեկատվական և հոգեբանական պայքարի կազմակերպում և վարում:

Ռազմական ուժի կիրառում: Պաշտպանության ժամանակակից պլանավորումը, հիմնված լինելով պետության ռեսուրսների և հնարավորությունների իրատեսական գնահատման վրա, ելնում է այն մեկնակետից, որ ՁՈՒ-ն, ինչպես նաև մյուս զորքերը, պետք է պատրաստ լինի հարձակումը հետ մղելու և հակառակորդին պարտության մատնելու, պատերազմների ու զինված հակամարտությունների սանձազերծման և վարման ցանկացած տարբերակի դեպքում հակառակորդի կողմից խոցման ժամանակակից մարտական միջոցների զանգվածային կիրառման պայմաններում իրականացնելու ակտիվ գործողություններ (ինչպես պաշտպանական, այնպես էլ հարձակողական):

Պաշտպանությանը պատրաստման հանգուցակետում **Զինված ուժերն** են:

ՁՈՒ-ն ՌԱՀ-ի հիմքը կազմող ռազմական կառույց է, որն ապահովում է ՀՀ անկախության, տարածքային ամբողջականության, սահմանների անձեռնմխելիության և անվտանգության զինված պաշտպանությունը²:

ՀՀ-ում իրականացվող պաշտպանական բարեփոխումներում կարելի է առանձնացնել ՁՈՒ-ի զարգացման հետևյալ հիմնական ուղղությունները՝ խաղաղ և պատերազմական շրջաններում համապատասխան առանձնահատկությունների հաշվառմամբ*:

1. ՁՈՒ-ի և մյուս զորքերի բաղադրարարների կառուցվածքի, կազմի և քվաքանակի համապատասխանեցում ռազմական անվտանգության ապահովման խնդիրներին՝ պետության րևոտեսական հնարավորությունների հաշվառմամբ:

Անձնակազմի, սպառազինության և ռազմական տեխնիկայի օպտիմալ քանակը պետք է սահմանվի հետևյալ խնդիրները լուծելուց հետո.

– ռազմաքաղաքական իրադրության գնահատում, Հայաստանի համար հնարավոր ռազմական սպառնալիքների վերլուծություն և հավանական հակառակորդների զորքերի վիճակի գնահատում,

– ռազմական սպառնալիքները ոչ ռազմական մեթոդներով չեզոքացնելու հնարավորություն,

– հավանական հակառակորդի հնարավոր զինված հարձակման հետմղման համար ՀՀ ՁՈՒ-ի և մյուս զորքերի խնդիրների սահմանում:

Դրանից հետո միայն կարելի է ձևակերպել, որոշել և առաջադրել ռազմավարական խնդիրներ, ՀՀ ՁՈՒ-ի համար ստանդարտներ, քանակական ու որակական բնութագրեր և կազմը:

2. ՀՀ ՁՈՒ-ի շինարարության, զարգացման և կիրառման նորմատիվ իրավական հիմքի, ինչպես նաև հասարակության հետ նրանց հարաբերությունների համակարգի կադրաբեռնագործում:

² Տես «ՀՀ ռազմական դոկտրին», էջ 79:

* ՀՀ ՁՈՒ-ի զարգացման ուղղությունները հողվածում քննարկվում են սխեմատիկորեն, քանի որ դրանք, ընդհանուր առմամբ լինելով բազմաառումային, համալիր, պահանջում են հատուկ հետազոտություն:

Իրավական ոլորտում իրականացվող բարեփոխումների ընթացքում ձևավորվել է ՁՈՒ-ի զարգացման իրավական հիմքը, մասնավորապես, ընդունվել են մի շարք օրենքներ և այլ նորմատիվ իրավական ակտեր, որոնք կարգավորում են ՁՈՒ-ի հետ առնչվող պետական մարմինների միջև հարաբերությունները: Ռազմական ոլորտի հիմնարար փաստաթղթերն են ՀՀ Սահմանադրությունը, «Պաշտպանության մասին»³, «Ձինժառայողների և նրանց ընտանիքների անդամների սոցիալական ապահովության մասին»⁴, «Ձորահավաքային նախապատրաստության և զորահավաքի մասին»⁵, «Ձինվորական ծառայություն անցնելու մասին»⁶, «Ռազմական դրության իրավական ռեժիմի մասին»⁷, «Ձինապարտության մասին»⁸, «Այլընտրանքային ծառայության մասին»⁹ ՀՀ օրենքները, պաշտպանության բնագավառում ՀՀ կնքած միջազգային պայմանագրերը, միջգերատեսչական հանձնաժողովների մշակած «Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության ռազմավարությունը»¹⁰ և «Հայաստանի Հանրապետության ռազմական դոկտրինը», ինչպես նաև ՀՀ Կառավարության հաստատած գերատեսչական ռազմավարությունները:

Ռազմական ոլորտի նորմատիվ իրավական հիմքերի, մասնավորապես, զինվորական կանոնադրությունների կատարելագործումը կատարվում է իրավական պետության զարգացմանը զուգընթաց: Անհրաժեշտ է շարունակել աշխատանքը օրենսդրական ակտերի փոխհամաձայնեցվածության, համակարգայնության և ՀՀ Սահմանադրությանը դրանց համապատասխանության մեծացման ուղղությամբ, նվազագույնի հասցնել օրենքների դեկլարատիվությունը, ինչպես նաև հստակեցնել դրանց գործնական կիրառման ռեալ մեխանիզմները:

3. ՀՀ ՁՈՒ-ի և մյուս զորքերի կիրառման միասնականության, ՀՀ անվտանգության և պաշտպանության ռեալ պահանջումներին դրանց խնդիրների ծավալի ու բովանդակության համապատասխանեցման, ՁՈՒ-ին Սահմանադրությամբ չնախատեսված գործառնությունների և խնդիրների հանձնարարման բացառման սկզբունքներով ռազմավարական պլանավորման կարարելագործում:

Անհրաժեշտ է սահմանել պետության պաշտպանական անվտանգության հիմնական սկզբունքները, ռազմական շինարարության բնույթը և ուղղվածությունը, հնարավոր ռազմական հակամարտություններում ռազմավարական խնդիր-

³ Տես «Պաշտպանության մասին» ՀՀ օրենքը (<http://www.arlis.am/DocumentView.aspx?docid=38877>):

⁴ Տես նույն տեղում, էջ 698:

⁵ Տես նույն տեղում, էջ 851:

⁶ Տես «ՀՀ պաշտոնական տեղեկագիր», 2002 թ., հմ. 26, էջ 3:

⁷ Տես «Ռազմական դրության իրավական ռեժիմի մասին» ՀՀ օրենքը (<http://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=23503>):

⁸ Տես «Հայաստանի Հանրապետությունում 1995–1999 թթ. գործող օրենքների ժողովածու», հ. 2, էջ 680:

⁹ Տես «Հայաստանի Հանրապետության պաշտոնական տեղեկագիր», 2004 թ., հմ. 6, էջ 3:

¹⁰ Տես «ՀՀ ազգային անվտանգության ռազմավարություն», «ՀՀ պաշտոնական տեղեկագիր», *նաև*՝ «ՀԲ» ռազմագիտական հանդեսի հատուկ թողարկում, Ե., 2007:

ների լուծման վերաբերյալ ՁՈՒ-ին և մյուս գորքերին ներկայացվող հիմնական պահանջները:

4. *ՀՀ ՁՈՒ-ի և մյուս գորքերի ռազմարևութասական սպահովման համակարգի կայարանելագործում՝ արդյունավետության սպահովման, այն է՝ ֆինանսական միջոցների և նյութական ռեսուրսների կենտրոնացման և ռացիոնալ օգտագործման հիմքի վրա:*

5. *ՁՈՒ-ում օրինականության, իրավակարգի և զինվորական կարգապահության ամրապնդում:*

6. *Զինվորական ծառայության հեղինակության ամրապնդման, ծառայությանը ՀՀ քաղաքացիների պատրաստման ուղղությամբ պետական քաղաքականության իրականացում:*

7. *Կադրերի պատրաստման, ռազմական կրթության, զինծառայողների օպերատիվ ու մարտական պատրաստման և դաստիարակության, բոլոր տեսակի սպահովումների համակարգերի գործունեության արդյունավետության մեծացում, ինչպես նաև ռազմագիտական քաղաքիչի սրեղծում, դրանց միավորում ուսուցման և դաստիարակության մեկ միասնական համակարգի ձևով:*

8. *Պայմանագրային և զորակոչային հիմունքներով ՁՈՒ-ի համալրման համակարգի կայարանելագործում:*

9. *Սպառազինության և ռազմական տեխնիկայի շահագործման ու նորոգման համակարգի արդյունավետության մեծացում:*

10. *ՀՀ ՁՈՒ-ի հատուկ տեղեկատվական և բարոյահոգեբանական սպահովման համակարգի կայարանելագործում:*

11. *Միջազգային ռազմական, ռազմաքաղաքական և ռազմարևութասական համագործակցության զարգացում:*

Ընդամին ՁՈՒ-ն պետք է կարողանա՝

խաղաղ ժամանակ. առանց լրացուցիչ գորահավաքային միջոցառումների պահպանել մարտական պատրաստության մակարդակը, ցանկացած տեսակի զինված հակամարտությունում հաջողությամբ կատարել խնդիրները, ինչպես նաև բազմազգ ուժերի կազմում իրականացնել խաղաղարարական գործողություններ,

ռազմաքաղաքական և ռազմավարական իրադրության սրման դեպքում. սպահովել գորքերի օպերատիվ ծավալումը և կանխել իրադրության սրումը,

պատերազմի ժամանակ. առկա ուժերով հետ մղել հակառակորդի հարձակումը, իսկ լիամասշտաբ օպերատիվ ծավալումից հետո լուծել հակառակորդի վերջնական ջախջախման խնդիրները, զինված հարձակման կոլեկտիվ հետմղման դեպքում սպահովել փոխգործունակությունը դաշնակցային գորքերի հետ:

ՁՈՒ-ն բոլոր պարամետրերով՝ համալրում, քանակական կազմ, կազմակերպվածք, սպառազինություն, կառավարում, ռազմական արվեստի մակարդակ, պետք է համապատասխանեն կոնկրետ պատմական շրջանի պահանջներին: ՀՀ ՁՈՒ-ի շինարարության ուղենիշն է «պետության այնպիսի պաշտպանական ներուժի սպահովումը, որն անհրաժեշտ է հետ մղելու որևէ ագրեսիա՝ Հայաս-

տանի Հանրապետության ժողովրդի ֆիզիկական գոյությունը, ինքնիշխանությունն ու անկախությունը, պետության տարածքային ամբողջականությունը պաշտպանելու նպատակով»¹¹:

Անշուշտ, դրան հասնելը շատ բարդ գործ է, հատկապես այն քաղաքական, տնտեսական, աշխարհառազմավարական և ռազմական-ռազմավարական պայմաններում, որոնցում հայտնվել է մեր պետությունը:

Այս տեսանկյունից որպես արդի ռազմական շինարարության հիմնադրույթներ պետք է դիտել՝

–տարածաշրջանում ուժերի հաշվեկշռի պահպանմանը միտված միջազգային հարաբերությունների կառուցումը գործընկերության հիմքի վրա՝ տարածաշրջանում գործող այն բոլոր ուժերի հետ արդյունավետ փոխհարաբերությունների զարգացմամբ, որոնց շահերը չեն հակասում ՀՀ ազգային շահերին,

–ներգրավվածությունը տարածաշրջանային և համաշխարհային ինտեգրման գործընթացներում, քանի որ ՀՀ-ն իրեն դիտում է որպես այն բոլոր դրական տարածաշրջանային ու միջազգային գործընթացների լիիրավ մասնակից, որոնք համահունչ են Հայաստանի հռչակած նպատակներին,

–հավատարմությունը վեճերի խաղաղ լուծման սկզբունքին՝ զինված հարձակման սպառնալիքի առկայության դեպքում այդ սպառնալիքի չեզոքացմանն ուղղված ռազմական գործողություններ վարելու, ներառյալ՝ համապատասխան գործողությունների համար դաշնակիցներին ու գործընկերներին դիմելու իրավունքի վերապահմամբ,

–ռազմական քաղաքականության համապատասխանությունը պետության պաշտպանական և աշխարհաքաղաքական երկարաժամկետ նպատակներին, ինչպես նաև աշխարհում, տարածաշրջանում ու պետությունում տիրող կոնկրետ ռազմաքաղաքական իրավիճակին,

–ռազմաքաղաքական խնդիրների լուծման համար քաղաքական-դիվանագիտական, տնտեսական ու ռազմական միջոցների համադասված օգտագործումը,

–հավանական հակառակորդների ռազմական համակարգերում թույլ ու խոցելի տեղերի, ինչպես նաև նրանց փոխհարաբերություններում հակասությունների հայտնաբերումը և օգտագործումը,

–ռազմաքաղաքական և ռազմավարական խնդիրների լուծումը նվազագույն բարոյաքաղաքական և նյութական ծախսերով,

–առավելագույն թվով դաշնակիցների ձեռքբերումը և պաշտպանողական ու հարձակողական բնույթի խնդիրների լուծման համար նրանց համատեղ ջանքերի միասնականության ապահովումը,

–հավանական հակառակորդների հետևողական մեկուսացումը և թուլացումը,

–զինվորական գործունեության օրենսդրական-իրավական ապահովումը,

¹¹ «ՀՀ ազգային անվտանգության ռազմավարություն», էջ 70:

– ներբանակային հարաբերություններում օրինականության և մարդասիրության ապահովումը:

Դրանք պայմանավորված են, մի կողմից, ժամանակակից պատերազմների բնույթով և ՀՀ-ի համար հնարավոր պատերազմի վերաբերյալ կանխատեսումներով, մյուս կողմից՝ երկրում ստեղծված իրավիճակով, ժողովրդավարացման գործընթացներով և մակարդակով, ռազմական գործում մարդկային գործոնի դերի մեծացմամբ և այլ հանգամանքներով:

Նշված սկզբունքները ռազմական շինարարությունը դարձնում են կարևորագույն պետական խնդիր, որի լուծմանը մասնակցում են պետական կառավարման բոլոր մարմիններն ու պաշտոնատար անձինք:

Պետության պաշտպանության և ՁՈՒ-ի կազմակերպման հիմքերը

ՀՀ պաշտպանության կազմակերպման հիմնական ելակետային պարամետրները տրվում են Մահմանադրության մեջ, միջազգային իրավական փաստաթղթերում, օրենքներում և այլ նորմատիվ իրավական ակտերում ու քաղաքական անվտանգային փաստաթղթերում: Անհրաժեշտ է նաև հաշվի առնել ռազմական վտանգի զարգացման դինամիկան, ապագա պատերազմի բնույթը, ինչպես նաև պաշտպանությանը պետության և նրա ՁՈՒ-ի պատրաստման վրա ազդող գործոնների համախումբը:

Պաշտպանությանը պետության և նրա ՁՈՒ-ի պատրաստումը կատարվում է ինչպես *համապետական մակարդակով*, այնպես էլ *ՁՈՒ-ի ու մյուս գորքերի, ինչպես նաև ՌԱՀ-ի այլ տարրերի* կողմից՝ ըստ փոխհամաձայնեցված պլանների:

Պաշտպանությանը պատրաստման ամբողջ գործընթացը կարելի է բաժանել երկու հիմնական փուլերի¹²:

Առաջին փուլը իրականացվում է խաղաղ ժամանակ՝ պետության ամենօրյա գործունեության ընթացքում: Որպես կանոն, այն ավարտվում է նախքան սպառնալից շրջանի սկիզբը:

Առաջին փուլին բնորոշ առանձնահատկությունն է երկու բաղադրիչների առկայությունը: Առաջին բաղադրիչը կապված է ռազմական շինարարության միջոցառումների կատարման հետ: Այդ միջոցառումների բովանդակությունն ու ծավալը պայմանավորվում են ռազմաքաղաքական և ռազմավարական իրադրության զարգացման դինամիկայով, մշտական ռազմական վտանգի առկայությամբ, ինչը առաջ է բերում պետության ուժային բաղադրամասի անընդմեջ զարգացման անհրաժեշտություն:

Ռազմական շինարարության միջոցառումներին զուգընթաց իրագործվում են փոխպայմանավորված այլ միջոցառումներ, որոնք նպատակաուղղված են պետության քաղաքական, տնտեսական, տեղեկատվական, իրավական, բարոյա-հոգեբանական և այլ ներուժի մեծացմանը և կազմում են պաշտպանությանը

¹² Տես *Ю. А. Мощенко. Подготовка страны и Вооруженных сил к обороне (лекция). М., ВА ГШ, 2007:*

պետության պատրաստման երկրորդ բաղադրիչը: Միջոցառումների այդ խմբի ծավալն ու բովանդակությունը կախված են ինչպես միջազգային ու ներքին իրադրության զարգացման վեկտորի ուղղությունից, այնպես էլ պետության տնտեսական և սոցիալական զարգացման պլաններից ու ծրագրերից:

Ռազմական վտանգի աղբյուրի անձնավորման սկզբից և եթ ճշգրտվում են առաջին փուլի միջոցառումները, հակառակորդի անսպասելի հարձակումը կանխելու կամ հետ մղելու համար պայմաններ ստեղծելու նպատակով պետության պաշտպանական կարողությունները կկենտրոնացվեն առավել սպառնալից ուղղություններում:

Իրադրության նման զարգացումը կարող է նշանակել անցում պաշտպանությանը պետության և նրա ՁՈՒ-ի պատրաստման **երկրորդ (անմիջական) փուլին**:

Երկրորդ փուլի միջոցառումների բովանդակությունը, ծավալն ու ժամկետները կախված են սպառնալից շրջանի տևողությունից: Սպառնալից շրջան չլինելու կամ դրա ծայրահեղ կարճատևության դեպքում (ինչը ներկայումս առավել հավանական է) պաշտպանությանը պետության և նրա ՁՈՒ-ի պատրաստման ամբողջ գործընթացը անցկացվում է մեկ փուլով: Առավել հավանական է, որ պատերազմի սանձազերծման նման անբարենպաստ պայմաններում հարկ կլինի որոշ միջոցառումներ ավարտել ռազմական գործողությունների ընթացքում:

Այսպիսով՝ պաշտպանությանը պատրաստման հիմնական փուլը առաջին՝ պատեհաժամ, փուլն է, որի ընթացքում անհրաժեշտ է պլանավորել և իրականացնել այն բոլոր կարևոր միջոցառումները, որոնք նախատեսվում են ՀՀ համապատասխան օրենքներով, այլ իրավական ակտերով, «Ազգային անվտանգության ռազմավարությունով» և «Ռազմական դոկտրինով», ՁՈՒ-ի պլանային փաստաթղթերով, գերատեսչական ռազմավարություններով և այդ բնագավառի այլ փաստաթղթերով:

Տվյալ փուլում իրագործվում են նաև պլանային հետախուզական միջոցառումները, կատարվում են շրջանների ռազմաաշխարհագրական նկարագրության ճշգրտում, հնարավոր ռազմական գործողությունների, ուղղությունների, գոտիների որոշում, ստեղծվում են զորքերի և ուժերի անհրաժեշտ խմբավորումներ, կատարվում է ՁՈՒ-ի ռազմավարական կիրառման պլանավորման պարբերական ճշգրտում, մշակվում են առաջին ռազմական գործողությունները, կազմակերպվում է զորքերի (ուժերի) և շտաբների օպերատիվ, մարտական, գորահավաքային ու բարոյահոգեբանական նպատակաուղղված պատրաստում, վերջնամշակվում են զորքերի և ուժերի խմբավորումների կիրառման ձևերն ու եղանակները, լուծվում են դրանց փոխգործության խնդիրները, կատարելագործվում են դրանց կառավարման և համակողմանի ապահովման համակարգերը, կազմակերպվում են նպատակային գիտական հետազոտություններ և այլն:

Անմիջական փուլի հիմնական բովանդակությունը սկսված միջոցառումների կոնկրետացումն ու ավարտումն է: Այս փուլում համապետական գործունեության գլխավոր ուղղություններն են՝ հետախուզության արդյունավետության մեծացումը,

պատերազմի պլանի և պատերազմում պետության ՌԱՀ-ի փուլային նպատակների ու գործողությունների ճշգրտումը, ՁՈՒ-ի և տնտեսության մոբիլիզացիոն ծավալումը, այդ թվում՝ պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների գործունեության կազմակերպում ըստ ռազմական դրության աշխատակարգի, ՁՈՒ-ի և մյուս գորքերի փոխադրումը ռազմական ժամանակի կազմակերպվածքի ու կազմի, ինչպես նաև այլ միջոցառումներ՝ ըստ «Ռազմական դրության իրավական ռեժիմի մասին» և «Ջորահավաքային նախապատրաստության և գորահավաքի մասին» ՀՀ օրենքների, ռազմական գործողությունների սանձազերծման դեպքում մարդկային և նյութական կորուստների նվազեցմանն ուղղված միջոցառումների, պետության ենթակառուցվածքների (առաջին հերթին՝ ենթադրվող հակամարտության շրջաններում) պատրաստման տեմպերի արագացումը, ռազմական կառավարման մարմինների ստեղծումը (այդ թվում՝ Նախագահի կողմից պատերազմի ժամանակ ՁՈՒ-ի Գլխավոր հրամանատարի հնարավոր նշանակումը), պաշտպանությանը պետության պատրաստումը կազմակերպված կերպով և պատեհաժամորեն ավարտելու համար բոլոր պետական մարմինների ջանքերի համադասումը, հնարավոր հակամարտության կանխման (տեղայնացման), տարածաշրջանում խաղաղության և անվտանգության պահպանման կամ վերականգնմանն ուղղությամբ ջանքերի ակտիվացումը, ռազմական և այլ օգնության տրամադրման վերաբերյալ միջազգային դաշնակցային պարտավորությունների կատարումը, քաղաքական, տնտեսական, տեղեկատվական և այլ տեսակի հակազդեցության ուժգնացումը, իսկ հարձակման դեպքում՝ զինված պայքարի ծավալումը:

Զինված հարձակման հետմղմանը **ՁՈՒ-ի անմիջական պատրաստման** հիմնական ուղղություններն են՝ պատերազմի առավել հավանական սցենարների, ռազմարշավների հաջորդականության մշակումը, առաջին օպերացիաների (մարտական գործողությունների) վերաբերյալ որոշումների ճշգրտումը, հակառակորդի կողմից պատրաստվող հարձակման մտահղացման պատեհաժամ բացահայտման ապահովումը, ռազմավարական ծավալման (մասնակի կամ լրիվ) իրականացումը, մասնակցությունը հնարավոր ռազմական հարձակման կանխմանն ուղղված պետական միջոցառումներին, պատերազմական ժամանակի համար գորքերի կառավարման և ապահովման համակարգերի ծավալումը:

Տարածքային պաշտպանությունը որպես ՀՀ ՌԱՀ-ի կարևոր պակասող բաղկացուցիչ

Քանի որ չի բացառվում ռազմաճակատի ոչ մեծ հատվածում հակառակորդի կողմից ռազմավարական պաշտպանության հանկարծակի ճեղքման ու հետագա առաջխաղացման, դեսանտային (անբոմբիլային) ուժերի իջեցման և չպաշտպանված ռազմավարական կետերի ու օբյեկտների գրավման, ինչպես նաև կապի համակարգերը շարքից հանելու հնարավորությունը, ապա ՀՀ-ում, Իսրայելի, Դանիայի, Սիբիայի և որոշ այլ պետությունների օրինակով, անհրաժեշտ է մշակել և ներդրել տարածքային պաշտպանության համակարգ:

Տարածքային պաշտպանությունը (ՏՊ) խնդիրներով ու կատարման եղանակներով համաձայնեցված ու փոխկապված այն պետական միջոցառումների համախումբն է, որոնք իրականացվում են պետական սահմանի հատվածների, կարևոր օբյեկտների ու հաղորդակցման ուղիների, բնակչության պաշտպանության, հակառակորդի պլանավորված կամ իրականացվող հետախուզական, դեսանտագրոհային և օդադեսանտային, հատուկ օպերացիաների (գործողությունների) կանխման (ձախողման), նրա դիվերսիոն և գորային խմբավորումների ջախջախման, ինչպես նաև տեղերում ռազմական դրության իրավական ռեժիմի ապահովմանը մասնակցության նպատակով: ՏՊ-ն պետք է իրականացվի տարածքային-գոտիական սկզբունքով և ներառի աշխարհագրի արագ կազմավորվող (տարածքային սկզբունքով) ստորաբաժանումներ, իսկ գլխավոր ուղղություններում՝ ռազմականացված բնակավայրեր: ՏՊ ստորաբաժանումները պետք է օժտված լինեն մարտական գործողություններն ինքնավար կերպով վարելու կարողությամբ և ունենան համապատասխան նյութատեխնիկական ապահովում, առաջին հերթին՝ թեթև զենքի և զինամթերքի անհրաժեշտ պաշարներ, ընդամենը շեշտը պետք է դրվի դյուրակիր հակաօդային և հակատանկային միջոցների վրա: Այդ ստորաբաժանումները պետք է ենթարկվեն ՏՊ տեղական (գոտիական) պետին, իսկ օպերատիվ առումով՝ այն գորամիավորման հրամանատարությանը, որի պատասխանատվության գոտում է գտնվում ստորաբաժանումը: ՏՊ համակարգը պետք է պատրաստ լինի կերպավորվելու պարտիզանական, այդ թվում՝ ցանցային, կազմակերպության:

ՏՊ-ն կազմակերպելիս նպատակահարմար է կիրառել լայն լիազորություններով օժտված աշխարհագրային կրտսեր հրամանատարական (ինչպես սպայական, այնպես էլ սերժանտական) կազմի հատուկ պատրաստման համակարգ, ինչը վերադաս հրամանատարությանը հնարավորություն կտա խնդիրն առաջադրելու ընդհանուր գծերով՝ առանց հետագա անընդհատ վերահսկողության, իսկ կրտսեր հրամանատարական կազմին՝ գործելու ընդհանուր նպատակների և խնդիրների շրջանակներում՝ պահպանելով ճկունություն և օպերատիվություն:

ՏՊ համակարգի ստեղծումը պետք է համապատասխան կերպով ամրագրվի ՀՀ պաշտպանության բնագավառի իրավական կարգավորման համակարգում:

Ամփոփելով նյութը՝ կարող ենք անել հետևյալ **եզրակացությունները**.

1. Յուրաքանչյուր պետություն պետք է նպաստի պատերազմների կանխմանը և վեճերի լուծմանը խաղաղ միջոցներով: Միևնույն ժամանակ, անհրաժեշտ է պատրաստ լինել իր հիմնարար արժեքների պաշտպանությանը զինված ուժի կիրառմամբ:

2. Հայաստանի նպատակն է պաշտպանական բարեփոխումների միջոցով ստեղծել մարտունակ բանակ, որը երաշխավորված կերպով ապահովի ՀՀ և ԼՂՀ ռազմական անվտանգությունը:

3. Պաշտպանությանը պետության և նրա ՁՈՒ-ի պատրաստումը տևական և բազմակողմանի գործընթաց է, որը պահանջում է բոլոր մակարդակների պետա-

կան, այդ թվում՝ ռազմական, կառույցների, տնտեսության և հասարակության համատեղ և համակարգված աշխատանք: Այն կազմակերպվում է իրավական հիմքի վրա՝ ռազմական վտանգի զարգացման ուղղությունների և դինամիկայի, այդ վտանգի՝ ռազմական սպառնալիքի վերաճման հավանականության հաշվառմամբ: Տվյալ գործընթացի էությունը պետության պաշտպանունակության ամրապնդումն է և հավանական հակառակորդի զինված հարձակման հետմղման համար օպտիմալ պայմանների ստեղծումը, այդ թվում՝ տարածքային պաշտպանության արդյունավետ համակարգի ստեղծմամբ:

4. Որպես բանակաշինության հիմնական չափանիշներ ՀՀ-ում ընդունված են հետևյալ ցուցանիշները՝ զորքերի մեծ շարժունակությունը, որը համապատասխանում է պատերազմի վարման ժամանակակից պահանջներին, անձնակազմի օպտիմալ թվաքանակը և բարձր մակարդակի արհեստավարժությունը, ինչպես նաև պատրաստված զորահավաքային ռեզերվի առկայությունը, ՋՌԻ-ի ապահովումը կառավարման, ՀՕՊ-ի, հետախուզության, կապի և գերճշգրիտ կրակային խոցման ժամանակակից համակարգերով ու միջոցներով, անձնակազմի ապահովվածությունը անհրաժեշտ ծավալով համապատասխան պաշարներով:

НЕКОТОРЫЕ ВОПРОСЫ ПОДГОТОВКИ ГОСУДАРСТВА И ЕГО ВООРУЖЕННЫХ СИЛ К ОБОРОНЕ

Ю. Г. ХАЧАТУРОВ, генерал-полковник, начальник ГШ ВС РА

РЕЗЮМЕ

Подготовка государства и его ВС к обороне представляет собой сложный, многогранный и непрерывный процесс организации и выполнения соответствующими государственными и негосударственными структурами системы скоординированных мероприятий по всестороннему обеспечению военной безопасности государства, своевременной и полной подготовке всех его сфер к защите от вооруженного нападения.

Сущность подготовки к обороне состоит в укреплении обороноспособности государства и создании оптимальных условий для отражения вооруженного нападения. В предметно-содержательном аспекте она состоит из мероприятий по военно-стратегическому, экономическому, внешне- и внутривосточному, научно-техническому и другим направлениям подготовки Системы военной безопасности (СВБ), населения и территории государства.

Этот процесс проводится, во-первых, во всех сферах жизнедеятельности государства, а не только в военной. Во-вторых, постоянно — в мирное время, угрожаемый период и даже в ходе военных действий.

Цель подготовки государства и его ВС к обороне заключается в том, чтобы к моменту возникновения непосредственной угрозы войны достигнуть более выгодного положения своего государства по сравнению с

противником, сохранить достигнутый приемлемый уровень соотношения сил в материальной и духовной сферах (соотношение совокупной мощи (потенциалов) сторон) или создать превосходство, которое при разумном его использовании обеспечило бы предотвращение войны или победу в ней.

Задачи по подготовке к обороне могут быть структурированы по трем основным направлениям: нейтрализация военных угроз; осуществление несилевых и силовых операций и действий мирного времени; применение военной силы.

Весь процесс подготовки к обороне можно разделить на два основных этапа.

Первый (заблаговременный, основной) этап проходит в мирное время – в процессе повседневной деятельности государства и, как правило, завершается с началом угрожаемого периода. Второй (непосредственный) этап подготовки к обороне совпадает с течением угрожаемого периода. При отсутствии угрожаемого периода или его крайней непродолжительности (что в современных условиях наиболее вероятно) весь процесс будет проводиться в один этап. В подобных условиях отдельные мероприятия придется завершать уже в ходе военных действий.

С учетом некоторых особенностей РА, объективно возникает задача разработки и внедрения системы территориальной обороны (по территориально-зональному принципу) в качестве компонента СВБ (по примеру Израиля, Дании, Сирии и др.) в целях защиты участков государственной границы, важных объектов и коммуникаций, населения, предотвращения (срыва) планируемых или осуществляемых противником разведывательных, десантно-штурмовых и воздушно-десантных, специальных операций (действий), разгрома (ликвидации) его диверсионных и войсковых группировок, а также участия в обеспечении поддержания правового режима военного положения на местах.

SOME ISSUES OF THE STATE'S AND ITS ARMED FORCES' PREPARATION FOR DEFENSE

*Yu. G. KHACHATOUROV, Colonel General,
Chief of the Main Staff of the RA Armed Forces*

SUMMARY

The preparation of the state and its Armed Forces for defense is a complex, multifaceted and continuous process of organization and implementation of the system of coordinated measures by corresponding state and private structures. These measures include comprehensive ensuring of the state's military security, opportune and full preparation of all its spheres for protection from an armed attack.

The essence of preparation for defense is to strengthen the state's defense capability and create optimal conditions for repulsing an armed attack. In the

substantial aspect it consists of measures on military-strategic, economic, external and internal political, scientific-technical and other directions of preparation of the state's Military Security System (MSS), population and territory.

This process is conducted, first, in all the spheres of the state's vital activity, and not only in the military one. Second, it is conducted continually – in peace time, threat period and even in the course of military operations.

The goal of the state's and its Armed Forces' preparation for defense by the moment of emerging a direct threat of war is to attain more advantageous situation for its state compared to an opponent, keep the attained acceptable level of the correlation of forces in material and spiritual spheres (correlation of the combined power (potentials) of parties) or create superiority which would ensure war prevention or victory in it when applied reasonably.

The tasks on preparation for defense can be structured in three basic directions: neutralization of military threats; conduct of non-enforcement and enforcement operations and actions of peace time; use of military force.

The whole process of preparation for defense can be divided into two basic stages.

The first (timely, basic) stage passes in peace time – in the process of the state's day-to-day activity and, as a rule, ends with the beginning of the threat period. The second (immediate) stage of preparation for defense coincides with the course of the threat period. The whole process will be conducted in one stage in the absence of the threat period or its utter short duration (which in contemporary conditions is more probable). In the given conditions separate measures will have to be finished already in the course of military operations.

Taking into account some peculiarities of the RA, there objectively arises a task of elaborating and introducing the system of territorial defense (on the territorial-zonal principle) as a component of the MSS (by the example of Israel, Denmark, Syria, etc.) to protect sections of the state border, important objects and communications, population, to prevent (break) the intelligence, landing assault and airborne, special operations (actions) being planned or implemented by an opponent, to defeat (liquidate) his raiding and army groupings, as well as to participate in ensuring the maintenance of legal regime of the martial law at places.

ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐԻՑ ԵՎ ՊԱՏԵՐԱԶՄԻ
ՀԵՏԵՎԱՆՔՆԵՐԻՑ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ
ՀԱՄԱԿԱՐԳԻ ԿԱՏԱՐԵԼԱԳՈՐԾՈՒՄԸ

*Մ. Լ. ՇԱՀԳԵԼԳՅԱՆ, ՀՀ արտակարգ իրավիճակների նախարար,
ՀՀ ԱԱՌ-ի մշակման միջգերատեսչական հանձնաժողովի անդամ-փորձագետ,
քաղաքական գիտությունների թեկնածու*



Արտակարգ իրավիճակներից և պատերազմի հետևանքներից բնակչության պաշտպանության արդյունավետ իրականացումը ազգային և ռազմական անվտանգության հիմնական երաշխիքներից է:

Պաշտպանական բարեփոխումների շրջանակներում մշակված և ՀՀ Նախագահի 2007 թ. դեկտեմբերի 25-ի հմ. ՆՀ-308-Ն հրամանագրով հաստատված «Հայաստանի Հանրապետության ռազմական դոկտրինը» ձևավորում է միասնական ռազմավարական հենք, որը հնարավորություն է ընձեռում պատերազմի,

արտակարգ իրավիճակների և խաղաղ ժամանակ ազգային պաշտպանական կառույցի կառուցվածքը, ենթակառուցվածքները և կառավարման համակարգը որոշելու համար: Դրան համապատասխան մշակվում և իրականացվում են արտակարգ իրավիճակներից ու պատերազմի հետևանքներից բնակչության պաշտպանության բնագավառում համալիր քաղաքականությունը, ինչպես նաև փրկարարական համակարգի զարգացման ու արդիականացման ռազմավարական ծրագրերը, ինչը հույժ կարևոր և արդիական է Հայաստանի Հանրապետության համար:

Նշված բնագավառի ռազմավարական կառավարման տեսանկյունից առաջնային է հետևյալ նպատակների իրականացումը՝

1. բնածին և տեխնածին աղետների կանխատեսում և կանխարգելում,
2. արձագանքում, այն է՝ արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության, քաղաքացիական պաշտպանության միջոցառումների և փրկարարական աշխատանքների կազմակերպում,
3. առաջնահերթ վթարավերականգնողական և հետևանքների վերացման աշխատանքների կազմակերպում:

1. *Բնածին և տեխնածին աղետների կանխատեսման ու կանխարգելման* ուղղություններով նախատեսվում է իրականացնել՝

— ռիսկերի գնահատման տեղեկատվական համակարգերի մշակում և ներդրում՝ նորագույն տեխնոլոգիաների օգտագործմամբ,

— կառավարման մարմինների և բնակչության ազդարարման ու կապի ժամանակակից համակարգերի հիմնում,

— տարաբնույթ տարերային աղետների կանխատեսման և կանխարգելման ժամանակակից, գործուն համակարգի ձևավորում, ճգնաժամային կառավարման կենտրոնի ստեղծում,

— բնակչության պաշտպանության բնագավառում իրագրված ժամանակակից համակարգի ստեղծում ու զարգացում,

— սեյսմիկ պաշտպանության ազգային ծառայության համակարգի բարեփոխում, սեյսմիկ անվտանգության մակարդակի բարձրացում, գիտական հայտնագործությունների ներդրում,

— հիդրոոդերևութաբանական ուսումնասիրությունների մշտազննման (մոնիտորինգի) և մթնոլորտային երևույթների վրա ակտիվ ներգործության եռամիասնական համալիրի ձևավորում և պարբերական կատարելագործում,

— արտակարգ իրավիճակների և քաղաքացիական պաշտպանության տեսչության ձևավորում,

— տեխնիկական անվտանգության ծառայության օրենսդրական, մեթոդաբանական և տեխնիկատեխնոլոգիական բազայի կատարելագործում:

2. Արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության և քաղաքացիական պաշտպանության միջոցառումների, փրկարարական աշխատանքների կազմակերպման և իրականացման ուղղություններով նախատեսվում է՝

— փրկարարական, հրշեջ, հրշեջ-փրկարարական, ջրափրկարարական և այլ ուժերի վերազինում նորագույն հատուկ տեխնիկայով, սարքավորանքով, հանդերձանքով ու այլ միջոցներով,

— արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության և քաղաքացիական պաշտպանության բնագավառներում միջազգային համագործակցության զարգացում,

— մարդուն հրատապ օգնության համապետական համակարգի ստեղծում (Եվրոպական 112 համակարգի օրինակով),

— խաղաղ, խաղաղից ռազմական դրության անցման և ռազմական դրության իրավական ռեժիմի պայմաններում քաղաքացիական պաշտպանության միջոցառումների անցկացման նպատակով պետության նախապատրաստում, ներառյալ՝ ՀՀ տարածքում կառավարման, կապի և ազդարարման միասնական ու կայուն համակարգի ստեղծումը, քաղաքացիական պաշտպանության գործող պլանների մշակումը, համաձայնեցումը և հաստատումը,

— բնակչությանը պաշտպանական կառույցներով ապահովելու նպատակով՝ ա) Հայաստանի ատոմային էլեկտրակայանի (ՀԱԷԿ) նախահարձակ պաշտպանական միջոցառումների իրականացման և շտապ պաշտպանական միջոցառումների պլանավորման գոտիներում կառուցված հակաճառագայթային թաքստոցների պահպանում և նորերի նախատեսում,

բ) Երևանի և հանրապետության մի շարք այլ քաղաքների կենսագործունեությունն ապահովող ու պատերազմի ժամանակ իրենց գործունեությունը շարունակելու

նակող կազմակերպությունների աշխատողներին պատասխարելու նպատակով կառուցված ապաստարանների պահպանում և նորերի նախատեսում,

զ) բնակչության պատասխարման համար մյուս պաշտպանական կառույցների՝ նկուղների, կիսանկուղների, խորացված տարածքների, հանքախորշերի, ստորգետնյա անցումների և մետրոպոլիտենի նախապատրաստում ու բնակչության ամրագրում.

— պահեստային կառավարման կետերի ստեղծման և պահպանման նպատակով՝ ՀՀ Կառավարության 2001 թ. հոկտեմբերի 24-ի հմ. 1020-ԿԳ, 2001 թ. ապրիլի 11-ի հմ. 282-ԿԳ և 1998 թ. սեպտեմբերի 8-ի հմ. 563-ԿԳ որոշման պահանջների կատարման ապահովում,

— բնակչության անհատական պաշտպանության միջոցներով ապահովելու նպատակով՝

ա) սահմանամերձ գոտու, ՀԱԷԿ-ի նախահարձակ պաշտպանական միջոցառումների իրականացման և շտապ պաշտպանական միջոցառումների պլանավորման գոտիների բնակավայրերի բնակչության, փրկարար ուժերի և քաղաքացիական պաշտպանության կազմավորումների անձնակազմների համար անհրաժեշտ անհատական պաշտպանության միջոցների առաջնահերթ ձեռքբերում և պարբերական քարմացում,

բ) հանրապետության տարածքում գործող վտանգավոր օբյեկտների կողմից իրենց հաշվին, օբյեկտի վտանգավոր ազդեցության գոտում գտնվող բնակչության և կազմակերպությունների անձնակազմի անհատական պաշտպանության միջոցներով ապահովման համար օրենսդրական դաշտի ստեղծում,

— տարահանվող բնակչության կենսապահովման նպատակով պետպահուստի ստեղծում,

— քաղաքացիական պաշտպանության ուժերի ստեղծում և հազեցում:

3. *Պատերազմի հետևանքների, բնածին և տեխնածին աղետների պատճառով առաջացած իրավիճակներում առաջնային վթարավերականգնողական աշխատանքների իրականացման ուղղությամբ նախատեսվում է՝*

— ռազմական գործողությունների և աղետների հետևանքով վնասված ու ոչնչացված ենթակառուցվածքների վերականգնման հանրային աշխատանքների համակարգի ձևավորում,

— տուժած բնակավայրերի բնակիչների՝ վերականգնողական աշխատանքներում պաշտոնական ներգրավման կազմակերպում,

— աղետների հետևանքների առաջնային վերացում և ապահովագրական համակարգերի ներդրում,

— պետական ռեզերվների ընդլայնում, պահեստային ենթակառուցվածքների բարելավում:

СОВЕРШЕНСТВОВАНИЕ СИСТЕМЫ ЗАЩИТЫ НАСЕЛЕНИЯ ОТ ЧРЕЗВЫЧАЙНЫХ СИТУАЦИЙ И ПОСЛЕДСТВИЙ ВОЙНЫ

*М. А. ШАХГЕЛЬДЯН, Министр по чрезвычайным ситуациям РА, член-эксперт
Межведомственной комиссии по разработке СНБ РА, кандидат политических наук*

РЕЗЮМЕ

Защита населения от последствий чрезвычайных ситуаций и войны является одной из гарантий национальной и военной безопасности.

«Военная доктрина Республики Армения» формирует единую стратегическую базу для определения структуры, инфраструктур и системы управления национальной оборонной системой в мирное и военное время, а также при чрезвычайных ситуациях. В соответствии с этим должны разрабатываться и осуществляться комплексная политика, а также стратегические программы развития и модернизации спасательной системы.

В рамках реализации основных целей стратегического управления указанной областью—прогнозирования и профилактики природных и техногенных катастроф, организации защиты населения и спасательных работ, мероприятий гражданской обороны, а также первоочередных аварийно-спасательных работ—предусматривается совершенствование соответствующих систем, технологий, программ и средств, а также осуществление необходимых преобразований в организационной и правовой сферах.

THE IMPROVEMENT OF THE SYSTEM OF THE POPULATION PROTECTION FROM EMERGENCY SITUATIONS AND WAR AFTERMATH

*M. L. SHAHGELDYAN, Minister of Emergency Situations of the RA, Member Expert
of the Interagency Commission on elaborating the NSS, RA, Candidate of Political Sciences*

SUMMARY

The population protection from the aftermath of emergency situations and war is one of the guarantees of national and military security.

«The Military Doctrine of the Republic of Armenia» forms a common strategic base for determining the structure, infrastructures and system of managing the national defense system in peace and war time, as well as in emergency situations. In accordance with that a complex policy, as well as strategic programs of the rescue system development and modernization must be elaborated and implemented.

The improvement of corresponding systems, technologies, programs and means, as well as the implementation of necessary transformations in organization and legal spheres are envisaged within the framework of realizing the main goals of strategic management of the mentioned field—forecasting and prophylactic measures of natural and technogenic disasters, organizing the population protection and salvage operations, measures of civil defense, as well as primary emergency rescue operations.

ՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ
ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ՀԱՐՑԻ ՇՈՒՐՁ՝
ԻՍՐԱՅԵԼԻ ՕՐԻՆԱԿՈՎ

Հ. Ս. ԶՈԹԱՆՉՅԱՆ, գեներալ-մայոր, քաղաքական գիտությունների դոկտոր
(ՌԳ), Ռուսաստանի Ռազմական գիտությունների ակադեմիայի
խակական անդամ, հակահարձակության գծով փորձագետ գիտնական (ԱՄՆ),
ՀԱՊԿ-ի գիտափորձաքննական խորհրդի անդամ, ՀՀ ՊՆ ԱՌՀԻ-ի պետ



Պաշտպանությանը պետության պատ-
րաստման առանցքային ուղղություննե-
րից է տարածքային պաշտպանության
(ինքնապաշտպանության) կազմակեր-
պումը: Այն առավել մեծ կարևորություն
ունի փոքր տարածքով պետություննե-
րի համար, որոնք համապատասխա-
նաբար չունեն ռազմաճակատի խորու-
թյուն և ռազմավարական քիկունք:
Տարածքային պաշտպանության ստո-
րաբաժանումները, որոնք կազմավոր-

վում են տարածքային-գոտիական սկզբունքով, նախանշանակվում են հակառա-
կորդի՝ ռազմաճակատը ճեղքած ուժերի առաջխաղացումը կասեցնելու կամ
դրանք ջախջախելու, նրա դեսանտային (դիվերսիոն) խմբերը վնասագերծելու
համար: Այդ ստորաբաժանումները պետք է պատրաստ լինեն տվյալ տարածքի
բռնագավթման դեպքում կերպավորվելու անհամաչափ զինված պայքարի
մեթոդների կիրառմամբ պարտիզանական դիմադրության, այդ թվում՝ հակազ-
դեցության մարտական սուրյեկտների ցանցային, համակարգի, որում օպերա-
ցիաների անմիջական կատարողներն օժտվում են ինքնուրույն որոշումներ կա-
յացնելու և գործելու հատուկ լիազորություններով: Հավանական հակառակորդի
հնարավոր հարձակման գլխավոր ուղղություններում տարածքային պաշտպա-
նությունն իրականացվում է ռազմականացված բնակավայրերի ձևով:

Ժամանակակից հրեական պետության տարածքային ինքնապաշտպանության
ավանդույթներն սկսել են ձևավորվել 1942 թ., երբ Պաղեստինի տարածքում
գտնվող արաբական և հրեական բնակավայրերի շփման գծի երկայնքով տեղա-
բաշխված հրեական կոլեկտիվ գյուղատնտեսական բնակավայր-կոմունաներին՝
կիբուցներին*, կցվեցին «Պալմախ»** հարվածային ջոկատները:

* Կիբուց (*Kibbutz*)՝ Բնակավայրերի տարածքներում Իսրայելի հրեաների գյուղատնտեսական-
արտադրական կոոպերատիվ միավորումներ, որտեղ մարդիկ համատեղ աշխատում են, որոշումներ
ընդունում, բաշխում եկամուտները և զբաղված են պատրաստմամբ ինքնապաշտպանությանը:

** Պալմախ («*Palmach*») Իսրայելի Պետության Պաշտպանության բանակի հիմք դարձած ընդ-
հատակյա «Հագանահ» Պաշտպանության բանակի հատուկ նախանշանակման հարվածային

«Դատաստանի օրվա» պատերազմից («Յոն-Կիպուր», 1973 թ.) քաղած դասերի հաշվառմամբ՝ պաշտպանության խորություն չունենալու, թշնամական պետություններով շրջապատված լինելու պայմաններում, Իսրայելում 1970-ական թվականների երկրորդ կեսին ձեռնամուխ եղան պաղեստինյան արաբների և հրեաների բնակության դասավորության փոփոխման ռազմավարական պլանի մշակմանն ու իրականացմանը: Այդ պլանով նախատեսվում էր որպես տարածքային պաշտպանության համակարգի ամրապնդման ռազմավարական ռեսուրս ստեղծել նոր հրեական բնակավայրեր, ինչը նպատակաուղղված էր հրեա և արաբ բնակչության շփման գծի պաշտպանությանը ինչպես պետական սահմանի, այդ թվում՝ ծովեզրի, գոտում, այնպես էլ երկրի ներսում, ներառյալ՝ Իսրայելի ազգային անվտանգության համար առանձնակի կարևորություն ներկայացնող հաղորդակցման ենթակառուցվածքներն ու այլ օբյեկտներ:

Հրեական բնակավայրերի ծավալման նոր ռազմավարությունը՝ որպես Իսրայելի տարածքային պաշտպանության ամրապնդման միջոց, հետևողականորեն կյանքի է կոչվել 1977 թ., երբ պաշտոնաթող գեներալ Արիել Շարոնը¹, որը Իսրայելում ծավալված բնակեցման նոր շարժման գաղափարախոսն էր, Մենահիմ Բեգինի կառավարությունում ստանձնեց գյուղատնտեսության նախարարի պաշտոնը: Գյուղատնտեսության, ապա՝ պաշտպանության նախարարի պաշտոններում գեներալ Ա. Շարոնի հաջորդաբար գտնվելու շրջանում նրա ղեկավարությամբ մշակվել և ձևավորվել է Իսրայելի տարածքային պաշտպանությունն արմատապես ամրապնդած հրեական պաշտպանական-աշխատանքային բնակավայրերի ու մարտական պահակակետերի՝ նոր դասավորությամբ տեղակայման գործում հայրենասիրությամբ տոգորված հրեա բնակչության և ՅԱՀԱԼ* -ի փոխգործության արդյունավետ համակարգը:

չոկատները (տես «Первый командующий». В кн.: В. Фроммер. Реальность мифов. Иерусалим, Гешарим, 5762 г. — «Мосты Культуры». М., 2003, сс. 48 — 62):

¹ ««Դատաստանի օրվա» պատերազմի (1973 թ. հոկտեմբեր) առաջին իսկ ժամերին Շարոնը գլխավորեց ռեզերվիստների զրահատանկային դիվիզիան: Ծանր պաշտպանողական մարտերից հետո, որոնք ըստ էության կանխեցին ամբողջ Հարավային ռազմաճակատի քայքայումը, Շարոնի դիվիզիան անցավ հակահարձակման, որին ոչ ոք չէր սպասում, նույնիսկ արաբների ուխտադրուժ հարձակումից շփոթված Դայանը: Արիկի տանկերը մարտանցեցին Սուեզի ջրանցքը, ոչնչացրին հրթիռային մարտկոցները, շրջապատեցին եգիպտական բանակները Սինայում և դուրս եկան Կահիրեի մատույցներ: Իսրայելը փրկված էր, Արիկը ճանապարհ հարթեց դեպի խաղաղություն: 1978 թ. նախագահ Անվար Սադատը պատմական այցով ժամանեց Իսրայել: «Դիմավորողների մեջ կա՞ արդյոք Արիել Շարոնը», հարցրեց նա՝ իջնելով օդանավասանորդքով: Երբ Արիկը մոտեցավ նախագահին, Սադատը սեղմեց նրա ձեռքը և ասաց. «Դո՛ւք, գեներալ Շարոն, մեզ համար զինվորական սխրանքի մարմնավորում եք»» (տես *Давид Шехтер. Надежда Израиля. Ариэль Шарон. В кн.: «Рядом с премьер-министрами», Иерусалим, Гешарим, 5762 г. — «Мосты Культуры», М., 2001, с. 324):*

* ՅԱՀԱԼ (*TSahal — Tsva Haganah Le-Israel (הגנה)*)՝ Իսրայելի Պետության Պաշտպանության բանակ:

Իսրայելի տարածքային պաշտպանության համակարգի բարեփոխման ծրագրի հաջողությանը նպաստել են հետևյալ գործոնները.

– 1977 թ. իշխանության եկած «Լիկուդ» կուսակցության ծրագրում ազգային անվտանգության շահերի գերակայության արձանագրումը,

– բնակության տարածքների դասավորության բարեփոխման՝ որպես տարածքային պաշտպանության ամրապնդման հանգուցային գործոնի ռազմավարական



Պաշտպանության նախարար Արիել Շարոնը ԱՄՆ-ի պաշտպանության քարտուղար

Կասպար Վայնբերգերին ներկայացնում է Կալկիլիայի արևելքում՝

Սամարիայի մերձափնյա հարթավայրում, կառուցվելիք բնակավայրի պլանը (1982 թ. սեպտեմբեր)

Министр Обороны Ариэль Шарон представляет Секретарю по обороне США

Каспару Вайнбергеру план поселения на востоке Калькилии –

на прибрежной равнине Самарии (сентябрь 1982 г.)

(«WARRIOR. THE AUTOBIOGRAPHY OF ARIEL SHARON» գրքից)

նշանակությունն ըմբռնող պետական գործչի՝ զեներալ Ա. Շարոնի նպատակա-
յին նշանակումը գյուղատնտեսության նախարարի պաշտոնին²,

– տարածքային պաշտպանության բարեփոխման տվյալ ծրագրի իրականացման գործում Իսրայելի անպարտելիության գաղափարին մոլեռանդորեն նվիրված երիտասարդ հրեա հայրենասերների «Գուշ Էմունիմ» («GUSH EMUNIM³»՝ «Գաղափարով համակվածների միություն») կազմակերպության ներգրավումը,

– գյուղատնտեսության նախարարության և ՅԱՀԱԼ-ի փոխգործությունն ըստ Իսրայելի Պետության պաշտպանության ռազմավարական առումով կարևոր

² Տես «Settling the Territories», in: «WARRIOR. THE AUTOBIOGRAPHY OF ARIEL SHARON», by Ariel Sharon with David Chanoff. NY, 2005, PP. 355–372:

³ Տես նույն տեղում, էջ 361:

ուղղություններում նոր բնակավայր-կիրուցների կառուցման, բարեկարգման ու բնակեցման պլանների:

Սույն ակնարկում չի դրվում տարածքային պաշտպանության իսրայելական համակարգի մանրամասների վերլուծության խնդիր: Մինևույն ժամանակ, մենք կարևոր ենք համարում Իսրայելի տարածքային պաշտպանության համակարգի ձևավորման, գյուղատնտեսության և պաշտպանության նախարարությունների ռազմավարական փոխգործության կշռադատված պետական քաղաքականության շնորհիվ մշակված և իրականացված տվյալ ծրագրի էությունը ներկայացնել այն մարդկանց ուշադրությանը, որոնք պատասխանատու են ՀՀ և ԼՂՀ արդյունավետ պաշտպանության ապահովման համար:

Եվ այսպես. Իսրայելի իշխանությունների փորձի էությունն այն է, որ վճռվեց տարածքային պաշտպանության համակարգը կատարելագործել Պաղեստինի հատուկ հատկացված հողատարածքներում նոր դասավորությամբ հրեական բնակավայրերի հիմնադրման միջոցով՝ գյուղատնտեսության ու պաշտպանության նախարարություններին համապատասխան ռեսուրսների տրամադրմամբ:

Գեներալ Արիել Շարոնի պլանների համաձայն՝ գյուղատնտեսության և պաշտպանության նախարար նրա եղած ժամանակ նոր բնակավայրերի ստեղծումը կատարվել է երկու փոխկապված ծրագրերի զուգահեռ իրագործմամբ.

1) *վարչաիրավական և սոցիալ-տնտեսական* (նորաբնակների սոցիալական պաշտպանության նպատակաուղղված արտոնությունների համար իրավական հիմքերի ստեղծում, բնակավայրերի ինքնակառավարման մարմինների ձևավորում, ֆինանսական և նյութական ռեսուրսների հատկացում) և *բարոյահոգեբանական* (մոլեռանդ հայրենասերների շրջանից նորաբնակների կազմի հավաքագրում, ինչպես նաև նրանց սոցիալական և հոգեբանական շարժառիթավորում),

2) *պաշտպանական-կազմակերպական* (ՆԱՀԱԼ-ի* ստորաբաժանումները ապագա բնակավայրի տեղում դաշտային ռազմաշինարարական ճամբար էին դնում և օրվա նախատեսված ժամանակահատվածում զբաղվում էին պաշտպանությանը մարտական պատրաստմամբ և ռազմաշինարարական գործունեությամբ. օբյեկտի հանձնման պլանային ժամկետներում ամենօրյա մարտական պատրաստումն ավարտելուց հետո ՆԱՀԱԼ-ի մարտիկները, զինված շինարարական տեխնիկայով և շինանյութերով, ռազմական ինժեներների ղեկավարությամբ կառուցում էին բնակավայրի համալիրը և լրիվ պատրաստ վիճակում շահագործման էին հանձնում ապագա կիրուցի ինքնակառավարման մարմիններին):

Հարկ է շեշտել, որ այդ ծրագրերի հաջողությունն զգալի չափով պայմանավորված

* Ռուսալեզու և հայալեզու գրականության մեջ հանդիպում է նաև «ՆՌՀԱԼ» ձևը (օրինակ՝ «Зарубежное военное обозрение», 2001, № 5 – 6; Հ. Ս. Քոթանջյան, Իսրայելի պաշտպանության բանակում զինվորի մարտական ոգու ձևավորման փորձի մասին՝ ՀՀ պաշտպանական բարեփոխումների լույսի ներքո: «ՀԲ», 2009, հմ. 1 – 2, և այլն):

էր այն հանգամանքով, որ Իսրայելի Պաշտպանության բանակի ՆԱՀԱԼ⁴ հատուկ բրիգադի ստորաբաժանումները համալրվում էին առավելապես «Գուշ Էմունիմ» հայրենասիրական կազմակերպության երիտասարդ անդամներով, որոնք անվերապահորեն նվիրված էին ցանկացած ապագա պատերազմում կամ թշնամու հետ տեղային զինված բախումներում Իսրայելի Պետության անպարտելիության ապահովման գաղափարին: Կարևոր է նշել, որ ՆԱՀԱԼ-ի մարտիկների մի զգալի մասը Պաշտպանության բանակից զորացրվելուց հետո դառնում էր իր իսկ կառուցած կիբուցի ակտիվ անդամ: Իսրայելի իշխանությունները հատուկ ուշադրություն էին դարձնում նոր կիբուցների բնակեցման համար սոցիալական, տնտեսական ու ֆինանսական նախադրյալների ստեղծմանը:

Իսրայելի Պաշտպանության բանակի ՆԱՀԱԼ բրիգադի ակունքների մոտ կանգնած է եղել Իսրայելի Պետության հիմնադիր Դավիդ Բեն-Գուրիոնը: Նրա գաղափարը մարմնավորվել էր այդ բացառիկ զորամիավորման մեջ՝ բաղկացած զինվոր-շինարար-գյուղացիներից, որոնք իրականացնում էին տարածքային պաշտպանությունն ու միաժամանակ յուրացնում էին խոպան հողերը: Բեն-Գուրիոնը համարում էր, որ սահմանների պաշտպանության ոչ մի զուտ ռազմական մոտեցում իր արդյունավետությամբ չէր կարող համեմատվել հայրենասեր զինվոր-շինարար-գյուղացիների կառուցած հրեական գյուղերի համակարգի հետ, որոնք գործում են որպես տարածքային ինքնապաշտպանության կազմակերպություններ:

ՆԱՀԱԼ-ը երբայերեն *Noar Halutzi Lohem* («Պայքարող պիոներական երիտասարդություն») բառերի հապավումն է: Ստեղծված լինելով 1948 թ.՝ այդ կազմակերպությունն զբաղվել է Պաշտպանության բանակում կամավոր ծառայությանը նախազորակոչային տարիքի երիտասարդության պատրաստմամբ՝ նպատակ ունենալով Իսրայելի չյուրացված տարածքներում ստեղծել գյուղատնտեսական ռազմականացված բնակավայրեր ահաբեկիչների հարձակումները հետ մղելու համար: Ինչպես վերը նշվեց, 1973 թ. «Դատաստանի օրվա» պատերազմից⁵ հետո Իսրայելի Պետության ազգային անվտանգության գերակայություններից մեկը դարձավ տարածքային պաշտպանության ամրապնդումը նոր հրեական բնակավայրեր կառուցելու և դրանք հայրենասեր բնակչությամբ, առաջին հերթին երիտասարդներով բնակեցնելու միջոցով՝ նրանց ապահովելով զենքով ու զինամթերքով և պատրաստելով պաշտպանողական մարտական գործողությունների վարմանը:

⁴ ՆԱՀԱԼ-ի հիմքի վրա 1982 թ. կազմավորված նույնանուն հետևակային բրիգադը համարվում է իսրայելական բանակի ամենամարտունակ զորամասերից մեկը: Այն նախկինի պես համալրվում է միայն հայրենասեր կամավորներով: Չորակոչը ՆԱՀԱԼ, ինչպես և Իսրայելի բանակի բոլոր մարտական զորամասեր, կատարվում է մրցության կարգով՝ հավանական թեկնածուների թիվը, որպես կանոն, գերազանցում է նորակոչիկներ ընդունելու բրիգադի իրական հաստիքային հնարավորությունները (տես «Еврейская Виртуальная Библиотека («Jewish Virtual Library»)» (http://www.Jewishvirtuallibrary.org/source/Society_&_Culture?nahal.html)):

⁵ Տես «The Yom Kippur War (1973)», in: «Story of my life», by Moshe Dayan. 1976, PP. 463—547:

Նկատի ունենալով այն ոչ միարժեք տպավորությունները, որ ստացել են Քաշաթաղի շրջան կատարած այցելությանն ժամանակ, նպատակահարմար են համարում, որ պաշտպանությանը ՀՀ և ԼՂՀ պատրաստումը մշակող գերատեսչություններն ու մասնագետները ուսումնասիրեն Իսրայելի ՑԱՀԱԼ-ի և գյուղատնտեսության նախարարության համագործակցության այն փորձը, որը նրանք ձեռք են բերել պաշտպանական-աշխատանքային բնակավայրերի լավ մտածված և արդյունավետ կերպով գործող համակարգի համատեղ ստեղծման ժամանակ:

Հարկ են համարում որպես եզրափակիչ դիտողություն նշել, որ Իսրայելում տարածքային պաշտպանության կազմակերպումն իրականացնում էին իրենց հայրենասիրությունը գործով ապացուցած պրոֆեսիոնալներ, որոնց շնորհիվ բացառվում էր պետության հատկացրած ռեսուրսների, այդ թվում՝ ի հաշիվ Հրեական սփյուռքից ստացվող հանգանակությունների, նկատմամբ որևէ կոռուպցիոն ոտընձգություն:

Եվ, վերջապես, տարածքային պաշտպանության կազմակերպման գործում հրեա ժողովրդի ձեռք բերած հաջողության առավել լայն՝ անվտանգային-ռազմավարական, հիմքի իմաստավորման համար տեղին է մեջբերել գեներալ և պետական գործիչ Արիել Շարոնի այն խոսքը, թե Էրեց-Իսրայելի* ազգային անվտանգության հարցերում «առկա է Իսրայելի և Սփյուռքի հրեաների փոխադարձ պատասխանատվությունը: Իսրայելը, ինչպես ես հաստատում եմ տանը և արտասահմանյան ուղևորությունների ժամանակ, իսրայելական նախագիծն չէ: Դա համաշխարհային Հրեության նախագիծն է»⁶:

* «Eretz Israel» – «Իսրայելի երկիր»:

⁶ «Epilogue», in: «WARRIOR. THE AUTOBIOGRAPHY OF ARIEL SHARON», P. 541.

О ПРОБЛЕМЕ ОРГАНИЗАЦИИ ТЕРРИТОРИАЛЬНОЙ ОБОРОНЫ ГОСУДАРСТВА НА ПРИМЕРЕ ИЗРАИЛЯ

*Г. С. КОТАНДЖЯН, генерал-майор, доктор политических наук (РФ),
Действительный член Российской Академии военных наук,
ученый-эксперт по контртерроризму (США),
член Научно-экспертного совета ОДКБ, начальник ИНСИ МО РА*

РЕЗЮМЕ*

Традиции территориальной самообороны современного еврейского государства восходят ко временам укрепления в 1942 г. к кибуцам — еврейским коллективным сельскохозяйственным поселениям-коммунам — ударных отрядов «Пальмах» по линии соприкосновения арабских и еврейских поселений на территории Палестины.

* Полный русский текст статьи см. http://www.mil.am/arm/hb/O_probleme%20organizacii%20TO.pdf.

С учетом уроков, вынесенных из войны «Судного дня» («Йом-Кипур», 1973 г.) при отсутствии глубины обороны, в условиях окружения враждебными государствами в Израиле во второй половине 1970-х годов приступили к разработке и осуществлению стратегического плана изменения конфигурации расселения арабов и евреев. План предполагал создание новых еврейских поселений как стратегического ресурса укрепления системы территориальной обороны, нацеленного на защиту линии соприкосновения еврейского и арабского населения как в зоне государственной границы, в том числе морского побережья, так и внутри страны, включая коммуникационные инфраструктуры и другие объекты, представляющие для национальной безопасности Израиля особую важность.

Новая стратегия получила последовательное воплощение в жизнь после назначения в 1977 г. ушедшего в отставку генерала Ариэля Шарона Министром сельского хозяйства. Шарон являлся идеологом нового поселенческого движения в Израиле. В период нахождения генерала Шарона в должностях Министра сельского хозяйства, а затем Министра Обороны под его руководством была разработана и осуществлена эффективная система взаимодействия патриотически настроенного еврейского населения и Армии Обороны ЦАХАЛ при создании новой конфигурации расположения еврейских оборонно-трудовых поселений и боевых постов.

Успеху программы реформирования системы территориальной обороны Израиля способствовали следующие факторы:

- программные приоритеты национальной безопасности партии «Ликуд», пришедшей в 1977 году к власти;
- целевое выдвижение Министром сельского хозяйства и далее Министром Обороны генерала А. Шарона – государственного деятеля, понимающего стратегическое значение реформирования конфигурации территорий расселения как ключевого фактора укрепления территориальной обороны;
- подключение к реализации данной программы реформирования территориальной обороны организации фанатически преданных идее непобедимости Израиля молодых еврейских патриотов «Гуш Эмуним» («GUSH EMUNIM» – «Союз Одержимых Идеей»);
- взаимодействие Министерства сельского хозяйства и ЦАХАЛ-а в соответствии с планами строительства, обустройства и заселения новых поселений-кибуцев на стратегически важных направлениях обороны Государства Израиль.

Формирование новых поселений согласно планам Шарона осуществлялось путем параллельной реализации двух взаимосвязанных программ:

1) *административно-правовой и социально-экономической* (создание правовой базы привилегий для социальной защиты поселенцев, формирование органов самоуправления поселений, выделение финансовых и материальных ресурсов) и *морально-психологической* (мобилизация контингента поселенцев из патриотов-фанатиков, а также их социальная и психологическая мотивация);

2) *оборонительно-организационной* (подразделения НАХАЛЬ-а разбивали на месте будущего поселения полевой военно-строительный лагерь и в течение отведенной по плану части дня занимались боевой подготовкой к обороне и военно-строительной – после завершения ежедневной боевой подготовки в плановые сроки сдачи объекта бойцы НАХАЛЬ-а, будучи вооруженными строительной техникой и материалами, под руководством военных инженеров строили комплекс поселения и сдавали его «под ключ» для эксплуатации органам самоуправления будущего кибуца).

Особое внимание властями Израиля уделялось созданию социальных, экономических и финансовых предпосылок для успешного обустройства новых кибуцев.

Ключом для осмысления безопасно-стратегической основы успеха в организации территориальной обороны являются слова генерала и государственного деятеля Ариэля Шарона о том, что в вопросах национальной безопасности «имеет место взаимная ответственность евреев Израиля и Диаспоры. Израиль, как я утверждаю дома и в зарубежных поездках, не является израильским проектом. Это проект всемирного Еврейства».

Ведомствам и специалистам, разрабатывающим подготовку РА и НКР к обороне, целесообразно изучить опыт взаимодействия ЦАХАЛ-а и Министерства сельского хозяйства Израиля при совместном создании тщательно продуманной и эффективно функционирующей системы оборонно-трудовых поселений.

ON THE PROBLEM OF ORGANIZING THE STATE'S TERRITORIAL DEFENSE BY ISRAEL'S EXAMPLE

*H. S. KOTANJIAN, Major General, Doctor of Political Sciences (RF),
Fellow Member of the Russian Academy of Military Sciences,
Counterterrorism Fellow (USA), Member of the CSTO Academic-Expert Council,
Commandant of the INSS, MoD, RA*

SUMMARY

Taking into account the lessons learnt from the war of «The Doomsday» («The Yom Kippur War», 1973) there started the elaboration and implementation of the strategic plan of changing the configuration of settling Arabs and Jews in Israel in the absence of defense in depth, under

the conditions of being surrounded with hostile states in the second half of the 1970s. The plan envisaged the creation of new Jewish settlements as a strategic resource to strengthen the territorial defense system, which is targeted at protecting the contact line of the Jewish and Arab population.

The strategy was implemented when retired General Ariel Sharon was appointed as the Minister of Agriculture, and then – of Defense. An efficient system of interaction of the patriotically disposed Jewish population and the Defense Forces was elaborated and implemented under his leadership while making a new configuration of disposition of Jewish defense-labor settlements and combat posts.

The following factors furthered the success of the program on reforming Israel's territorial defense system:

- program priorities of national security of the Likud Party, which came to power in 1977;
- targeted promotion of General A. Sharon as the Minister of Agriculture and then – Minister of Defense;
- involvement in realization of the given program by the Organization of young Jewish patriots fanatically devoted to the idea of Israel's invincibility («GUSH EMUNIM» – «The Bloc of the Faithful»);
- interaction of the Ministry of Agriculture and TZAHAL while building new settlements-kibbutzes in strategically important defense directions of the State of Israel.

A special attention was paid to the creation of social, economic and financial premises for a successful development of new kibbutzes system.

Sharon's words on the fact that in the issues of national security «...there is a mutual responsibility between Jews in Israel and Jews abroad. Israel, as I insist time and again in my trips overseas, is not an Israeli project. It is a worldwide Jewish project» are the key for comprehending the security-strategic basis for success in organizing the territorial defense.

It is expedient for the agencies and specialists engaged in the RA's and NKR's preparation for defense to study Israel's experience on forming the elaborate and effectively functioning system of defense-labor settlements in the most threatening directions.

ՀՀ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԿԱՏԱՐԵԼԱԳՈՐԾՈՒՄԸ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆԸ ՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԱՏՐԱՍՏՄԱՆ ՀԱՄԱՏԵՔՍՈՒՄ

Վ. Բ. ՏԵՐՏԵՐՅԱՆ, ՀՀ տարածքային կառավարման նախարարի առաջին տեղակալ, ՀՀ ԱԱՌ-ի մշակման միջգերատեսչական հանձնաժողովի անդամ-փորձագետ, տնտեսագիտության թեկնածու, դոցենտ



«Հայաստանի Հանրապետության կայուն և անվտանգ զարգացումը պահանջում է կառավարման համակարգի արդյունավետության բարձրացում, ժողովրդավարական արժեքների արմատավորում, տնտեսական աճի պահպանմանն ուղղված քայլերի ձեռնարկում: Դրա անհրաժեշտության գիտակցմամբ Հայաստանի Հանրապետությունը ձեռնամուխ է եղել համապարփակ բարեփոխումների իրագործմանը: Բարեփոխումներն իրականացվում են ազգային ինքնության պահպանման պայմանով՝ հենվելով առավելապես ազգային ներուժի վրա, օգտագործելով միջազգային հանրության փորձն ու աջակցությունը: Բարեփոխումների ձգձգումը կամ ձախողումը անմիջական սպառնալիքներ են ազգային անվտանգության համար»¹:

1. Տարածքային կառավարման և տեղական ինքնակառավարման համակարգի դերը պաշտպանական բարեփոխումների համատեքստում

«Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության ռազմավարության» մեջ նշված են ներքին անվտանգության նպատակները, որոնց իրականացումը անմիջականորեն կապված է տարածքային կառավարման և տեղական ինքնակառավարման համակարգի հետ: Դրանք են՝

– արդյունավետ պետական կառավարումը, մասնավորապես, պետական կառավարման մարմինների, այդ թվում՝ մարզպետարանների՝ որպես պետության տարածքային կառավարման քաղաքականության իրականացնողների և տեղական ինքնակառավարման մարմինների լիարժեք կայացումը,

– ազատական տնտեսության ձևավորումը, որի նպատակն է դիտարկել տարածքային ու ճյուղային սոցիալ-տնտեսական զարգացման համաչափությունը, ենթակառուցվածքների արդյունավետ կառավարումը:

Բացի այդ, «Հայաստանի Հանրապետության ռազմական ղոկտրիինը» սահմանում է ՀՀ ռազմական անվտանգության ապահովման ռազմաքաղաքական, ռազմական-ռազմավարական, ռազմատնտեսական և ռազմատեխնիկական

¹ «Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության ռազմավարություն»: ՀՀ Նախագահի 2007 թ. փետրվարի 7-ի հմ. ՆՀ-37-Ն հրամանագիր: «ՀՀ պաշտոնական տեղեկագիր», 2007 թ., հմ. 11 (535), հոդ. 228, *նաև*՝ «Հայկական բանակ» ռազմագիտական հանդեսի հատուկ թողարկում, 2007, էջ 22–23:

հիմունքները ներառող պաշտոնական տեսակետների համախումբը, համաձայն որոնց՝ ռազմական անվտանգությանն ուղղված ներքին սպառնալիքներից են՝

– «Ժողովրդագրական բացասական միտումները, հատկապես՝ սահմանամերձ շրջաններում, Հայաստանի Հանրապետության քաղաքացիների արտագաղթը, դրանք խթանող գործողություններն ու գործոնները,

– Հայաստանի Հանրապետության տարածքում և սահմանամերձ շրջաններում արտակարգ իրավիճակների առաջացման սպառնալիքը կամ դրանց առաջացումը, ինչպես նաև պատերազմի հետևանքներից բնակչության պաշտպանության և տնտեսության կայունության ոչ լիարժեք ապահովումը,

– Հայաստանի Հանրապետության տնտեսական անվտանգության համակարգի ոչ արդյունավետ գործունեությունը և տնտեսական ցուցանիշների անկումը»²:

Այս ուղղություններով տարածքային կառավարման և տեղական ինքնակառավարման ոլորտում բարեփոխումներ են իրականացվում արդեն ավելի քան տասը տարի: Ընդունվել են բազմաթիվ օրենքներ և իրավական այլ ակտեր, ընթացքում են քաղաքացիական ու համայնքային ծառայության համակարգի ներդրման ու բարելավման աշխատանքները: ՀՀ տարածքային կառավարման նախարարությունը ակտիվ կերպով մասնակցում է Հայաստանի Հանրապետության պաշտպանունակության ամրապնդման աշխատանքներին, ի թիվս այլ ձեռնարկումների՝ նպաստելով մարզերի ղեկավարության և դրանց տարածքում տեղաբաշխված գործառնների միջև համագործակցության զարգացմանը: Մարզային և համայնքային զարգացման բնագավառում ՀՀ տարածքային կառավարման նախարարությունը համագործակցում է Հայաստանում գործող բոլոր դոնոր կազմակերպությունների հետ, այդ թվում՝ ՄԱԿ-ի, Համաշխարհային բանկի, Մեծ Բրիտանիայի և Հյուսիսային Իռլանդիայի Միացյալ Թագավորության միջազգային զարգացման նախարարության, Եվրամիության, ԱՄՆ-ի Միջազգային զարգացման գործակալության (*USAID*), Գերմանիայի տեխնիկական համագործակցության ընկերության (*GTZ*) և այլ կազմակերպությունների հետ:

Մարզային և հանրապետական մակարդակներում մարզպետարանների, տեղական ինքնակառավարման մարմինների, քաղաքացիական հասարակության ներկայացուցիչների, հայաստանցի և արտասահմանցի փորձագետների, դոնոր կազմակերպությունների հետ համագործակցությունը ցույց տվեց, որ ոլորտում իրականացվող բարեփոխումների ներկա փուլում չի կարելի թերագնահատել, մի կողմից, աղքատության նվազեցման ու սոցիալ-տնտեսական զարգացման պլանավորման և, մյուս կողմից, ընթացակարգերի, որոշումների ընդունման, գերակայությունների սահմանման, ծրագրերի իրականացման, մշտազննման ու զնահատման միասնական համակարգի կարևորությունը:

² «Հայաստանի Հանրապետության ռազմական դոկտրին»: ՀՀ Նախագահի 2007 թ. դեկտեմբերի 25-ի հմ. ՆՀ-308-Ն հրամանագիր: «ՀՀ պաշտոնական տեղեկագիր», 2008 թ., հմ. 1 (591), հոդ. 14, *Amik*՝ «Աշխատանքային տեսլիք», 2007, հմ. 4, էջ 33:

Խնդրի կարգավորման նպատակով ՀՀ Կառավարության 2008 թ. սեպտեմբերի 18-ի հմ. 38 արձանագրային որոշմամբ հավանության արժանացավ «Հայաստանի Հանրապետության մարզերի զարգացման ծրագրերի կազմման ու իրականացման հայեցակարգը»:

Մարզերի զարգացման հիմնական գերակայությունները և ուղղությունները պետք է արտացոլվեն մարզերի զարգացման միջնաժամկետ համալիր ծրագրերում, որոնք պետք է կազմեն մարզպետարանները և հաստատի ՀՀ Կառավարությունը:

Մարզային զարգացման ծրագրերի (ՄՁԾ-ներ) հիմնական նպատակը «Կայուն զարգացման ծրագրով» (ԿՁԾ) և համապետական այլ ռազմավարական ծրագրերով նախանշված գերակա ուղղությունների զարգացման ապահովումն է՝ հաշվի առնելով մարզերի առանձնահատկությունները:

ՄՁԾ-ները պետք է կազմվեն և իրագործվեն քաղաքացիական հասարակության ակտիվ մասնակցությամբ:

ՄՁԾ-ները ենթակա են պարբերական վերանայման՝ կապված, առաջին հերթին, ԿՁԾ և համապետական այլ ռազմավարական ծրագրերի վերանայման և ընդունման հետ, ինչպես նաև ՄՁԾ-ների իրականացման ընթացքում մշտազմնման և գնահատման միջոցով ի հայտ բերված տարբեր հանգամանքների հաշվառմամբ:

ՄՁԾ-ների կազմման և իրագործման ընթացքում պետք է մեծացվի մարզային խորհուրդների դերը, իսկ մարզպետարաններում ստեղծվեն անհրաժեշտ կարողություններ՝ այդ գործընթացը համակարգելու և կառավարելու համար:

Սույն միասնական մեթոդաբանությամբ կազմված ՄՁԾ-ները պետք է հնարավորություն տան բոլոր մարզերում հստակ կերպով գնահատելու (կոնկրետ թվային ցուցանիշներով) թե՛ մարդկային, թե՛ եկամտային աղքատությունը: Դրա հիման վրա պետք է որոշվեն Կառավարության տարածքային քաղաքականության գերակայությունները՝ միտված առաջին հերթին մարդկային ու եկամտային աղքատության հաղթահարմանը և մարզերի զարգացման անհամամասնությունների նվազեցմանը: Այսպես. սոցիալական ենթակառուցվածքներում կատարվող կապիտալ ծախսերի տարածքային կառուցվածքը պետք է նպաստի մարդկային աղքատության մակարդակի նվազեցմանը՝ նախապատվություն տալով այս առումով առավել աղքատ մարզերին:

Եկամտային աղքատությունը նվազեցնելու և մարզերի տնտեսական զարգացման անհամամասնությունները մեղմելու նպատակով Կառավարությունը պետք է.

ա) միջոցներ հատկացնի յուրաքանչյուր մարզի տնտեսական ներուժի ուսումնասիրության համար,

բ) նպաստի մարզերում գերակա ոլորտների զարգացման ծրագրերի կազմմանն ու դրանց ներկայացմանը ներքին և արտաքին ներդրողներին ու գործարարներին,

զ) կատարի որոշակի ներդրումներ մարզային ենթակառուցվածքներում (համագործակցելով մասնավոր հատվածի հետ)՝ գործարարության զարգացման համար պայմանների էական բարելավման նպատակով,

դ) առանձին դեպքերում իրականացնի ուղղակի և անուղղակի ֆինանսական աջակցություն գործարարներին՝ առավել աղքատ մարզերում (հատկապես՝ բարձր-լեռնային և սահմանամերձ գոտիներում) գործունեություն ծավալելու համար:

Նշված գերակայությունները և միջոցառումները որոշիչ դեր կունենան միջնա-ժամկետ ծախսերի ծրագրերի մշակման բարձրագույն խորհրդի կողմից բյուջե-տային ռեսուրսների փաթեթի հավելաճի բաշխման միջոցառումների և հատկապես տարածքային համամասնությունների որոշման ժամանակ: Ընդհանուր առմամբ, առաջիկա տարիներին միասնական մեթոդաբանությամբ մարզերի կազմած ծրագրերն ու սահմանած գերակայությունները, ինչպես նաև կառավարության տարածքային քաղաքականությունը ավելի էական դեր կունենան հանրապետության զարգացման ռազմավարական ծրագրերի մշակման ժամանակ:

Նշված սկզբունքով մշակվել և ՀՀ Կառավարության 2009 թ. մայիսի 7-ի հմ. 505-Ն և 2009 թ. հունիսի 26-ի հմ. 782-Ն որոշումներով հաստատվել են Գեղարքունիքի և Տավուշի մարզերի 2009–2011 թթ., Սյունիքի մարզի 2010–2013 թթ. սոցիալ-տնտեսական զարգացման ծրագրերը: Հունվարի 15-ի հմ. 40-Ն որոշմամբ հաստատված՝ ՀՀ Կառավարության 2009 թ. միջոցառումների ծրագրով 2009 թ. սեպտեմբերին և դեկտեմբերին նախատեսվում է ՀՀ Կառավարության հաստատմանը ներկայացնել Լոռու և Շիրակի մարզերի սոցիալ-տնտեսական զարգացման ծրագրերը: ՀՀ տարածքային կառավարման նախարարության կազմած ժամանակացույցի համաձայն՝ մինչև 2011 թ. վերջը ՀՀ բոլոր մարզերը կունենան ՀՀ Կառավարության հաստատած սոցիալ-տնտեսական զարգացման ծրագրեր:

Տարածքային համաչափ զարգացման համատեքստում ՀՀ տարածքային կառավարման նախարարությունը վերլուծեց 2009 թ. ՀՀ պետական բյուջեի նախագիծը և արձանագրեց, որ պետական ներդրումների բաշխումն ըստ մարզերի դեռևս համամասնական չէ: Մշակվեց և պետական մարմինների հետ համաձայնեցվեց յուրաքանչյուր ոլորտը բնութագրող այնպիսի ցուցանիշների համակարգ, որոնցով հնարավոր կլինի գնահատել ոլորտի վիճակը և կոնկրետ մարզում պահանջվող ներդրումների ծավալը:

Վարչատարածքային բարեփոխումների իրականացման ուղղությամբ Արագածոտնի մարզում 2008 թ. դեկտեմբերի 18-ին կայացած ՀՀ Կառավարության արտագնա նիստում հավանության են արժանացել և ի գիտություն ընդունվել «Միջհամայնքային միավորումների ստեղծման և համայնքների խոշորացման հայեցակարգային մոտեցումները»:

ՀՀ վարչապետի 2009 թ. մայիսի 26-ի որոշմամբ ընդունված «Համայնքների խոշորացման և միջհամայնքային միավորումների ձևավորման հայեցակարգի», ինչպես նաև միջոցառումների ծրագրերի վերջնական լրամշակման գործընթացը

կազմակերպող միջգերատեսչական հանձնաժողովի առաջին նիստի արձանագրությամբ հանձնաժողովին կից ստեղծվել են 3 աշխատանքային խմբեր՝

- համայնքների խոշորացման հարցերով,
- միջհամայնքային միավորումների ձևավորման հարցերով,
- հանրային մասնակցության ու իրազեկման հարցերով:

Համայնքների բյուջեներին պետական ֆինանսական օժանդակության համակարգի արդյունավետության մեծացման, ինչպես նաև ֆինանսական համահարթեցման մեխանիզմների կատարելագործման նպատակով 2008 թ. մշակվել է «Ֆինանսական համահարթեցման մասին» ՀՀ օրենքի նախագիծ, որը հավանության է արժանացել՝ Վայոց ձորի մարզում 2008 թ. սեպտեմբերի 18-ին կայացած ՀՀ Կառավարության արտագնա նիստում և ներկայացվել ՀՀ Ազգային ժողով: Համայնքային բյուջեների եկամտային մասն ապահովող հարկատեսակների հավաքման մեխանիզմների կատարելագործման, տեղական նոր հարկատեսակների ներմուծման նպատակով մշակվել է «Հայաստանի Հանրապետությունում տեղական հարկերի մասին հայեցակարգը», որը հավանության է արժանացել ՀՀ Կառավարության նույն նիստում:

Պետական հատվածի արդիականացման ծրագրի (ՊՀԱԾ) շրջանակներում Երևանի, ՀՀ այլ քաղաքային և գյուղական համայնքներին տրամադրվել է համակարգչային տեխնիկա, որը նախատեսված է Համայնքային կառավարման տեղեկատվական համակարգի (ՀԿՏՀ) ստեղծման համար:

Ռեսուրսասպիրությունների արդյունքներով մշակվել են տարածքային կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների տեղեկատվայնացման ռազմավարական ծրագրի «Տարածքային տեղեկատվայնացման բնագավառում առանձնահատուկ լուծում պահանջող խնդիրների բացահայտում և նրանց լուծման կապակցությամբ առաջարկությունների ներկայացում», «Տարածքային տեղեկատվայնացման բնագավառում առաջադրվող լուծումների հավաստագրման մեխանիզմների մշակում», «Տարածքային տեղեկատվայնացման ծրագրի մշակում», «Տարածքային տեղեկատվայնացման ղեկավարման մարմինների ձևավորման կապակցությամբ առաջարկությունների ներկայացում» բաժինները:

Տարածքային կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների միջև փոխանակվող տեղեկույթի կառուցվածքի և փոխանակման կանոնակարգի մշակման նպատակով ուսումնասիրվում են քաղաքային ու գյուղական համայնքների սոցիալական, ժողովրդագրական, տնտեսական, ֆինանսական ոլորտներն ու համայնքային ենթակառուցվածքները բնութագրող ցուցանիշները՝ տվյալների շտեմարաններում ներառելու նպատակով: Կազմվել է համայնքային ծառայողների ատեստավորման, ինչպես նաև համայնքային ծառայության թափուր պաշտոն զբաղեցնելու համար մրցույթների տեստավորման փուլի անցկացման համար անհրաժեշտ համակարգչային ծրագիրը, մշակվել են հարցաշարեր՝ ըստ համայնքային ծառայության պաշտոնների խմբերի: Նշված ծրագիրն ու հարցա-

շարերը խորհրդատվության կարգով տրամադրվել են ՀՀ բոլոր համայնքներին:

«Համայնքային ծառայության մասին» ՀՀ օրենքում կատարված փոփոխությունների և լրացումների հիման վրա համապատասխան փոփոխություններ են կատարվել այդ օրենքից բխող հինգ ենթաօրենսդրական ակտերում:

Համայնքային ծառայության համակարգի արդյունավետության մեծացման նպատակով ուսումնասիրություններ են կատարվել 51 քաղաքային և գյուղական համայնքներում, հայտնաբերված թերությունները և դրանց վերացման վերաբերյալ առաջարկությունները ներկայացվել են այդ համայնքների ղեկավարներին:

ՀՀ Կառավարության 2009 թ. մարտի 26-ի նիստում ՀՀ տարածքային կառավարման մարմինների կողմից իրականացվող հսկողության արդյունավետության մեծացման նպատակով ընդունվել է որոշում «ՀՀ Կառավարության մի շարք որոշումներում փոփոխություն կատարելու մասին», որի նախագիծը մշակել է ՀՀ տարածքային կառավարման նախարարությունը: Այս որոշմամբ բոլոր մարզպետարաններում կատարվել են կառուցվածքային փոփոխություններ, որոնց շնորհիվ ապահովվել է դրանց մասնությունը: Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 77.2 հոդվածի՝ ՀՀ փոխվարչապետ—տարածքային կառավարման նախարարը հաստատել է ՀՀ մարզերի համայնքներում 2009 թ. իրավական և մասնագիտական հսկողություն իրականացնելու ամենամյա աշխատանքային ծրագիրը, համաձայն որի նախատեսվում է եռամսյա պարբերականությամբ հսկողություն:

ՀՀ Կառավարությունում «Համայնքների խոշորացման և միջհամայնքային միավորումների ձևավորման հայեցակարգային մոտեցումները» քննարկելուց հետո դրանք ենթարկվել են էական փոփոխությունների, հատկապես՝ հայեցակարգային մոտեցումների հիմնավորման, իրավիճակի վերլուծության, ռիսկերի գնահատման, նաև՝ միջազգային փորձի ուսումնասիրման և կիրառվող մոտեցումների համադրման տեսանկյունից:

ՀՀ տարածքային կառավարման նախարարությունը լրամշակել է «Համայնքների խոշորացման և միջհամայնքային միավորումների ձևավորման հայեցակարգը», կազմել այդ հայեցակարգից բխող միջոցառումների ծրագրերը, որոնց վերջնամշակման նպատակով ՀՀ վարչապետի 2009 թ. մայիսի 26-ի որոշմամբ ստեղծված միջգերատեսչական հանձնաժողովը մինչև տարեվերջ պետք է ՀՀ Կառավարություն ներկայացնի հայեցակարգը, դրանից բխող միջոցառումների ծրագրերը, ինչպես նաև այլ անհրաժեշտ փաստաթղթերի փաթեթը:

Համայնքի ավագանու և համայնքի ղեկավարի համագործակցության մակարդակի բարձրացման, ավագանու հաստատության կատարելագործման նպատակով մշակվում են ՀՀ մարզերից ստացված համապատասխան առաջարկությունները: Տվյալ ոլորտում գործող հասարակական կազմակերպությունների հետ քննարկումից և լրամշակումից հետո այդ առաջարկությունները նախատեսվում է ամրագրել «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքում և համապատասխան այլ իրավական ակտերում:

2. Տարածքային կառավարման և տեղական ինքնակառավարման համակարգի դերը արտաքին անվտանգության ապահովման համատեքստում

«Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության ռազմավարությունում» հստակ կերպով նշված է, որ «Հայաստանը տարածաշրջանային և համաշխարհային ներգրավման գործընթացներին մասնակցող երկիր է և իրեն դիտում է որպես տարածաշրջանում ու միջազգային ասպարեզում տեղի ունեցող գործընթացների լիիրավ մասնակից: Ներգրավվածությունը ենթադրում է մասնակցություն միջազգային ասպարեզում ընթացող այն զարգացումներին, որոնց համահունչ են Հայաստանի որդեգրած նպատակները»³:

Միջազգային ներգրավման ռազմավարության իրականացման՝ տարածքային կառավարման և տեղական ինքնակառավարման համակարգի կայացմանն առնչվող հիմնախնդիրների լուծման նպատակով ՀՀ տարածքային կառավարման նախարարությունն իրականացնում է հետևյալ միջոցառումները.

1) *Եվրամիության հետ համագործակցության շարունակականության ապահովում և արդյունավետության մակարդակի բարձրացում*: 2008 թ. մայիսի 29-ին Եվրամիության հրապարակած «Հայաստանի վերաբերյալ ընթացիկ զեկույցի» ծանոթագրություններով տարածքային կառավարման և տեղական ինքնակառավարման ոլորտում նախատեսված է՝

– «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» օրենքի ընդունումից անմիջապես հետո տեղական ինքնակառավարումն ամրապնդելու նպատակով լրացուցիչ փոփոխություններ կատարել «Տեղական ինքնակառավարման մասին», «Բյուջետային համակարգի մասին» և «Վարչատարածքային բաժանման մասին» ՀՀ օրենքներում,

– շարունակել բարեփոխումները տեղական ինքնակառավարման ոլորտում,

– ապահովել վերը նշված օրենքների և դրանցում կատարված փոփոխությունների համապատասխանությունը Եվրոպայի խորհրդի սկզբունքներին, որոնք ամրագրված են «Տեղական ինքնակառավարման մասին» եվրոպական խարտիայում:

Որպես արդյունք՝ ՀՀ տարածքային կառավարման նախարարությունը ամբողջությամբ իրականացրել է 2008 թ. մայիսի 29-ին Եվրամիության հրապարակած «Հայաստանի վերաբերյալ ընթացիկ զեկույցի» ծանոթագրություններով նախատեսված միջոցառումները:

2) *Հարավային Կովկասում «Եվրառեզիոն» համագործակցության մոդելի կիրառում*: Այս մոդելով նախատեսվում է Հայաստանի և Վրաստանի սահմանամերձ շրջանների համագործակցության ապահովում: Դա կլինի մեր տարածաշրջանում տվյալ մոդելի առաջին կիրառումը: Տավուշի, Լոռու, Շիրակի մարզերը, Վրաստանի 4 տարածքային համայնքները, այդ թվում՝ ադրբեջանաբնակ շրջաններ Մառնեուլը և Բոլնիսը, 2009 թ. հունիսի 15-ին ստեղծել են «Եվրակովկաս» իրավական

³ «Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության ռազմավարություն», էջ 31:

**ՊԱՇՏՊԱՆԱԿԱՆ ԲԱՐԵՓՈԽՈՒՄՆԵՐ.
ՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԱՏՐԱՍՏՈՒՄ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆԸ**



ՆԱՏՕ-ի Գործընկերություն հանուն խաղաղության ծրագրի շրջանակներում կայացած «Համատեղ աղեղ–Համատեղ նիզակակիր 2008» բազմազգ զորավարժությունների երկրորդ փուլի փակման արարողության ժամանակ.
Հայաստան, 2008 թ. հոկտեմբեր



Մի դրվագ «Համատեղ աղեղ–Համատեղ նիզակակիր 2008»
բազմազգ գորավարժություններից.
Հայաստան, 2008 թ. հոկտեմբեր



«Համատեղ աղեղ–Համատեղ նիզակակիր 2008» գորավարժությունների ընթացքին
հետևում են մասնակիցները և միջազգային տարբեր ՋԼՄ-ների ներկայացուցիչներ.
Հայաստան, 2008 թ. հոկտեմբեր



Մի դրվագ ՀԱՊԿ-ի շրջանակներում կայացած «Ռուբեժ 2008»
հրամանատարաշտաբային համատեղ զորավարժությունից.
Հայաստան, 2008 թ. օգոստոս



Դրվագ «Ռուբեժ 2008» զորավարժությունից.
Հայաստան, 2008 թ. օգոստոս



ՆԱՏՕ-ի Հյուսիսային տարածաշրջանային ցամաքային զորքերի բաղադրիչ հրամանատարության հրամանատար գեներալ-լեյտենանտ Ռոլանդ Քաթերը «Համատեղ աղեղ-Համատեղ նիզակակիր 2008» գորավարժություններում աչքի ընկած սպաներին ներկայացնում է ՀՀ Պաշտպանության նախարար Սեյրան Օհանյանին.
Հայաստան, 2008 թ. հոկտեմբեր



ՀՀ-ում ԱՄՆ-ի դեսպան Մարի Յովանովիչը
և Կանգաս նահանգի համհարզ-գեներալ Թոդ Բանթինգը պարգևներ են հանձնում
Իրաքից վերադարձած հայ խաղաղապահներին.
Հայաստան, 2009 թ. հուլիս

միավոր: Այդ կառույցը հնարավորություն կտա համատեղելու ջանքերը և եվրոպական ռեսուրսներ ներգրավելու սահմանամերձ շրջաններում տարածքային զարգացման ծրագրերի իրականացման համար: Կառույցի շրջանակներում 2009 թ. կմեկնարկի երեք տարի ժամկետով համագործակցության նոր ծրագիր, որը կֆինանսավորի Նիդեռլանդների կառավարությունը:

Ազգային վիճակագրական ծառայության հետ համագործակցության շրջանակներում առաջարկվել է տարածքային միավորման *NUTS* դասակարգման հիմքում ներառել ՀՀ Կառավարության 2008 թ. դեկտեմբերի 18-ի արտագնա նիստում հավանության արժանացած միջհամայնքային միավորումների և համայնքների խոշորացման հայեցակարգային դրույթները:

3) *Այլ պետությունների համապատասխան տարածքային ու տեղական ինքնակառավարման մարմինների հետ ՀՀ մարզերի և համայնքների շարունակական համագործակցության ապահովման նպատակով ՀՀ մարզպետների և նրանց տարածքային հանձնարարականներ՝ ներկայացնելու նոր առաջարկություններ*: Ներկայումս արդյունավետ համագործակցություն է զարգանում ՀՀ և ՌԴ մի շարք մարզերի, ինչպես նաև ՀՀ ու եվրոպական պետությունների քաղաքների միջև:

Այսպիսով՝ ՀՀ տարածքային կառավարման նախարարությունը որոշարկված-հաջորդական (դետերմինատիվ-էվոլյուցիոն) զարգացման միասնական մեթոդաբանությամբ մշակում և իրականացնում է տարածքային կառավարման՝ որպես պետական կառավարման համակարգի բաղադրիչի արդյունավետության մեծացման, տեղական ինքնակառավարման մարմինների լիարժեք կայացման, տարածքային սոցիալ-տնտեսական համաչափ զարգացման, ենթակառուցվածքների արդյունավետ կառավարման հայեցակարգորեն փոխկապված ու համակարգված ծրագրեր և միջոցառումներ: Այս գործունեության վերջնական նպատակը արտակարգ իրավիճակներում և հավանական հակառակորդի զինված հարձակման ժամանակ մարզերի կենսակայունության ապահովումն է, ինչը պաշտպանությանը պետության պատրաստման և նրա պաշտպանունակության ամրապնդման հիմնական գործոններից մեկն է:

СОВЕРШЕНСТВОВАНИЕ СИСТЕМЫ ТЕРРИТОРИАЛЬНОГО УПРАВЛЕНИЯ РА В КОНТЕКСТЕ ОБОРОННЫХ РЕФОРМ

В. Б. ТЕРТЕРЯН, первый заместитель Министра территориального управления РА, член-эксперт Межведомственной комиссии по разработке СНБ РА, кандидат экономических наук, доцент

РЕЗЮМЕ

«Стратегия национальной безопасности Республики Армения» в качестве одного из требований по обеспечению стабильного и безопасного развития РА определяет необходимость повышения эффективности систе-

мы государственного управления и осуществление шагов, нацеленных на сохранение экономического роста и улучшение социального положения граждан.

В соответствии с вышеуказанным, Министерством территориального управления РА на основе единой методологии детерминативно-эволюционного развития разрабатываются и осуществляются концептуально взаимосвязанные и систематизированные программы и мероприятия по повышению эффективности территориального управления как составляющей системы государственного управления, полноценного становления органов местного самоуправления, достижения пропорциональности территориального социально-экономического развития, эффективного управления инфраструктурами. Конечной целью данной деятельности является обеспечение жизнестойкости регионов при чрезвычайных ситуациях и вооруженном нападении вероятного противника и, как результат этого, – повышение уровня подготовки государства к обороне и его обороноспособности.

THE IMPROVEMENT OF THE SYSTEM OF TERRITORIAL ADMINISTRATION OF THE RA IN THE CONTEXT OF DEFENSE REFORMS

*V. B. TERTERYAN, First Deputy Minister of Territorial Administration of the RA,
Member Expert of the Interagency Commission on elaborating the NSS, RA,
Candidate of Economic Sciences, Docent*

SUMMARY

«The National Security Strategy of the Republic of Armenia» as one of the requirements on ensuring stable and secure development of the RA determines the necessity of increasing the efficiency of the system of public administration and the implementation of steps aimed at preserving economic growth and improving citizens' social standing.

In accordance with the above said, the Ministry of Territorial Administration of the RA on the basis of a common methodology of determination-evolutionary development elaborates and implements conceptually correlated and systematized programs and measures on increasing the efficiency of territorial administration as a constituent of public administration system, full-fledged establishment of local self-administration bodies, attainment of proportionality of territorial social-economic development, effective management of infrastructures. The ultimate goal of the given activity is ensuring vitality of regions in case of emergency situations and an armed attack of a possible opponent, and as a result, – increasing the level of the state's preparation for defense and of its defense capability.

ՏՐԱՆՍՊՈՐՏԻ ԵՎ ԿԱՊԻ ԵՆԹԱԿԱՆՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ՊԱՏՐԱՍՏՈՒՄԸ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆԸ

*Հ. Գ. ԲԵԳԼԱՐՅԱՆ, ՀՀ տրանսպորտի և կապի նախարարի առաջին
փոխկալ, ՀՀ ԱԱՌ-ի մշակման միջգերատեսչական հանձնաժողովի
անդամ-փորձագետ*



Հայաստանի անվտանգության պահպանման գործում իրենց ուրույն տեղն ունեն տրանսպորտի և կապի ենթակառուցվածքների հուսալի գործունեության ապահովումն ու պաշտպանությունը: Դրա անհրաժեշտությունն առաջանում է ոչ միայն ռազմական իրավիճակներում, այլև սահմանակից պետություններում էթնիկական համարաբարությունների, ներքին բախումների և ռազմական գործողությունների առկայության դեպքում, երևույթներ, որոնք կարող են հանգեցնել ՀՀ տարանցիկ ենթակառուցվածքների դեմ դիվերսիոն գործողությունների:

ՀՀ ազգային անվտանգության համար ներքին սպառնալիք է այդ ենթակառուցվածքների ցանցի զարգացման ոչ բավարար մակարդակը¹: Հայաստանի Հանրապետությունը դեռ լրացուցիչ ճանապարհների, ջրատարների, կապի համակարգերի և այլ ենթակառուցվածքների զարգացման կարիք ունի:

ՀՀ տրանսպորտային ենթակառուցվածքն ընդհանուր առմամբ ներառում է օդային, երկաթուղային, ավտոմոբիլային, ջրային տրանսպորտի և մետրոպոլիտենի՝ միմյանցից միանգամայն անկախ գործող ենթակառուցվածքները: Դրանցից յուրաքանչյուրի արդյունավետ և անխափան գործունեությունը կարևորագույն և անհրաժեշտ պայման է տնտեսության կայունացման, զարգացման և կառուցվածքային բարեփոխման, ՀՀ ազգային անվտանգության ու պաշտպանունակության մակարդակների բարձրացման ու ժողովրդի կենսապայմանների բարելավման համար: Ներկայումս ՀՀ տրանսպորտի և կապի նախարարության համակարգում տրանսպորտի ենթակառուցվածքը ներառում է միայն երկաթուղային և ավտոմոբիլային տրանսպորտի ենթակառուցվածքները:

Երևանի մետրոպոլիտենը 2000 թ. անցել է Երևանի քաղաքապետարանի ենթակայությանը²: «Ավիացիայի մասին» ՀՀ օրենքի³ համաձայն՝ Հայաստանի

¹ Տես «Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության ռազմավարությունը հաստատելու մասին» Հայաստանի Հանրապետության Նախագահի 2007 թ. փետրվարի 7-ի հմ. ՆՀ-37-Ն հրամանագիրը («ՀՀ պաշտոնական տեղեկագիր», 2007 թ., հմ. 11 (535)):

² Տես ՀՀ Կառավարության 2000 թ. նոյեմբերի 15-ի «Երևանի քաղաքապետին լիազորություններ վերապահվելու մասին» հմ. 739 որոշումը (չի հրապարակվել):

³ Տես ՀՀ Կառավարության 2003 թ. փետրվարի 13-ի «ՀՀ Կառավարությանն առընթեր քաղաքացիական ավիացիայի գլխավոր վարչության կանոնադրությունն ու աշխատակազմի կառուցվածքը հաստատելու և ՀՀ Կառավարությանն առընթեր քաղաքացիական ավիացիայի գլխավոր վարչությանը լիազորություններ վերապահելու մասին» հմ. 202-Ն որոշումը («ՀՀ պաշտոնական տեղեկագիր», 2003 թ., հմ. 16 (251)):

Հանրապետությունում ավիացիայի (բացառությամբ՝ ռազմական) և օդային տրանսպորտի բնագավառի պետական կառավարման լիազորություններն իրականացնում է ՀՀ Կառավարությանն առընթեր քաղաքացիական ավիացիայի գլխավոր վարչությունը:

ՀՀ Կառավարության 2006 թ. հոկտեմբերի 12-ի հմ. 1497-Ն որոշմամբ հաստատված «Հայկական երկաթուղու կառուցվածքային բարեփոխումների ծրագրին» համապատասխան՝ 2008 թ. հուլիսից հայկական երկաթուղու համակարգը կոնցեսիոն պայմանագրով փոխանցվել է միջազգային մրցույթում հաղթող ճանաչված «Ռուսաստանի երկաթուղիներ» ընկերության հիմնադրած «Հարավկովկասյան երկաթուղի» ընկերությանը⁴: Դա արվել է ներդրումների ներգրավմամբ երկաթուղու շարժակազմը վերազինելու և ենթակառուցվածքները զարգացնելու նպատակով: Պայմանագիրը կնքվել է 30 տարի ժամկետով: Պայմանագրում արտակարգ իրավիճակները դիտվում են որպես ֆորսմաժորային, և դրանց ժամանակ կոնցեսիոնները ազատվում է կոնցեսիոն պարտավորությունների պարտադիր կատարումից: Պայմանագրում ամրագրված չեն «Հայաստանի Հանրապետության երկաթուղիների տեխնիկական պատասպարման միացյալ պլանի» իրականացման պարտականությունները:

Երկաթուղային տրանսպորտի ենթակառուցվածքը մի բարդ համալիր է, որը ներառում է ընդհանուր օգտագործման երկաթուղային գծեր, կայարաններ, էլեկտրամատակարարման կառույցներ, կապի ցանցեր, ազդանշանային համակարգեր, կենտրոնացումներ և պատնեշումներ, տեղեկատվական համալիրներ և երթևեկության կառավարման համակարգ, այլ կառույցներ և սարքավորումներ, որոնք ապահովում են այդ համալիրի գործունեությունը⁵:

Երկաթուղային գծերի կամ կամուրջների ու թունելների վնասումը հանգեցնում է երկաթուղային տրանսպորտի աշխատանքի դադարեցմանը, ինչը, հատկապես՝ արտակարգ իրավիճակներում, կարող է կործանարար ազդեցություն գործել բնակչության և պետության անվտանգության վրա:

Ընդհանուր օգտագործման երկաթուղային տրանսպորտի ենթակառուցվածքի պաշտպանության նպատակով հաստատվել է համապատասխան պլան, որով, մասնավորապես, սահմանված են՝

- պլանի գործողության մեջ դնելու կարգը,
- աշխատանքների ղեկավարումն ու կառավարումը,
- պատասպարման ենթակա հիմնական (առաջնային) ուղղությունները,
- ռազմական դրության պայմաններին տեխնիկական պատասպարմանը պատրաստելու հանձնարարականները, որոնցում նշված են կարևորագույն օբ-

⁴ Տես «Հայաստանի երկաթուղու համակարգը «Ռուսական երկաթուղիներ» բաց բաժնետիրական ընկերության կողմից ստեղծված «Հարավկովկասյան երկաթուղի» փակ բաժնետիրական ընկերությանը փոխանցելու մասին» կոնցեսիոն պայմանագիրը (http://www.ukzhd.am/agreement-Konces-13.02.08_arm.doc):

⁵ Տես «Երկաթուղային տրանսպորտի մասին» 2007 թ. նոյեմբերի 28-ի ՀՕ-293-Ն ՀՀ օրենք («ՀՀ պաշտոնական տեղեկագիր», 2007 թ., հմ. 1 (591)):

յեկտները, տեխնիկայի, տեղակայանքների և տրանսպորտային միջոցների հավաքագրման կարգը, անհրաժեշտ նյութերի ու սարքավորումների ամփոփ ցանկերը, հիմնական (առաջնային) ուղղություններով երթևեկության կազմակերպումը, – առաջարկություններ երկաթուղային գծերի նախագծման և կառուցման վերաբերյալ:

Ավտոմոբիլային տրանսպորտի ենթակառուցվածքը ներառում է ավտոմոբիլային ճանապարհները, կամուրջները, թունելները, դրանց սպասարկման և նորոգման այլ օժանդակ շինություններ, շարժակազմի պահպանումը, տեխնիկական պատրաստությունն ու փոխադրումների կազմակերպումն ապահովող շինությունները, ավտոմոբիլային տրանսպորտի հավաքակայանները, ավտոհավաքատեղերը, ավտոմոբիլային տրանսպորտի շարժակազմի տեխնիկական սպասարկման կայաններն ու կետերը, ավտոնորոգման գործարանները, ավտոկայանները, երթակարգավարական կետերը:

Ընդհանուր օգտագործման ավտոմոբիլային ճանապարհների մոբիլիզացիոն պատրաստման և տեխնիկական պաշտպանության նպատակով մշակվել է պլան, որը գործողության մեջ պետք է դրվի ռազմական դրություն հայտարարելու պահից:

ՀՀ ազգային անվտանգության ապահովման համար անհրաժեշտ է բարձրացնել տրանսպորտի մոբիլիզացիոն պատրաստության մակարդակը՝ հատուկ պայմաններում հստակ աշխատելու նրա ունակությունը պահպանելու ճանապարհով:

Տրանսպորտի մոբիլիզացիոն պատրաստության մակարդակը բարձրացնելու, արտակարգ իրավիճակների և ռազմական դրության դեպքում տրանսպորտի, կապի, տեղեկատվության և կառավարման համակարգերի հստակ գործունեությունը ապահովելու նպատակով ՀՀ տրանսպորտի և կապի նախարարությունը ձեռնամուխ է եղել համակարգի մոբիլիզացիոն պատրաստության նորմատիվ փաստաթղթերի վերամշակմանն ու նոր փաստաթղթերի մշակմանը:

Ճշգրտման կարիք ունեն մաս ճանապարհային տնտեսության մոբիլիզացիոն պատրաստման պլանների կազմման կարգը, ժամկետները և կազմակերպություններին տրվող առաջադրանքները:

Նախարարության համակարգը խաղաղ պայմաններից ռազմական դրության փոխադրելու և անձնակազմի պաշտպանությունը արդյունավետ կերպով կազմակերպելու գործում կարևոր տեղ ունի կառավարման, ազդարարման և կապի համակարգերի օպերատիվ գործունեությունը: Այդ ուղղությամբ կատարվել են որոշակի աշխատանքներ:

Նախարարությունը հատուկ ուշադրություն է դարձնում կապի տեղեկատվանացման գործառույթներ իրականացնող կազմակերպությունների մոբիլիզացիոն պատրաստման միջոցառումների իրականացման հարցերին:

Տեղական, միջազգային և բջջային կապ ապահովող ձեռնարկության արտադրամասերի էլեկտրասնուցումը կատարվում է անկախ ենթակայաններից, որոնցից որևէ մեկի խափանման դեպքում ավտոմատ կերպով միացվում է մյուսը, իսկ հոսանք չլինելու դեպքում՝ դիզել-էլեկտրակայանը:

Հնարավոր բարդ իրավիճակներում օբյեկտի պաշտպանությունը ապահովելու համար նախատեսվում են մի շարք միջոցառումներ.

- կազմակերպել օբյեկտի ղեկավար կազմի շուրջօրյա հերթապահություն,
- պատրաստել քաղաքացիական պաշտպանության անհատական միջոցները, ռադիացիոն և քիմիական հսկողության սարքավորումները,
- սահմանել խիստ հսկողություն օբյեկտում հակահրդեհային կանոնների և նորմերի պահպանման նկատմամբ,
- խստացնել օբյեկտ մուտքի-ելքի ռեժիմը:

Մշակված է ղեկավար կազմի և կազմավորումների ազդարարման սխեմա:

Նախատեսված է հակառակորդի հարձակման հետևանքով վնասված օբյեկտներում կատարել փրկարարական աշխատանք ոչ ռազմականացված կազմավորումների ուժերով, որոնք զինված են անհրաժեշտ ինժեներական գույքով և անհատական պաշտպանության միջոցներով:

Գործում է բուժկետ: Ստեղծված են նաև տրանսպորտային, նյութական ապահովման և այլ կազմավորումներ:

Արտակարգ իրավիճակների և ռազմական դրության դեպքում կապի, ազդարարման և տեղեկատվական համակարգերը, անկախ սեփականության ձևից, անցնում են իրավասու մարմնի ենթակայության տակ:

Հաշվի առնելով խաղաղ և պատերազմական իրավիճակներում փոստային կապի պաշտպանվածության ու փոստի անխափան գործունեության, ինչպես նաև աշխատողների ու նրանց ընտանիքների անդամների անվտանգության ապահովման անհրաժեշտությունը՝ ստեղծվել են տարահանման, հակահրդեհային, սանիտարական, հետախուզական, փրկարարական, վթարավերականգնողական և այլ հատուկ խմբեր, որոնք պատրաստ են կատարելու անհրաժեշտ աշխատանք:

Համակարգում, ըստ հաստատված ժամանակացույցի, պարբերաբար կատարվում են ստուգումներ՝ անհրաժեշտ իրերի և ապրանքների (կրակմարիչներ, դոզաչափական սարքավորումներ, դեղատուփեր և այլն) առկայությունը ճշտելու նպատակով: Փրկարար ծառայության ճգնաժամային կառավարման պետական ակադեմիայի դասընթացներին մասնակցում են ղեկավարներն ու մասնագետները, որոնք իրենց տեսական ու գործնական ունակությունները ներդրում են համակարգի պաշտպանության ամրապնդման գործում:

Արդյունավետ գործելու համար մշակված են կապի և ազդարարման, ինչպես նաև տարահանման սխեմաներ: Պատերազմի ժամանակ և արտակարգ իրավիճակներում աշխատողների անվտանգությունը ապահովելու համար օգտագործվում են թաքստոցներ և ապաստարաններ:

Հնարավոր ավերածությունների հետևանքների վերացման և վերականգնողական աշխատանքի կազմակերպման համար ստեղծված են տարահանման, կապի և ազդարարման, վթարավերականգնողական, փրկարարական, սանիտարական, ճառագայթային և քիմիական հետախուզության, հրդեհաշիջման և այլ կազմավորումներ:

Մշակված են աշխատողների պաշտպանության և հակառակորդի հարձակման հետևանքների վերացման միջոցառումներ, դրանց կազմակերպման և իրականացման կարգը՝ կառավարում, ազդարարում և կապ, անձնակազմի պաշտպանություն, բժշկական և ինժեներական ապահովում, փրկարարական և անհետաձգելի վթարավերականգնողական աշխատանք: Մշակվել է նաև անհրաժեշտ միջոցառումների ծրագիր, որի իրականացումը կրարձրացնի տրանսպորտի և կապի համակարգի պաշտպանվածության մակարդակը:

ПОДГОТОВКА ИНФРАСТРУКТУР ТРАНСПОРТА И СВЯЗИ К ОБОРОНЕ

*Г. Г. БЕГЛАРЯН, первый заместитель Министра транспорта и связи РА,
член-эксперт Межведомственной комиссии по разработке СНБ РА*

РЕЗЮМЕ

Для обеспечения безопасности Республики Армения важное значение имеют надежное функционирование и защищенность инфраструктур транспорта и связи.

Отмечена роль оперативной деятельности систем управления, оповещения и связи при переходе от мирных условий к военному положению и необходимость организации защиты персонала.

В аспекте обеспечения национальной безопасности государства рассмотрены мероприятия по повышению уровня мобилизационной готовности транспорта, обеспечению слаженной деятельности систем транспорта, связи, информации и управления в условиях чрезвычайных ситуаций и военного времени.

THE PREPARATION OF TRANSPORT AND COMMUNICATION INFRASTRUCTURES FOR DEFENSE

*H. G. BEGLARYAN, First Deputy Minister of Transport and Communication of the RA,
Member Expert of the Interagency Commission on elaborating the NSS, RA*

SUMMARY

Safe functioning and protectability of transport and communication infrastructures are significant for ensuring the Republic of Armenia's security.

The role of operative activity of control, warning and communication systems while passing from peace conditions to martial law and the necessity of organizing the protection of personnel are mentioned in the article.

The measures on increasing the level of transport preparedness activity, ensuring coordinated activity of transport, communication, information and control systems in cases of emergency and wartime are considered in the context of ensuring the state's national security.

ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՊԱՏՐԱՍՏՈՒՄՆ ԸՍՏ ՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՊԱՀԱՆՁՆԵՐԻ

Հ. Մ. ԴԱՐԲԻՆՅԱՆ, ՀՀ առողջապահության նախարարի առաջին տեղակալ,
ՀՀ ԱԱՌ-ի մշակման միջգերատեսչական հանձնաժողովի
անդամ-փորձագետ, բժշկական գիտությունների թեկնածու, դոցենտ



ՀՀ ազգային անվտանգության ապահովման առաջնահերթություններից է ստեղծել առողջապահության առավել արդյունավետ համակարգ, որն անխափան գործի նաև պատերազմի ժամանակ և արտակարգ իրավիճակներում: Նման պայմաններում բնակչության բժշկական ապահովման հիմնական խնդիրներն են.

- տուժած բնակչությանը անհրաժեշտ բուժօգնության ցուցաբերումը, հիվանդների և վնասվածք ստացածների տարահանումը բժշկական հաստատություններ,
- ռազմական գործողությունների գոտիներում և հարկադրաբար վերաբնակեցվածների կենտրոնացման վայրերում սանիտարահամաճարակաբանական հսկողության հակահամաճարակաբանական կանխարգելիչ համալիր միջոցառումների իրականացումը՝ վարակիչ հիվանդությունների բռնկումներն ու դրանց տարածումը կանխելու, ինչպես նաև ռազմական գործողությունների գոտիներից բնակչությանը տեղափոխելու նպատակով,

- բնակչության պաշտպանությունը ճառագայթող, քիմիական և բակտերիոլոգիական վտանգավոր օբյեկտների ռմբակոծման և փլուզման հետևանքներից,

- ռազմական գործողությունների գոտիներում բուժսանիտարական հետևվանքների վերացմանը անմիջականորեն մասնակցող բուժհաստատությունների և կազմավորումների անխափան մատակարարումը բժշկական գույքով,

- արտակարգ իրավիճակների գոտիներում առողջապահության համակարգի գործունեության վերականգնումը:

Առողջապահության համակարգը պաշտպանությանը պատրաստելու փուլում կարևոր են առողջապահության ուժերի և միջոցների տեղաբաշխումն ըստ առողջապահության կազմավորումների առաջին, երկրորդ և երրորդ շարակարգերի (էշելոններ), ինչպես նաև դրանց պատրաստումը և խնդիրների առաջադրումը՝ ըստ յուրաքանչյուր շարակարգի:

Առաջին շարակարգի խնդիրներն են՝

- վիրավորների տեղափոխումը, հարկադրաբար վերաբնակեցված բնակչությանը ցուցաբերվող բուժօգնության ապահովումը,

- սանիտարահամաճարակային հսկողություն և հակահամաճարակային համալիր միջոցառումների իրականացումը՝ զանգվածային վարակիչ հիվանդություններն ու դրանց տարածումը կանխելու համար,

– օժանդակումը ռմբակոծումների հետևանքով վնասված հիվանդանոցների, սանիտարահամաճարակային հսկողության կենտրոնների, ինչպես նաև այլ բժշկական հաստատությունների վերականգնման աշխատանքներին,

– վերականգնված հիվանդանոցների և հիմնականում խաղաղ ու հարկադրաբար վերաբնակեցված բնակչությանն սպասարկող բժշկական այլ կետերի ապահովումը անհրաժեշտ բժշկական գույքով:

Երկրորդ շարակարգի խնդիրներն են՝

– որակավոր և մասնագիտացված բժշկական օգնության ցուցաբերումը ռազմական գործողությունների հետևանքով տուժած բնակչությանը,

– հակահամաճարակային միջոցառումների կազմակերպումն ու անցկացումը,

– մասնագետ բժիշկների ընտրությունը և այն հատուկ բժշկական կազմավորումների ու մասնագիտացված խմբերի (այսուհետ՝ հատուկ կազմավորումներ) համալրումը, որոնք անմիջականորեն մասնակցում են զինված հակամարտության գոտում բուժսանիտարական հետևանքների վերացմանը:

Երրորդ շարակարգը ներառում է բազմապրոֆիլ, նեղ մասնագիտացված բուժաստատությունները, բժշկական կենտրոնները, գիտահետազոտական և պետական սանիտարահամաճարակային հաստատություններ, ինչպես նաև առողջապահության նախարարության բժշկական գույքի պահուստային բազան:

Երրորդ շարակարգի խնդիրներն են՝

– կառավարման այն խնդիրների լուծումը, որոնք կապված են բնակչության առողջության, բուժտարահաման, սանիտարահակահամաճարակային ապահովման և առողջության վերականգնման հետ,

– առողջապահության կազմավորումների ուժերի և միջոցների գործողությունների համակարգումը նրանց հանձնարարված խնդիրների համատեքստում,

– համագործակցությունը բնակչության կենսապահովմանը անմիջականորեն մասնակցող պետական մարմինների հետ,

– ռազմական գործողությունների գոտու ապահովումը հատուկ կազմավորումներով, մասնագետներով, բժշկական գույքով ու տեխնիկայով, բակտերիոլոգիական դեղորայքով, վարակազերծման միջոցներով և այլ պարագաներով,

– մասնագիտացված բժշկական օգնության ցուցաբերումը հանրապետական նշանակության բուժկանխարգելիչ հաստատություններում,

– անհրաժեշտության դեպքում մասնագետ բժիշկների կատարելագործման կարճատև ուսումնական դասընթացների կազմակերպումը հակամարտության այն գոտիներում, որտեղ մարտական գործողությունները դադարեցված են:

ՀՀ առողջապահության նախարարությունը արտակարգ իրավիճակներին նախապատրաստման շրջանում նախատեսում է անհրաժեշտ լրացուցիչ մահճակալային ֆոնդ ինչպես Երևանի, այնպես էլ մարզային առողջապահական հիմնարկներում: Այս նպատակով կարելի է օգտագործել նաև հանրապետության հանգստյան տների և առողջարանների՝ որպես օժանդակ բժշկական կառույցների հնարավորությունները:

Նկատի ունենալով պատերազմի ժամանակ և արտակարգ իրավիճակներում հատուկ կազմավորումները մասնագետներով համալրելու հույժ կարևոր խնդիրը՝ Առողջապահության ազգային ինստիտուտը (ԱԱԻ) պլանային կարգով անցկացնում է մասնագետ բժիշկների վերապատրաստում և վերամասնագիտացում: ԱԱԻ-ի ծրագրերում կան նաև արագացված վերապատրաստման և վերամասնագիտացման դասընթացներ:

Առողջապահության նախարարությունը հետևում է այս ոլորտում Առողջապահության համաշխարհային կազմակերպության ու միջազգային այլ կառույցների ձեռքբերումներին և հաջողությամբ համագործակցում է նրանց հետ: ՈՒՆԱգրավ է հայ-շվեյցարական «Արձագանք» ծրագրի շրջանակներում 2009 թ. ձեռնարկված համագործակցությունը: Շվեյցարական կողմը, որպես աջակցություն, ՀՀ-ում կազմակերպում է աղետների բժշկության մասնագետների ուսուցում և գործնական պարապմունքներ: Ծրագիրն առաջժմ ներդրվելու է երկու մարզում, հետագայում՝ ծրագրի հաջող իրականացման դեպքում, այն կիրառործվի նաև հանրապետության մյուս բոլոր մարզային բժշկական կառույցներում:

Առողջապահության նախարարության նախապատրաստումը պետության պաշտպանության պահանջներին համապատասխանեցնելու առումով շատ կարևոր են խաղաղ պայմաններում բուժհաստատությունների միջև համագործակցության ապահովումը, հատուկ կազմավորումների միջև համապատասխան պայմանագրերի կնքումը և անհրաժեշտ բուժական բազայի նախապատրաստումը: Այս կապակցությամբ նախարարության ղեկավարությունը անցկացնում է հատուկ կազմավորումների համալրվածության ստուգումներ և ձեռնարկում համապատասխան միջոցառումներ նրանց բազան միշտ պատրաստ վիճակում պահելու համար: Նախարարությունում գործում է հատուկ հանձնաժողով, որը կոչված է հայտնաբերված թերությունները վերացնելու և, ըստ հաստատված ժամանակացույցի, ՀՀ Կառավարությանն այդ մասին տեղեկացնելու:

Պատերազմի ժամանակ և արտակարգ իրավիճակներում, հատկապես՝ հատուկ կազմավորումները համալրելու համար, անհրաժեշտ են համապատասխան պատրաստությամբ վիրաբույժներ, վնասվածքաբաններ, վարակաբաններ և թերապևտներ: Նախարարությունը որպես տարեկան ծրագիր նախատեսում է խաղաղ ժամանակ ավելի ընդլայնել նշված մասնագետների կարճաժամկետ վերապատրաստումը: ՀՀ-ում միջին մասնագիտական կրթական ծրագիր իրականացնող ոչ պետական ուսումնական հաստատությունների շրջանավարտները ևս կարող են համարվել բուժբույրական ռեսուրսը համալրող կադրեր:

Պատերազմի ժամանակ և արտակարգ իրավիճակներում Երևանում և հանրապետության այլ տարածքներում համալրվում են հակաժանտախտային և հակահամաճարակային հսկողության մասնագիտացված բրիգադներ: Այս բրիգադները նախատեսված են զանգվածային հիվանդությունների առաջացումն ու տարածումը կանխելու, սանիտարահիգիենիկ և հակահամաճարակային միջոցառումներ իրականացնելու համար:

Բնակչությանը բուժօգնության ցուցաբերման կարևորագույն խնդիրներից մեկը բուժհաստատությունների ապահովումն է անհրաժեշտ քանակով արյան բաղադրամասերով:

Նման պայմաններում անհրաժեշտ քանակով արյան բաղադրամասերի առկայությունը հույժ կարևոր է դառնում, քանի որ՝

– խիստ մեծանում է արյան պահանջարկը,

– համապատասխանաբար մեծանում է արյան հավաքման համար անհրաժեշտ պարագաների, հետազոտական նյութերի և պահպանման համար անհրաժեշտ միջոցների պահանջարկը,

– հնարավոր են կորուստներ արյան ծառայության ստորաբաժանումների կազմում,

– կարող են առաջանալ դժվարություններ՝ կապված լրացուցիչ ծավալներով դոնորական արյուն (հատկապես՝ հազվագյուտ խմբերի) հավաքելու հետ:

Արյան ծառայության ստորաբաժանումներն ունեն արյան որոշակի պահուստային պաշար, որն սկզբնական շրջանում կարող է բավարարել արտակարգ իրավիճակներում առաջացող պահանջարկը: Սակայն ծառայությունը կարիք ունի վերազինման, տեխնիկական միջոցներով հագեցման և համապատասխան պաշարների ավելացման: Գաղտնիք չէ, որ արյան պաշարների կուտակումն ունի կարևոր ռազմավարական նշանակություն, և կարիք կա կատարելու որոշակի ներդրումներ՝ ծառայությունը հզորացնելու համար:

Առողջապահության ոլորտը պատրաստության բերելու շրջանում կարևոր է նաև շտապ օգնության բուժկազմավորումների անխափան գործունեության կազմակերպումը: Հարկ է մշակել միջգերատեսչական համագործակցության ծրագիր, քանի որ այն չլինելու պայմաններում դժվարությամբ են լուծվում հատկապես պատերազմի ժամանակ և արտակարգ իրավիճակներում համագործակցության առանձին խնդիրներ: Օրինակ՝ անհետաձգելի բուժօգնության բրիգադների ծառայությունը կազմակերպելու համար առողջապահության նախարարությանն անհրաժեշտ են լրացուցիչ քանակով մեքենաներ: Սակայն չկա որևէ իրավական ակտ, որն այդ ասպարեզում կարգավորեր հարաբերությունները կապի և տրանսպորտի, էներգետիկայի նախարարությունների հետ:

Առողջապահության համակարգը պատրաստության բերելու և ծավալելու համար շատ կարևոր են բժշկական գույքի բազաների հագեցվածությունը և հանրապետության տարածքում դրանց օպտիմալ տեղաբաշխումը:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ հատուկ կազմավորումները որպես կանոն գործելու են բազմապրոֆիլ և նեղ մասնագիտացված բժշկական կենտրոններ ունեցող Երևան քաղաքից դուրս, նպատակահարմար է ստեղծել ժամանակակից սանիտարական ավիացիա՝ պատերազմի ժամանակ և արտակարգ իրավիճակներում ծանր հիվանդներին համապատասխան բժշկական կենտրոններ, այդ թվում՝ արտասահմանյան, տեղափոխելու համար: Չի բացառվում նաև երկաթուղային փոխադրումների անհրաժեշտությունը:

Առողջապահության նախարարությունը պատերազմի ժամանակ և արտակարգ իրավիճակներում նախատեսում է նաև տարահանվող բնակչության կենտրոնացման վայրերում ծավալել վրանային հոսպիտալներ: Դրանք կարող են ժամանակավորապես փոխարինել արտակարգ իրավիճակների հետևանքով վնասված կամ փլուզված հիվանդանոցները: Առողջապահության նախարարությունը նախապատրաստական փուլում պլանավորում է բնակչության շրջանում կանխարգելիչ յոդային միջոցառման իրականացում: Այս խնդիրն ամրագրված է ՀՀ Կառավարության որոշմամբ, մշակված է նաև հուշաթերթիկ, որում նշված է պատրաստուկից օգտվելու կարգը:

Նախապատրաստման ժամանակաշրջանում կարևոր է նաև բուժհաստատությունների անխափան մատակարարումը դեղորայքով: Այս առումով նախարարությունը մեծ ուշադրություն է դարձնում բուժկանխարգելիչ հաստատություններում դեղորայքային պաշարների կուտակման և թարմացման հարցերին, հատկապես՝ հատուկ կազմավորումներ ունեցող հիվանդանոցներում: Առողջապահության նախարարությունը յուրաքանչյուր բուժհաստատության համար մշակել է առաջնահերթ անհրաժեշտության դեղանյութերի ցանկ: Ունեցած դեղորայքային պաշարների վերաբերյալ ամեն տարի պարբերաբար տեղեկություններ են ներկայացվում նախարարության համապատասխան ծառայություն և եղած պաշարները թարմացվում են: Առանձին կարևորություն ունեն 17 լիցենզավորված դեղ արտադրող կազմակերպությունները, որոնց արտադրանքը օգտագործվում է համակարգի բուժհաստատություններում:

Ելնելով նշված հիմնական խնդիրներից, ուժերի ու միջոցների առկայությունից՝ առողջապահության նախարարությունը պատերազմի ժամանակ և արտակարգ իրավիճակներում արդյունավետ կառավարում ապահովելու համար ստեղծել է ղեկավար մարմիններ, որոնց հիմնական խնդիրներն են.

– հավաքել, մշակել և վերլուծել արտակարգ իրավիճակների և ռազմական գործողությունների գոտու վերաբերյալ բժշկական բնույթի տեղեկությունները,

– մշակել պլաններ՝ ուղղված արտակարգ իրավիճակի կամ ռազմական գործողությունների գոտու առողջապահական համակարգի վերականգնմանը,

– լուծել առողջապահության համակարգի ուժերի և միջոցների համընդհանուր նպատակային օգտագործման խնդիրները,

– նախապատրաստել արտակարգ իրավիճակներում գործելու համար ժամանակավոր իրավական ակտեր, ձեռնամուխ լինել դրանց անթերի կատարմանը,

– ճշտել հանրապետության տարածքում տեղաբաշխված բուժփմնաբանների բազան, նրանց պրոֆիլային կարողությունները և հիվանդների ժամանակավոր ու վերջնական բուժման հնարավորությունները,

– ընտրել և արտակարգ իրավիճակների գոտիների բուժհաստատություններում տեղաբաշխել առողջապահության նախարարության կադրերը, համալրել հատուկ կազմավորումները,

– համակարգել և օգտագործել բժշկական, նյութատեխնիկական ու ֆինանս-

սակյան ռեսուրսները, որոնք նախատեսված են արտակարգ իրավիճակների գոտու բուժսանիտարական հետևանքների վերացման համար,

– համակարգել միջազգային հումանիտար կազմակերպությունների հետ տարվող աշխատանքները՝ հումանիտար օգնությունների ստացման, պահման և բաշխման հարցում,

– ընդհանրացնել բախումների գոտում բժշկական ծառայությունների գործունեության կազմակերպման վորձը,

– հիվանդների վերջնական բուժման նպատակով օգտագործել ՀՀ բուժկանխարգելիչ հիմնարկների, վերականգնողական կենտրոնների և հանգստյան տների հնարավորությունները:

Առողջապահության նախարարությունը 2007 թ. կազմակերպեց շուրջ 3000 բուժաշխատողների վերապատրաստում՝ պատվաստումների անվտանգության և կատարման տեխնիկայի ծրագրով: Ներկա փուլում ծրագրային պատվաստումներ կատարելու համար կա բավարար նյութատեխնիկական բազա, որն ապահովված է սառնարանային պայուսակներով՝ պատվաստանյութերը պահելու և տեղափոխելու համար: Նախարարությունն օգտագործում է նաև համակարգի՝ առողջության առաջնային պահպանման կառույցների և պետական հիգիենիկ հակահամաճարակային տեսչության ուժերը և միջոցները:

Այսպիսով՝ առողջապահության նախարարությունը պատերազմի ժամանակ և արտակարգ իրավիճակի պայմաններում առաջին հերթին՝

– իր բոլոր սուբյեկտներին, համադասող շտաբը, հատուկ բժշկական կազմավորումներին տեղեկացնում է կատարվածի ռեալ պատկերի և հնարավոր հետևանքների մասին,

– պատրաստության վիճակի է բերում բոլոր հատուկ կազմավորումները և ծառայությունները,

– արտակարգ իրավիճակ հայտարարված գոտում կազմակերպում և իրականացնում է բուժսանիտարական հետախուզում, կատարում է բուժսանիտարական իրավիճակի կանխատեսում,

– արտակարգ իրավիճակի գոտի է տեղափոխում առողջապահության նախարարության օպերատիվ խմբերը,

– կազմակերպում է հատուկ կազմավորումների տեղափոխումը արտակարգ իրավիճակի գոտի՝ աղետի հետևանքները վերացնելու և տուժած բնակչության բուժումը կազմակերպելու համար:

Հատուկ կազմավորումների ծավալման ժամկետները սահմանվում են միջազգային փորձի և ՀՀ առողջապահական կառույցների առանձնահատկությունների հաշվառմամբ:

Արտակարգ իրավիճակներին դիմակայության և հետևանքների վերացման հարցերում նախարարությունը համագործակցում է արտակարգ իրավիճակների, պաշտպանության, կապի և տրանսպորտի, էներգետիկայի, գյուղատնտեսության նախարարությունների, ոստիկանության և ազգային անվտանգության ծառայությ-

յունների, հատուկ կազմավորումների հետ: ՀՀ առողջապահության նախարարությունը հաշվի է առել այլ գերատեսչությունների և նախարարությունների, ինչպես նաև կենսաթոշակի անցած մասնագետ բժիշկների ներգրավման հնարավորությունը:

Առողջապահության նախարարության համակարգի կառավարումն իրականացնող մարմինների աշխատանքային հմտությունը պատշաճ մակարդակի վրա պահելու համար ամենամյա ուսուցման պլաններում նախատեսվում է.

–նախարարությունում և մարզային կառույցներում կազմակերպել ուսումնավարժանքներ,

–պարտադիր մասնակցություն արտակարգ իրավիճակների նախարարության կազմակերպած ուսումնավարժանքներին և սեմինար պարապմունքներին:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. «ՀՀ Սահմանադրություն»:
2. ՀՀ Կառավարության համապատասխան որոշումներ և այլ իրավական ակտեր բժշկական հատուկ կազմավորումների վերաբերյալ:
3. «Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության ռազմավարություն»: «Հայկական բանակ» ռազմագիտական հանդեսի հատուկ թողարկում, 2007:
4. ՀՀ ԱՆ-ի համակարգի տեղեկատվական-վերլուծական հաշվետվություններ:
5. «ՀՀ ԱՆ-ի բժշկական ծառայությունների տարեկան հաշվետվություններ և այլ նյութեր»:
6. Հ. Մ. Դարբինյան, Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության ռազմավարության հիմնադրույթները առողջապահության ոլորտում: «Հայկական բանակ», 2007 թ. հմ. 2–3:
7. В. В. Корбут, С. Ф. Гончаров, Б. В. Бобий, В. И. Крюков. «Организация медицинского обеспечения населения в условиях военных конфликтов». М., 2003.

ПОДГОТОВКА СИСТЕМЫ ЗДРАВООХРАНЕНИЯ
В СООТВЕТСТВИИ С ТРЕБОВАНИЯМИ
ОБОРОНЫ ГОСУДАРСТВА

А. М. ДАРБИНЯН, первый заместитель Министра здравоохранения РА,
член-эксперт Межведомственной комиссии по разработке СНБ РА,
кандидат медицинских наук, доцент

РЕЗЮМЕ

Одним из важных приоритетов обеспечения национальной безопасности РА является создание такой системы здравоохранения, которая была бы способна эффективно действовать как в мирное, так и в военное время и при чрезвычайных ситуациях.

С целью решения задач по подготовке к обороне Министерством здравоохранения РА в сотрудничестве с заинтересованными министерствами и ведомствами республики разрабатываются и осуществляются комплексные программы и мероприятия по: распределению сил и средств в зонах первого, второго и третьего эшелонов формирований здравоохранения; пере-

подготовке и переквалификации медицинского персонала; обеспечению эпидемиологической и санитарно-гигиенической безопасности; созданию палаточных госпиталей; обеспечению бесперебойных поставок медикаментов и медико-санитарной техники; созданию необходимых резервов компонентов крови; оснащению и оптимальному распределению на территории республики баз медицинского имущества; обеспечению эффективной работы системы скорой помощи и т. д.

THE PREPARATION OF THE HEALTH SYSTEM ACCORDING TO THE REQUIREMENTS OF THE STATE'S DEFENSE

*H. M. DARBINYAN, First Deputy Minister of Health of the RA,
Member Expert of the Interagency Commission on elaborating the NSS, RA,
Candidate of Medical Sciences, Docent*

SUMMARY

One of the main priorities of ensuring the RA national security is the creation of such a health system which would be able to effectively act both in peace and war time and in emergency situations.

To solve problems on preparation for defense the RA Ministry of Health cooperating with concerned ministries and agencies of the republic elaborates and implements complex programs and measures on: distributing forces and means in the zones of the first, second and third echelons of health service formations; further training and retraining of medical personnel; ensuring epidemiological and sanitary-hygienic security; erecting tented hospitals; providing uninterrupted supplies of medicines and medical-sanitary equipment; building up necessary reserves of blood components; equipping and optimally distributing medical property bases on the republic's territory; guaranteeing an efficient activity of the emergency system, etc.

ՀՀ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՄՈՔԻԼԻԶԱՅԻՈՆ
ՊԱՏՐԱՍՏՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ
ԿԱՏԱՐԵԼԱԳՈՐԾՄԱՆ ՈՐՈՇ ԽՆԴԻՐՆԵՐ

Ա. Ռ. ԳԵՎՈՐԳՅԱՆ, ՀՀ Էկոնոմիկայի նախարարի գլխավոր խորհրդական,
ՀՀ ԱԱՈ-ի մշակման միջգերատեսչական հանձնաժողովի
անդամ-փորձագետ



ՀՀ «Ռ-ազմական դոկտրինով» որպես ՀՀ տնտեսության մոբիլիզացիոն նախապատրաստման հիմնական խընդիր է սահմանվել համապատասխան նյութական ու ֆինանսական ռեսուրսներով ռազմական անվտանգության համակարգի ապահովման, ազգային տնտեսության կայուն գործառության պահպանման ուղղությամբ պլանավորված համալիր միջոցառումների իրականացումը¹:

Տարածաշրջանային ռազմաքաղաքական ու տնտեսական իրավիճակին համահունչ ՀՀ տնտեսության մոբիլիզացիոն պատրաստման արդյունավետությունն ապահովելու նպատակով խաղաղ ժամանակաշրջանից պատերազմական պայմաններին երաշխավորված կերպով անցնելու համար անհրաժեշտ է.

- տնտեսության մոբիլիզացիոն ներուժի որակական աճի ապահովում, արտադրական բազայի և մոբիլիզացիոն գործունեության պահպանմանն ու հետագա զարգացմանն ուղղված միջոցառումների մշակում և իրականացում,
- տնտեսության մոբիլիզացիոն պատրաստման և մոբիլիզացիոն պլանների իրագործման պետական կառավարման համակարգի կատարելագործում,
- տնտեսության մոբիլիզացիոն պատրաստման ֆինանսական ապահովման բարելավում, ներառյալ՝ այդ նպատակով հատկացված բյուջետային միջոցների ռացիոնալ և նպատակային օգտագործումը, պատերազմի ժամանակվա մոբիլիզացիոն առաջադրանքներ ունեցող կազմակերպությունների խրախուսման մեխանիզմների մշակում, ինչպես նաև արտաբյուջետային ֆինանսավորման աղբյուրների ներգրավում,
- տնտեսության մոբիլիզացիոն պատրաստման և մոբիլիզացման նորմատիվ իրավական բազայի կատարելագործում, այդ բնագավառի հանգուցային խնդիրների լուծման գործում արդի գիտական մոտեցումների կիրառում,
- տնտեսության մոբիլիզացիոն պատրաստման պետական վերահսկողության ուժեղացում՝ այդ բնագավառի տնտեսական կարգավորման և վարչական կառավարման մեթոդների արդյունավետ համադրմամբ:

¹ Տես «Հայաստանի Հանրապետության ռազմական դոկտրին»: ՀՀ Նախագահի 2007 թ. դեկտեմբերի 25-ի հմ. ՆՀ-308-Ն հրամանագիր: «ՀՀ պաշտոնական տեղեկագիր», 2008 թ., հմ. 1 (591), հոդ. 14, նաև՝ «Աշխատանքային տեսերթ», 2007, հմ. 4, էջ 47–50:

Հուլիս կարևոր խնդիր է ռազմական անվտանգության տնտեսական ապահովման սկզբունքների և խնդիրների իրագործմամբ կառավարման միասնական համակարգի հետևողական ձևավորումը:

Մեր կարծիքով՝ ռազմական անվտանգության տնտեսական ապահովման հիմնական սկզբունքներ պետք է լինեն.

- պետության ռազմական կազմակերպման ֆինանսական և նյութական ապահովման մակարդակի և պետության տնտեսական հնարավորությունների ու ռազմական անվտանգության իրական պահանջների առավելագույն համապատասխանությունը,

- շուկայական տնտեսության մեխանիզմների օգտագործմամբ ռազմատնտեսական գործընթացների կենտրոնացված պետական կառավարումը,

- ռազմական անվտանգության հանգուցային խնդիրների լուծման գործում ֆինանսական, նյութատեխնիկական և մտավոր ռեսուրսների համախմբումը, դրանց ռացիոնալ օգտագործումը,

- պետության ռազմական անվտանգության կարիքների համար մրցունակ և ներմուծումը փոխարինող, առավելապես երկակի նախանշանակման* տեխնոլոգիաների և արտադրության արագընթաց զարգացումը:

Ռազմական անվտանգության տնտեսական ապահովման հիմնական խնդիրներն են՝

- Հայաստանի Հանրապետության ռազմատնտեսական բնագավառը կարգավորող օրենսդրական դաշտի կատարելագործումը, երկրի ռազմական անվտանգության ապահովման խնդիրների լուծման գործում պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների, ինչպես նաև այլ պետական կազմակերպությունների գործառույթների հստակ տարաբաշխումը և համաձայնեցվածությունը,

- պետության սոցիալ-տնտեսական զարգացման մակրոտնտեսական կանխատեսման ցուցանիշների վրա հիմնված ծրագրային-նպատակային մեթոդների կիրառմամբ պետության ռազմական կարիքների պլանավորման, ֆինանսավորման և գնահատման համակարգի ձևավորումը,

- պետական մոբիլիզացիոն պատվերի համակարգի հնարավորությունների արդյունավետ օգտագործումը՝ շուկայական տնտեսության մեխանիզմների հաշվառմամբ,

- ի նպաստ ՀՀ ռազմական անվտանգության ապահովման խնդիրների լուծման՝ տնտեսության գիտատեխնիկական և արտադրական ներուժի ռացիոնալ օգտագործումը, հետագա կատարելագործումը և պետական աջակցությունը,

- կառավարման համակարգի պատրաստումը մոբիլիզացիոն շրջանում տնտեսության կայուն գործառույթի ապահովմանը,

- տնտեսության մոբիլիզացիոն պատրաստման պետական համակարգի կատարելագործումը,

* ՀՀ համապատասխան իրավական ակտերում լեզվական առումով սխալ կերպով կիրառվում է «նշանակություն» տերմինը: – *Խմբ.*

• պետական և մոբիլիզացիոն պահուստներում անհրաժեշտ ծավալով նյութական պաշարների կուտակումը, պահպանումը և թարմացումը:

Առկա իրավիճակի վերլուծությունը ցույց է տալիս, որ արդյունաբերության վերակառուցման և տնտեսական բարեփոխումների պայմաններում մոբիլիզացիոն պատրաստման համակարգի առավել խոցելի տարրերն են մոբիլիզացիոն հզորությունները և պահուստները: Ընդ որում, դրանք պահանջում են մեծ նյութական և ֆինանսական ծախսեր:

Դիտարկենք տնտեսության մոբիլիզացիոն պատրաստման կատարելագործման առավել կարևոր ուղղությունները:

Առաջինը համալիր ծրագրերի մշակումն ու իրականացումն է: Այսպես, միայն ծրագրային-նպատակային մոբիլիզացիոն պլանավորումը հնարավորություն կտա հստակորեն սահմանելու տնտեսությունը արդյունավետ կերպով ռազմական դրության ռեժիմի փոխադրելու համար կարևոր նպատակներն ու պայմանների ստեղծման ճանապարհները: Դա էլ իր հերթին հնարավորություն կտա ժամանակի և տարածության մեջ տեղայնացնելու և փոխկապելու սահմանված նպատակների իրագործման համար անհրաժեշտ միջոցառումները և պաշարները:

Պլանավորման տվյալ մեթոդը ենթադրում է մոբիլիզացիոն պատրաստման երկարաժամկետ և միջնաժամկետ ծրագրերի, սպառազինման ծրագրերի և ընթացիկ մատակարարման պլանների, ինչպես նաև զորահավաքային ու զինված ուժերի կիրառման պլանների ներդաշնակության և փոխադարձ կապի ապահովում:

Պետության մոբիլիզացիոն պատրաստման կատարելագործման մեկ այլ ուղղություն է կոնկրետ ժամանակահատվածում տնտեսության մոբիլիզացիոն պատրաստման միջոցառումների և զինված ուժերի զորահավաքային պատրաստման, մշակված սցենարներով դրանց ռազմավարական գործարկման ու կիրառման խնդիրների, հնարավոր պայմանների փոխկապվածության ապահովումը: Ընդ որում, տնտեսության մոբիլիզացիոն վերակառուցման մասշտաբներն ու հաջորդականությունը պետք է համապատասխանեն ժամանակակից պատերազմների բնույթին և ՀՀ Ձինված ուժերի առջև դրված խնդիրներին: ՌԻստի տնտեսության մոբիլիզացիոն պատրաստման խնդիրները լուծելիս անհրաժեշտ է հաշվի առնել ժամանակակից ռազմաքաղաքական իրավիճակի վերլուծության արդյունքները, ինչպես նաև հնարավոր ռազմական բախման բնույթը և չափերը:

Մոբիլիզացիոն պատրաստման համակարգի կատարելագործման պարտադիր պայման է տնտեսության և դրա ենթակառուցվածքի մոբիլիզացիոն ներուժի ռացիոնալ, հավասարակշռված զարգացումը՝ պետության ռազմական անվտանգության ապահովման պահանջի և ռազմական արդյունաբերության կերպափոխման ծրագրերի հաշվառմամբ:

Ներկայիս պայմաններում տնտեսության մոբիլիզացիոն ներուժի անհրաժեշտ մակարդակի պահպանման ու զարգացման համար հարկ է հաշվի առնել այն բոլոր գործոնների և սահմանափակումների համակարգային վերլուծության արդյունքները, որոնք պայմանավորված են աշխարհաքաղաքական բնույթի փոփո-

խություններով, քաղաքական և տնտեսական համակարգերի արմատական կերպարվածություններով, ինչպես նաև Հայաստանի ռազմական քաղաքականության և անվտանգության ասպարեզում նոր մոտեցումներով, որոնք արտացոլված են ՀՀ «Ռազմական դոկտրինի» հիմնական դրույթներում:

Հայաստանի տնտեսության մոբիլիզացիոն պատրաստման կարևորագույն ուղղություններից է մոբիլիզացիոն ներուժի պահպանման ոչ ավանդական եղանակների որոնումը՝ մոբիլիզացիոն պատրաստման վրա կատարվող բյուջետային ծախսերի կրճատման նպատակով: Դրան կարելի է հասնել գործող արտադրության մեջ առկա մոբիլիզացիոն նախանշանակման հիմնական ֆոնդերի ռացիոնալ օգտագործմամբ, «երկակի» նախանշանակման հիմնական սարքավորանքի արդիականացմամբ, առավել արդիական և գործածության լայն շրջան ունեցող արտադրական միջոցների կիրառմամբ, ռազմական նախանշանակման տեխնոլոգիաների պահպանման ու կատարելագործման նպատակով գիտաարտադրական կենտրոնների ստեղծմամբ և այլ ճանապարհով:

Մոբիլիզացիոն պատրաստման համակարգի կատարելագործման պարտադիր գործոն է պատերազմական դրության ժամանակ կարևոր քաղաքացիական (սպառողական) նախանշանակմամբ ապրանքների արտադրության կայունության ապահովումը, այսինքն՝ կրկնօրինակված և ըստ տարածաշրջանների բաշխված համապատասխան արտադրության կազմակերպումը՝ քաղաքացիական բնակչության պահանջումների հաշվառմամբ:

Հարկ է նշել, որ տնտեսական օբյեկտների վրա թշնամու ռազմական ներգործությունից հետո տնտեսական կայունության ապահովմանը կարելի է հասնել շնորհիվ վաղօրոք ձեռնարկված միջոցառումների՝ ուղղված կորուստների նվազեցմանը, փլուզումների կանխմանը, արդյունավետ վերականգնողական աշխատանքների համար պայմանների ստեղծմանը:

Ռազմական դրության պայմաններում տնտեսության ճյուղերի անխափան գործունեության ապահովումը կարող է կատարվել տարբեր ճանապարհներով: Դրանցից կարևորագույնն է ռազմական և հանրային սպառման կարևոր արտադրատեսակների թողարկման կրկնօրինակումն ու պահուստավորումը: Ուստի անհրաժեշտ է վաղօրոք ստեղծել պահուստային հզորություններ, որոնք ապահովված լինեն համապատասխան նյութերով կամ համակցող արտադրանք թողարկելու կարողություններով: Պատերազմական պայմաններում կարևորագույն ապրանքների արտադրության պահուստավորման տարբերակների նախօրոք մշակումը կհեշտացնի պահպանված ձեռնարկությունների հիման վրա նոր արտադրական կոդպերացիաների կազմակերպումը:

Պետության մոբիլիզացիոն պատրաստման համակարգի կատարելագործման պարտադիր պայմաններից է նաև մոբիլիզացիոն առաջադրանք ունեցող կազմակերպություններին պետական աջակցության մեխանիզմների մշակումը՝ անկախ այդ կազմակերպությունների տնտեսական կարգավորման և սեփականության ձևերից: Անհրաժեշտ է սահմանել առաջադրանքների գերակայություն-

ներ՝ հաշվի առնելով շահավետությունը և այդ առաջադրանքների կատարմանը ձեռնարկությունների մասնակցության կամավորության սկզբունքը՝ հիմնված ապագայում պետության կողմից լիարժեք փոխհատուցման սկզբունքի վրա:

Ձեռնարկությունների պետական աջակցության և մոբիլիզացիոն պատրաստման խթանման և ուղղորդման խնդիրներն ու նպատակները, մեխանիզմներն ու դրանց կիրառման մեթոդները տարբեր են:

Այսպես, պետական աջակցությունը նպատակ ունի նոր և բարդ տնտեսական պայմաններում պահպանելու կարևոր ձեռնարկությունները: Պետական աջակցության առավել փորձված եղանակներն ու ձևերն են՝ մոբիլիզացիոն պատրաստման ուղղությամբ իրականացվող միջոցառումների ընթացքում ձեռնարկությունների կատարած ծախսումների ուղղակի փոխհատուցումը պետական բյուջեի միջոցներից, հարկային արտոնությունների և արտոնյալ վարկերի տրամադրումը, ռազմական նախանշանակման արտադրության խթանման, բազմազանեցման (դիվերսիֆիկացման) և վերակազմակերպման միջոցով ձեռնարկությունների ֆինանսատնտեսական վիճակի ամրապնդումը, մոբիլիզացիոն առաջադրանքների կատարման համար նախատեսված արտադրական հզորությունների վերակառուցման և զարգացման հետ կապված կապիտալ, այդ թվում՝ ոչ պետական, ներդրումների խրախուսումը և այլն:

Պետության մոբիլիզացիոն պատրաստման համակարգի կատարելագործման պարտադիր պայմաններից է նաև մոբիլիզացիոն առաջադրանք ունեցող կազմակերպությունների արտադրական գործունեության նյութատեխնիկական ապահովման համակարգի ներդրումը՝ նոր տնտեսական հարաբերությունների ու կազմակերպական կառուցվածքների հաշվառմամբ:

Այսպիսով՝ որակական նոր մակարդակում տնտեսության մոբիլիզացիոն պատրաստման համակարգի կատարելագործումն ու կայուն զարգացումը պետք է կատարվեն մոբիլիզացիոն պատրաստման համալիր և փոխկապված ծրագրերի հիման վրա:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. «Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության ռազմավարություն»: «Հայկական բանակ» ռազմագիտական հանդեսի հատուկ թողարկում, 2007:
2. *А. Е. Пайгуев*. Основы мобилизационной экономики. М., 1990 г.
3. *М. А. Бендииков*. Экономическая безопасность промышленного предприятия в условиях кризисного развития. «Менеджмент в России и за рубежом», 2000 г., № 2.
4. *В. И. Останков*. Военная экономика и мобилизационная подготовка в РФ. Государственный университет – высшая школа экономики (http://vorona.hse.ru/sites/infospace/podrazd/facul/facul_gosmunupravl/kms/DocLib3/Программа%20-%20мобподготовка%20уточненная.doc).

НЕКОТОРЫЕ ПРОБЛЕМЫ УСОВЕРШЕНСТВОВАНИЯ СИСТЕМЫ МОБИЛИЗАЦИОННОЙ ПОДГОТОВКИ ЭКОНОМИКИ РА

*А. Р. ГЕВОРКЯН, Главный советник Министра экономики РА,
член-эксперт Межведомственной комиссии по разработке СНБ РА*

РЕЗЮМЕ

Мобилизационная подготовка экономики Республики Армения является важнейшей государственной задачей по укреплению ее обороноспособности.

По мнению автора основным средством мобилизационной подготовки экономики Республики Армения является проведение комплекса спланированных мероприятий, направленных на обеспечение устойчивого функционирования экономики государства и ее готовности к выполнению установленных мобилизационных заданий, обеспечение системы военной безопасности соответствующими материальными и финансовыми ресурсами.

В целях повышения эффективности мобилизационной подготовки экономики Армении, отвечающей военно-политическим и экономическим условиям, складывающимся в государстве и в регионе, и обеспечивающей гарантированный перевод с мирного на военное время, предлагается ряд организационных мер экономического характера по повышению эффективности системы обеспечения военной безопасности.

SOME PROBLEMS OF IMPROVING THE SYSTEM OF PREPAREDNESS ACTIVITY OF THE RA ECONOMY

*A. R. GEVORKYAN, Chief Adviser to the Minister of Economy of the RA,
Member Expert of the Interagency Commission on elaborating the NSS, RA*

SUMMARY

The preparedness activity of economy of the Republic of Armenia is the state's most important task on strengthening its defense capability.

To the author's mind the main means of preparedness activity of economy of the Republic of Armenia is conducting a complex of planned measures aimed at ensuring stable functioning of state economy and its commitment to the set mobilization tasks, and at providing the system of military security with corresponding material and financial resources.

A number of organizational measures of economic character on increasing the efficiency of the system ensuring military security is proposed for enhancing the efficiency of preparedness activity of Armenia's economy meeting the military-political and economic conditions being formed in the state and in the region, and ensuring the guaranteed transfer from peace to war time.

ՎԵՐԱԿԱՆԳՆՎՈՂ ԷՆԵՐԳԵՏԻԿԱՅԻ ԶԱՐԳԱՅՈՒՄԸ՝
ՈՐՊԵՍ ՀՀ ԷՆԵՐԳԵՏԻԿ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ
ԵՎ ՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒՆԱԿՈՒԹՅԱՆ
ԱՄՐԱՊՆԴՄԱՆ ԵՐԱՇԽԻՔՆԵՐԻՑ ՄԵԿԸ

*Ա. Ա. ԳԱԼՍՅԱՆ, ՀՀ էներգետիկայի և բնական պաշարների նախարարի
փոխակալ, ՀՀ ԱԱՈ-ի մշակման միջգերատեսչական հանձնաժողովի
անդամ-փորձագետ, փեխնիկական գիտությունների թեկնածու, դոցենտ*



Անցյալ դարի իննսունական թվականներին Հայաստանի համար մեծ դժվարություններ ստեղծեցին վառելիքային մատակարարումների կրկնվող ընդհատումները կամ դրանց սպառնալիքը: Անկախ իրենց պատճառներից՝ դրանք լուրջ սպառնալիք էին ինչպես Հայաստանի էներգետիկ ապահովվածության, այնպես էլ տնտեսական անվտանգության ու պաշտպանունակության համար: Հայաստանի կայուն զարգացումն անհնար է առանց տնտեսական գործունեությամբ զբաղվող և հանրությանն սպասարկող ոլորտների ան-

վտանգ էներգամատակարարման, հետևաբար էներգետիկ ռազմավարության անկյունաքարը պետք է կազմեն այն միջոցառումները, որոնք նպատակ ունեն նվազեցնելու երկրի կախվածությունը մնան հանգամանքներից:

Էներգետիկ անվտանգության ապահովման կարևորագույն միջոց է էներգառեսուրսների մատակարարման բազմազանեցումը ինչպես էներգիայի տեսակներով, այնպես էլ աղբյուրներով, իսկ սեփական վերականգնվող էներգապաշարների յուրացումը նվազեցնում է կախվածությունը ներկրվող վառելիքից և դրանով իսկ բարձրացնում է էներգետիկ անվտանգության մակարդակը:

ԱՄՆ-ը և Եվրամիությունը 2007–2008 թթ. պարտավորություն էին ստանձնել 2020–2030 թթ. 20-30 %-ով կրճատելու CO₂-ի արտանետումները վերականգնվող էներգետիկայի օգտագործման և էներգախնայողության շնորհիվ:

G8-G20 գագաթնաժողովը (Իտալիա, 2009 թ. հուլիս) հայտարարեց ջերմոցային գազերի արտանետումների կրճատման ուղղությամբ նոր՝ աննախադեպ պարտավորությունների մասին: Այն է՝ արտանետումների ծավալը 1990 թ. համեմատությամբ կրճատել 50 %-ով՝ լայնորեն կիրառելով նաև կենսավառելիքի ստացման և զանգվածային օգտագործման նոր տեխնոլոգիաներ:

Վերոնշյալից հետևում է, որ վերականգնվող էներգետիկայի զարգացումն ամբողջ աշխարհում ընդունվում է որպես ռազմավարական առաջնային ուղղություններից մեկը: Հանրապետության վառելիքաէներգետիկ հաշվեկշռում գերակշռում է ներկրվող ածխաջրածնային էներգապաշարների մասնաբաժինը, ուստի անհրաժեշտ է վերականգնվող էներգետիկայի ոլորտը Հայաստանի Հանրապետու-

թյան համար հայտարարել զարգացման կարևորագույն ուղղություններից մեկը:

ՀՀ Էներգետիկայի ոլորտը կարգավորող իրավական փաստաթղթերից են՝

- «Էներգետիկայի մասին» ՀՀ օրենքը¹,

- «Էներգախնայողության և վերականգնվող էներգետիկայի մասին» ՀՀ օրենքը²,

- «Հայաստանի Հանրապետության տնտեսության զարգացման համատեքստում էներգետիկայի բնագավառի զարգացման ռազմավարությունը», որի 2.5 կետում արձանագրված է. «ԻԷԱ անդամ երկրների կողմից ընդունված հայտարարությունում, մասնավորապես, ասվում է. «Կայուն զարգացումն անհնար է առանց տնտեսական գործունեությամբ զբաղվող և հանրությանը սպասարկող ոլորտների անվտանգ էներգամատակարարման,

էներգետիկ անվտանգության բարձրացման կարևորագույն միջոց է հանդիսանում էներգամատակարարման և բաշխման բազմազանեցումը ինչպես էներգիայի տեսակներով, այնպես էլ աղբյուրներով: Վերականգնվող էներգապաշարների յուրացումը նվազեցնում է ներկրվող վառելիքից կախվածությունը և բարձրացնում էներգետիկ անվտանգության մակարդակը»»³,

- «Հայաստանի Հանրապետության էներգախնայողության և վերականգնվող էներգետիկայի ազգային ծրագիրը»⁴,

- «Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության ռազմավարության դրույթներով նախատեսված՝ Հայաստանի Հանրապետության էներգետիկայի նախարարության գործունեության ծրագիրը»⁵:

Համաձայն վերոհիշյալ ռազմավարական փաստաթղթերի՝ Հայաստանի էներգետիկայի զարգացման գերակա ուղղություններն են.

- ատոմային էներգետիկան,

- տարածաշրջանային համագործակցությունը և ինտեգրումը,

- առաջնային էներգիայի աղբյուրների և ներկրման ուղիների բազմազանեցումը (տարատեսականացումը),

- վերականգնվող էներգիայի աղբյուրների լրիվ և արդյունավետ օգտագործումը և էներգախնայողությունը:

Վերականգնվող էներգետիկ պաշարներից Հայաստանում առավելագույնս

¹ Տես «Էներգետիկայի մասին» 2001 թ. մարտի 7-ի ՀՕ-148 ՀՀ օրենքը («ՀՀ պաշտոնական տեղեկագիր», 2001 թ., հմ. 10 (142)):

² Տես «Էներգախնայողության և վերականգնվող էներգետիկայի մասին» 2004 թ. նոյեմբերի 9-ի ՀՕ-122-Ն ՀՀ օրենքը («ՀՀ պաշտոնական տեղեկագիր», 2004 թ. հմ. 67 (366)):

³ Տես «Հայաստանի Հանրապետության տնտեսության զարգացման համատեքստում էներգետիկայի բնագավառի զարգացման ռազմավարությունը» (http://www.minenergy.am/politic_php):

⁴ Տես «Հայաստանի Հանրապետության էներգախնայողության և վերականգնվող էներգետիկայի ազգային ծրագիր» (<http://www.minenergy.am/files/level1/sajt.doc>):

⁵ Տես ՀՀ Կառավարության 2007 թ. նոյեմբերի 1-ի «Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության ռազմավարության դրույթներով նախատեսված Հայաստանի Հանրապետության էներգետիկայի նախարարության գործունեության ծրագիրը հաստատելու մասին» հմ. 1296-Ն որոշումը («ՀՀ պաշտոնական տեղեկագիր», 2007 թ., հմ. 58 (582)):

յուրացված են **հիդրոպաշարները**: Դրանք ապահովում են հանրապետության էլեկտրաէներգիայի պահանջարկի մոտ 30 %-ը (2008 թ.):

Ներկայումս իրացվող հիդրոներուժը ներկայացված է գոյություն ունեցող խոշոր հիդրոէլեկտրակայանների երկու համալիրներով՝ Սևան-Հրազդանի ու Որոտանի ՀԷԿ-երով, ինչպես նաև Չորագետի ՀԷԿ-ով: 2009 թվականի հունվարի 1-ի դրությամբ էլեկտրաէներգիա են արտադրում 70 փոքր, այդ թվում նաև մերձպատվարային, ՀԷԿ-եր, որոնց գումարային դրվածքային հզորությունը կազմում է մոտ 89 ՄՎտ, իսկ էլեկտրաէներգիայի առաքումը՝ շուրջ 278 մլն կՎտ.ժ:

Չեն օգտագործվում Դեբեդ (Չորագետ վտակով) և Արաքս գետերի հիդրոներուժը, ինչպես նաև փոքր հիդրոէներգետիկայի զարգացման սխեմայով նախատեսված 115 փոքր ՀԷԿ-եր (մոտ 147 ՄՎտ գումարային դրվածքային հզորությամբ և 540 մլն կՎտ.ժ տարեկան գումարային արտադրանքով):

Նախատեսվում է կառուցել.

– Արաքս գետի վրա՝ Մեղրու ՀԷԿ-ը (մոտ 140 ՄՎտ հզորությամբ և 800 մլն կՎտ.ժ տարեկան արտադրությամբ): Հիդրոէլեկտրակայանի կառուցման ծրագիրը իրականացվում է Իրանի Իսլամական Հանրապետության հետ համատեղ,

– Դեբեդ գետի վրա՝ Շնողի ՀԷԿ-ը (մոտ 75 ՄՎտ հզորությամբ և 300 մլն կՎտ.ժ տարեկան արտադրությամբ),

– Չորագետի վրա՝ Լոռիբերդի ՀԷԿ-ը (մոտ 66 ՄՎտ հզորությամբ և 200 մլն կՎտ.ժ տարեկան արտադրությամբ):

Ներկայումս ՀՀ էներգետիկայի և բնական պաշարների նախարարությունը Համաշխարհային բանկի հետ բանակցություններ է վարում նրա օժանդակությամբ Լոռիբերդի ՀԷԿ-ի կառուցման վերաբերյալ:

Սինչև 2009 թվականի հունվարի 1-ը կառուցման լիցենզիաներ են ստացել 64 փոքր ՀԷԿ-եր, որոնց գումարային դրվածքային հզորությունը կազմում է մոտ 152 ՄՎտ, իսկ նախատեսվող միջին տարեկան արտադրանքը՝ 548 մլն կՎտ.ժ: Փոքր ՀԷԿ-երի կառուցման համար արտոնյալ վարկերի տրամադրման գործում մեծ դեր ունեն Գերմանա-հայկական հիմնադրամը և Հայաստանի «Վերականգնվող էներգետիկայի և էներգախնայողության հիմնադրամը»:

Երեք նոր խոշոր ՀԷԿ-երի, ինչպես նաև փոքր ՀԷԿ-երի կառուցմամբ կապահովվի ուսումնասիրված և տնտեսապես հիմնավորված հիդրոներուժի ամբողջական իրացումը:

Հայաստանն ունի հողմային էներգիայի զգալի պաշարներ, որոնց տնտեսապես հիմնավորված ներուժը գնահատվում է մոտ 1,26 մլրդ կՎտ.ժ:

2005 թվականի դեկտեմբերին Իրանի Իսլամական Հանրապետության կողմից տրամադրված դրամաշնորհով Պուշկինի լեռնանցքում կառուցվեց և շահագործման հանձնվեց Հայաստանում, ինչպես նաև Կովկասում առաջին հողմաէլեկտրակայանը՝ 2,6 ՄՎտ ընդհանուր հզորությամբ: Ըստ տեղանքի հետազոտման արդյունքների՝ այստեղ հնարավոր է կառուցել 20 ՄՎտ ընդհանուր հզորությամբ հողմաէլեկտրակայան:

Եվրամիության «ՏԱՄԻՍ» («Օժանդակություն Հայաստանի էներգետիկ քաղաքականությանը») ծրագրի շրջանակներում Սևանի Սեմյոնովկա լեռնանցքում կատարվել է մշտազննում և կազմվել է տեխնիկատնտեսական հիմնավորում 34 ՄՎտ գումարային դրվածքային հզորությամբ հողմաէլեկտրակայանի կառուցման համար:

Գերմանական ԿՖՎ բանկի օժանդակությամբ գերմանական ԴԵԿՈՆ ընկերության կողմից Կոտայքի մարզում կատարվելու է 50-75 ՄՎտ գումարային դրվածքային հզորությամբ հողմաէլեկտրակայանի կառուցման համար անհրաժեշտ քանու ներուժի մշտազննում, որի տվյալներով պատրաստվելու է համապատասխան տեխնիկատնտեսական հիմնավորում:

Իտալական մասնավոր ընկերությունն ավարտել է Շիրակի մարզի Քարախաչ լեռնանցքի տարածքի հողմաէներգետիկ ներուժի գնահատման մշտազննական աշխատանքը: Նախատեսվում է ներդրում կատարել մինչև 90 ՄՎտ գումարային դրվածքային հզորությամբ «Քարախաչ 1» հողմաէլեկտրակայանի կառուցման նպատակով:

Հայ-ամերիկյան համատեղ մասնավոր կազմակերպությունն ավարտել է Գեղարքունիքի մարզի Սոտքի լեռնանցքի տարածքում հողմաէներգետիկ ներուժի գնահատման մշտազննական աշխատանքը: «Ձող ՈՒԻնդ» ընկերությունը տարբեր կազմակերպությունների հետ բանակցություններ է վարում 20 ՄՎտ գումարային դրվածքային հզորությամբ «Ձող» հողմաէլեկտրակայանի կառուցման նպատակով ներդրումներ ներգրավելու հարցով:

Հայաստանն ունի **արևային էներգիայի** մեծ ներուժ: 1 մ² հորիզոնական մակերևույթի վրա արևային էներգիայի միջին տարեկան հոսքը 1720 կՎտ·ժ է (Եվրոպայում՝ 1000 կՎտ·ժ/մ²), իսկ հանրապետության տարածքի մեկ քառորդն օժտված է տարեկան 1850 կՎտ·ժ/մ² ինտենսիվությամբ արևային էներգիայի պաշարներով: Արևային էներգետիկայի զարգացումը խթանելու նպատակով Հայաստանի «Վերականգնվող էներգետիկայի և էներգախնայողության հիմնադրամը» Համաշխարհային բանկի և Համաշխարհային բնապահպանական հաստատության դրամաշնորհի միջոցով իրականացրել է «Հայաստանում արդի արեգակնային ֆոտովոլտայիկ էներգետիկայի զարգացմանն օժանդակում» ծրագիրը: Ծրագրի շրջանակներում ուսումնասիրվել են Հայաստանում ֆոտոէլեկտրական արդյունաբերության ներուժի զարգացման հնարավորությունները: Ծրագրի ֆինանսատնտեսական արդյունքները հաստատեցին այն եզրակացությունը, որ ինչպես ամբողջ աշխարհում, այնպես էլ Հայաստանում այդ ոլորտի զարգացումը խիստ կարիք ունի պետական աջակցության, եթե հաշվի առնվեն միավոր էլեկտրական էներգիայի ստացման համար պահանջվող ծախսերը և ողջամիտ շահույթի մեծությունը, որն արտահայտվում է շուրջ 50 ԱՄՆ-ի ցենտ/կՎտ·ժ սակագնով:

Երկրաջերմային էլեկտրակայան կառուցելու նպատակով սկսվել է երկրաջերմային էներգիայի աղբյուրների ճշգրիտ տեղը որոշելու աշխատանքը: Դրանցից մեկը Ջերմաղբյուրն է, որի երկրաֆիզիկական հետազոտությունները

հնարավորություն են տալիս ենթադրելու, որ մոտ 2500-3000 մետր խորության վրա կան բարձր ճնշմամբ (20-25 մթն. ճնշ.) տաք ջրի (մինչև 250° C) պաշարներ: Նշված վայրում հնարավոր կլինի կառուցել Հայաստանում առաջին երկրաջերմա-էլեկտրակայանը՝ մոտ 25 ՄՎտ հզորությամբ: Նախատեսվում է 2009–2010 թվականներին մասնավոր ներդրողի ուժերով սկսել հորատման աշխատանքը:

Հայաստանի Հանրապետությունը Վերակառուցման ու զարգացման միջազգային բանկի աջակցությամբ նախատեսում է «Գրիժոր» և «Քարքար» կոչվող երկու հարթակներում իրականացնել համապատասխան երկրաբանական և երկրաֆիզիկական հետազոտություններ 1,5 մլն ԱՄՆ-ի դոլար արժողությամբ երկրաջերմային ծրագրերի իրականացման համար: Այդ հետազոտությունների դրական արդյունքի դեպքում հնարավոր կլինի սկսել հորատման աշխատանքը:

Կենսազազի ստացման ներուժը Հայաստանում գնահատվում է տարեկան շուրջ 135 մլն մ³: Համաշխարհային բանկի տեխնիկական աջակցությամբ Հայաստանի «Վերականգնվող էներգետիկայի և էներգախնայողության հիմնադրամն» իրականացրել է «Հայաստանում կենսաէթանոլի արտադրության և յուրացման ներուժի և հեռանկարայնության գնահատում» ծրագիրը, որի արդյունքներով պատրաստվել է տեխնիկատնտեսական հիմնավորում՝ Հայաստանում կենսաէթանոլի արտադրություն կազմակերպելու համար: Համապատասխան ներդրումների ներգրավման ուղղությամբ ուսումնասիրությունները շարունակվում են:

Եզրակացություն

Նշված ծրագրերի իրականացումը հնարավորություն կտա սեփական վերականգնվող էներգապաշարների հաշվին 2025 թ. բավարարելու էլեկտրաէներգիայի պահանջարկի մինչև 30 %-ը (ներառված չէ երկրաջերմային էներգիայի, արևային էներգիայի անմիջական փոխակերպման և կենսազազի հիման վրա արտադրվելիք էլեկտրաէներգիան), ինչպես նաև նվազեցնելու հանրապետության կախումը ներկրվող ածխաջրածնային վառելիքաէներգետիկ պաշարներից:

РАЗВИТИЕ ВОЗОБНОВЛЯЕМОЙ ЭНЕРГЕТИКИ КАК ОДНА ИЗ ГАРАНТИЙ ОБЕСПЕЧЕНИЯ ЭНЕРГЕТИЧЕСКОЙ БЕЗОПАСНОСТИ РА И УКРЕПЛЕНИЯ ОБОРОНОСПОСОБНОСТИ ГОСУДАРСТВА

A. A. ГАЛСТЯН, заместитель Министра энергетики и природных ресурсов РА,
член-эксперт Межведомственной комиссии по разработке СНБ РА,
кандидат технических наук, доцент

РЕЗЮМЕ

Важным аспектом обеспечения безопасности государства, в том числе его оборонной составляющей, является уменьшение зависимости от импорта энергоносителей. Исходя из факта отсутствия в стране углеводородных энергоносителей, Республика Армения с учетом мирового опыта взяла

курс на диверсификацию как источников энергоносителей, так и их видов. В связи с этим в РА при финансовой и технической поддержке зарубежных организаций осуществляется плановое развитие возобновляемой энергетики, включая гидро-, солнечную, ветряную, геотермальную.

THE DEVELOPMENT OF RENEWABLE ENERGY
AS ONE OF THE GUARANTEES OF ENSURING
THE RA ENERGY SECURITY
AND STRENGTHENING THE STATE'S DEFENSE CAPABILITY

*A. A. GALSTYAN, Deputy Minister of Energy and Natural Resources of the RA,
Member Expert of the Interagency Commission on elaborating the RA NSS,
Candidate of Technical Sciences, Docent*

SUMMARY

An important aspect of ensuring state security, including its defense component, is the reduction of dependence on importing Primary energy resources. Proceeding from the fact of the lack of hydrocarbon energy in the country the Republic of Armenia, taking into account the world experience, took the course on diversification of both energy sources and their kinds. In these terms the planned development of renewable energy, including hydro-, solar, wind, geothermal one, is carried out with the financial and technical support of foreign organizations.

ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆԸ ՊԵՏՈՒԹՅԱՆ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ՊԱՏՐԱՍՏՄԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Ա. Մ. ԴԱՎԹՅԱՆ, գնդապետ, ՀՀ ՁՈՒ-ի ԳՇ Օպերատիվ վարչության պետ



Մարդկային ռեսուրսները պայմանավորում են պետությունների տնտեսական ու ռազմական հզորությունը, քաղաքական ու ռազմաքաղաքական ուղեգծերի առանձնահատկությունները՝ ներառելով զինվորական ծառայության ու հասարակական արտադրության ոլորտներում զբաղված բնակչությունը և այն մարդկային թվակազմը, որը կարող է օգտագործվել պաշտպանության ու տնտեսության կարիքների համար: Ձինված ուժերի և տնտեսության միջև մարդկային ռեսուրսների օպտիմալ բաշխման ապահովումը, որակական պատրաստությունը և խաղաղ ու պատերազմական պայմաններում արդյունավետ օգտագործումը եղել և մնում են պետության՝ անվտանգության ապահովմանն ուղղված գործունեության հանգուցակետերը:

Բնակչության ընդհանուր մշակույթի մակարդակն ու բարոյահոգեբանական վիճակը գիտության ու տեխնիկայի զարգացման և աշխատանքի արտադրողականության բարձրացման կարևոր գործոններից են: Աշխատանքային ռեսուրսների վիճակն ազդում է տեխնիկական առաջընթացի, ամենակարճ ժամկետներում նորագույն տեսակների սպառազինության ու ռազմական տեխնիկայի արտադրությունը յուրացնելու և շահագործելու ունակության վրա: Մարդկային ռեսուրսների վիճակը ազդում է նաև զորքերի բարոյական ոգու, նրանց զորահավաքային ծավալման ժամկետների և մարտական գործողություններ վարելու պատրաստության վրա:

1. Պաշտպանությանը պետության բնակչության պատրաստման նպատակները և խնդիրները

Պաշտպանությանը բնակչության պատրաստումը այնպիսի միջոցառումների համալիր է, որոնք իրականացնում է պետությունը՝ խաղաղ և պատերազմական ժամանակ անձնակազմով ՁՈՒ-ի համալրման, դրանց զորահավաքային ծավալման ու որակյալ կադրերով ապահովման, ինչպես նաև Քաղաքացիական պաշտպանությունը ձևավորելու և պետության այլ կարիքները բավարարելու համար պատրաստված կադրերի թվակազմի ստեղծման նպատակով:

Պատերազմին մարդկային ռեսուրսների պատրաստման հարցի պատեհաժամ և որակյալ լուծման հիմնական խնդիրներն են. զորքերի համալրման համար անձնակազմի քանակական և որակական բնութագրերի գիտականոթեն հիմնավորված որոշումը, տնտեսության պաշտպանական ճյուղերի և Քաղաքացիական պաշտպանության գործունեության հիմունքների մշակումը, հնարավոր կորուստները լրացնելու և ուժերի աճումն ապահովելու նպատակով մարդկային

ռեսուրսների պատրաստումը, պատերազմի ժամանակ բնակչության լրացուցիչ ներգրավումը կազմակերպված հասարակական աշխատանքում, մարդկային ռեսուրսների որակյալ գորահավաքային պլանավորման ապահովումը՝ արտադրողական ուժերի հեռանկարային զարգացման և տեղաբաշխման հաշվառմամբ:

2. Պաշտպանությանը բնակչության պատրաստման հիմնական սկզբունքները

Բնակչության պատրաստումը պաշտպանությանը պետության պատրաստման անկապտելի մասն է, ուստի վերջինիս կազմակերպման հիմնական սկզբունքները կիրառելի են նաև բնակչության պատրաստման դեպքում: *Դրանք են՝*

– *գիտականությունը*. այս ոլորտում ընդունվող պետական որոշումները պետք է լինեն գիտականորեն հիմնավորված ու կշռադատված,

– *զարգացումը*. պատրաստման տեսությունն ու պրակտիկան ենթակա են մշտական կատարելագործման,

– *կոնկրետությունը*. անհրաժեշտ է մշտապես հաշվի առնել պատրաստման տեսության ու պրակտիկայի ռեալ վիճակը,

– *պատմական հաջորդայնությունը*. անհրաժեշտ է պարզել պատրաստման նախապատմությունը, վիճակը և զարգացման միտումները, առանձնացնել հանգուցային պրոբլեմներն ու նշել դրանց լուծման ուղիները,

– *ամբողջականությունն ու համալիրությունը*. դրանցով բացառվում է պատրաստման հիմնական ուղղությունների որոշման նկատմամբ օգտապաշտական (ուտիլիտար) մոտեցումը, հնարավորություն է ստեղծվում տարբեր (քաղաքական, տնտեսական, ռազմական և այլ) ոլորտներում ծրագրված միջոցառումները համադասված ու փոխհամաձայնեցված կերպով իրականացնելու համար,

– *համապարասխանությունը*. պատրաստումը պետք է նպատակաուղղված լինի ոչ թե անցյալում եղած, այլ ապագա պատերազմներին, քաղաքական ու ռազմավարական նպատակները պետք է համապատասխանեն առկա ուժերին ու միջոցներին, ինչպես նաև պետության պաշտպանական քաղաքականությանն ու ռազմական դոկտրինի դրույթներին,

– *նկուն բազմադարձակ պլանավորումն ու միջոցառումների համադասվածությունը*. հնարավորություն է տալիս ռազմաքաղաքական ղեկավարությանն ապահովելու որոշումների կայացման ու գործողությունների ազատությամբ, կիրառելու համաձայնեցված պլաններ՝ ըստ ռազմաքաղաքական իրավիճակի զարգացման միտումների,

– *վաղորդությունը*. հնարավորություն է տալիս լիարժեք կերպով պատրաստվելու պաշտպանությանը:

3. Պաշտպանությանը պետության բնակչության պատրաստման համալարգի կատարելագործման հիմնական ուղղությունները

Ժամանակակից պատերազմում պատրաստված մարդկային ռեսուրսների առկայությունը մեծ ազդեցություն է գործում զինված ուժերի քանակական և որակական վիճակի, պատերազմի ընթացքի և ելքի վրա: Չինված ուժերի

կորուստների աճման հետևանքով մի պատերազմից մյուսը մեծանում է մարդկային ռեսուրսների պահանջարկը:

Պատերազմին բնակչությունը պատրաստելու խնդիրը քննարկելիս անհրաժեշտ է նկատի ունենալ դրա ոչ միայն քանակական, այլև որակական կողմը, այսինքն՝ մեծ թվով ուսուցանված մարդկանց պահանջարկը:

Այդ պատճառով առաջին պլան են մղվում հետևյալ հիմնական միջոցառումները՝ զինվորական պատրաստումը, բարոյահոգեբանական պատրաստումը, պատրաստումն ի շահ պատերազմի ժամանակ տնտեսության բնականոն գործունեության ապահովման, պատրաստումը Քաղաքացիական պաշտպանության և արտակարգ իրավիճակներից պաշտպանության բնագավառում:

Բնակչության պատրաստմանն ուղղված այս բոլոր միջոցառումները սերտորեն փոխկապված են և լրացնում են մեկը մյուսին:

3.1. Բնակչության զինվորական պատրաստումը: Բնակչության պատրաստումը զինվորական ծառայությանը պետք է համապատասխանի ժամանակակից պատերազմի պահանջներին: Միայն այդ դեպքում ռեզերվից զորակոչված թվակազմով համալրվող զորքերը կլինեն մարտունակ և կունենան կենդանի ուժի ու տեխնիկայի ավելի սակավ կորուստներ:

Բոլոր պետություններում զգալի ուշադրություն է հատկացվում զինծառայությանը բնակչության պատրաստման հարցերին: Պետությունների մեծ մասում դա արվում է պարտադիր և կամավոր հիմունքներով: Այս հարցը քննարկենք ԱՄՆ-ի, Մեծ Բրիտանիայի և Ռուսաստանի օրինակներով:

ԱՄՆ-ում, որը չունի զորակոչով զինվորական ծառայության համակարգ, ռազմաուսուցանված ռեզերվի պատրաստման համար ստեղծված են Ջինված ուժերի ռեզերվային բաղկացուցիչներ՝ ազգային զվարդիա և ՋՌԻ-ի տեսակների ռեզերվներ: Պահեստագործի սպաների պատրաստումը կատարվում է քաղաքացիական բուհերին կից գործող՝ պահեստագործի սպաների պատրաստման դասընթացներում, որոնք կազմակերպվում են ըստ ՋՌԻ-ի տեսակների:

Մեծ Բրիտանիայում Ջինված ուժերի զորահավաքային ծավալման հիմքն է մարդկանց զորահավաքային թվակազմը՝ բաղկացած ռազմաուսուցանված և չուսուցանված ռեզերվից: Պահեստագործայինների հաշվառման և նրանց հետ պարապմունքների կազմակերպման նպատակով ծավալված են զորահավաքային կետեր, որոնք ենթարկվում են զինվորական օկրուգների հրամանատարներին: Օկրուգների շտաբները պահեստագործայինների հետ կազմակերպում են ամենամյա հավաքներ (մինչև 12 օր): Բացի այդ, նրանք ներգրավվում են զորքերի օպերատիվ ու մարտական պատրաստման և վճարովի կամավոր պատրաստման աշխատանքներում: Ջգալի ուշադրություն է դարձվում երիտասարդության պատրաստմանը քաղաքացիական բուհերում: Դպրոցներում և քոլեջներում ստեղծված են կադետական կազմակերպություններ:

Ռուսաստանում նախատեսվում է զինծառայությանը քաղաքացու պարտադիր և կամավոր պատրաստում: Պարտադիր պատրաստմամբ նախատեսվում է՝

ռազմական ուղրտում գիտելիքների ձեռքբերում, պատրաստում զինծառայության հիմունքների գծով, ռազմահայրենասիրական դաստիարակություն, զինվորների, նավաստիների, սերժանտների և ավագների պատրաստում ըստ ռազմահաշվառումային մասնագիտությունների, բժշկական զննում և առողջարարական միջոցառումների կազմակերպում:

Զինվորական ծառայությանը կամավոր պատրաստումը ներառում է՝ սպորտի ռազմակիրառական ձևերով զբաղվելը, լրացուցիչ կրթական ծրագրերով ուսուցանումը միջին (լրիվ) ընդհանուր կրթության հաստատություններում, բարձրագույն մասնագիտական կրթության հաստատությունների ռազմագիտական ամբիոններում՝ ըստ պահեստագործի սպաների պատրաստման ծրագրերի:

Հայաստանում բնակչության զինվորական պատրաստման խնդիրը վերջին տասնամյակում հատուկ նշանակություն է ստացել: Դա բացատրվում է տարածաշրջանում առկա ռազմաքաղաքական իրադրությամբ, ծնելիության մակարդակի նվազմամբ և բնակչության արտագաղթով: Այս գործոնները հաշվի են առնվում պաշտպանությանը բնակչության պատրաստման միջոցառումների ծրագրման և անցկացման ժամանակ:

3.2. Բնակչության բարոյահոգեբանական պատրաստումը: Պետության պաշտպանական հզորության ամրապնդման գործում կարևոր դեր է խաղում հոգևոր ներուժը: Այն արտահայտվում է բարոյահոգեբանական հատկանիշների միջոցով, որոնք բնորոշում են պատերազմի ամենածանր փորձությունները հաղթահարելու և հակառակորդի նկատմամբ հաղթանակի հասնելու ժողովրդի ու բանակի հոգևոր պատրաստության աստիճանը:

Բնակչության բարոյահոգեբանական պատրաստումը համաձայնեցված հոգեբանամանկավարժական ներգործությունների համալիր է, որն իրականացնում են պետական իշխանության մարմինները՝ ժողովրդի մեջ հայրենասիրության զգացում, պարտքին հավատարիմ լինելու հատկություն, բարոյական վարքի նորմեր, Հայրենիքի զինված պաշտպանության անհրաժեշտության գիտակցում, հոգեբանական կայունություն և քաղաքացիական պարտականությունների անձնվեր կատարման պատրաստականություն ձևավորելու նպատակով:

Բարոյահոգեբանական պատրաստման նպատակներին կարելի է հասնել երկու ընդհանուր խնդիրների լուծմամբ.

– հայրենասեր քաղաքացու հատկություններով օժտված, հասարակության ու նրա զինված պաշտպանության հիմքերի ամրապնդում և կատարելագործում, ստեղծարար գործընթացին ակտիվորեն մասնակցելու ընդունակ անհատի ձևավորում և զարգացում,

– պատերազմին քաղաքացիների պատրաստության նպատակաուղղված ապահովում:

Բարոյահոգեբանական պատրաստման նպատակներին հասնելու միջոցներն են՝ ազգային ինքնագիտակցության և արժեհամակարգի ձևավորումը, օրենքի,

բարոյականության նորմերի նկատմամբ հարգանքի ձևավորումը, պետության անվտանգության համար սոցիալական ու քաղաքացիական պատասխանատվության զգացումի զարգացումը և այլն:

Բնակչության պատրաստման գործընթացը ենթադրում է համալիր ներգործություն անհատի հոգեկանի կառուցվածքային տարրերի (հատկություններ, կրթություն, վիճակ), բնակչության հոգեբանության (տրամադրություն, կարծիքներ, փոխհարաբերություններ, ավանդույթներ), անհատական և հասարակական (բարոյական, քաղաքական, գեղագիտական, իրավական, կրոնական և այլն) գիտակցության վրա: Այն պետք է իրականացվի հասարակական գիտակցության բոլոր մակարդակներում՝ գաղափարախոսության, քաղաքականության, իրավունքի, բարոյականության, մշակույթի, հոգեբանության բնագավառներում, և ընդգրկի բնակչության բոլոր խավերը:

Բնակչության բարոյահոգեբանական պատրաստումն իրականացվում է հասարակության կենսագործունեության տարբեր ոլորտներում՝ կուսակցությունների, հասարակական կազմակերպությունների, հայրենասիրական և ռազմահայրենասիրական ուղղվածությամբ շարժումների գործունեությանը քաղաքացիների մասնակցության, ՋԼՄ-ների, արվեստի, գրականության միջոցով:

Բարոյահոգեբանական պատրաստումը ենթադրում է պետական իշխանության մարմինների կառավարային գործունեության մի քանի առում.

– քաղաքացիների մեջ հայրենասիրության, բարոյական վարքի կանոնների ձևավորման և զարգացման համար սոցիալ-տնտեսական, իրավական ու քաղաքական բարենպաստ պայմանների ստեղծում,

– բարոյահոգեբանական պատրաստման տեսության և մեթոդաբանության մշակում,

– բարոյահոգեբանական պատրաստման գործընթացում հասարակական և կրոնական կազմակերպությունների, միությունների, կուսակցությունների և այլ կառույցների ներգրավում,

– լայնամասշտաբ հակազդեցություն օտար պետությունների՝ հոգեբանական պայքարի ուժերին և միջոցներին:

Պատմության դասերը ցույց են տալիս, որ բնակչության բարոյահոգեբանական պատրաստվածությունը որոշիչ ազդեցություն է գործում պատերազմի ընթացքի և ելքի վրա, պետության ռազմական ներուժի մի մասն է և հզորության կարևոր տարրը:

3.3. Բնակչության պատրաստումն ի շահ պատերազմի ժամանակ ռազմական փոփոխության անխափան գործունեության ապահովման: Ժամանակակից պատերազմները նոր պահանջներ են դնում պատերազմող պետությունների տնտեսության, հասարակական վերարտադրողականության նկատմամբ, առավելագույնս սրվում է մարդկային և նյութական ռեսուրսների, պաշտպանական նախանշանակմամբ արտադրությունը բարձր որակավորում ունեցող աշխատուժով ապահովելու հարցը:

Առանձնահատուկ նշանակություն է ստացել աշխատուժի ռեսուրսների խնդիրը, ինչը պայմանավորված է մի շարք գործոններով, որոնցից առաջին պլան են մղվում պատերազմի վարման համար անհրաժեշտ նյութական ռեսուրսների ծավալի աճումը, ժամանակակից սպառազինության և ռազմական տեխնիկայի արտադրության բարդացումը: Դա առաջ է բերում ոչ միայն ռազմաարդյունաբերության ոլորտում աշխատուժի թվաքանակի ավելացման, այլև աշխատուժի որակավորման մակարդակի բարձրացման անհրաժեշտություն: Աշխատողների կրթվածության մակարդակը էական ազդեցություն է գործում արտադրվող զինամթերքի քանակի ու որակի և արտադրության ծավալների աճման գլխավոր գործոնի՝ արտադրողականության մեծացման վրա:

Քանի որ տնտեսության ոլորտում զբաղված բարձր որակավորմամբ աշխատողների մի զգալի մասը պատերազմի ժամանակ զորակոչվելու է զինված ուժեր, ուստի և հսկայական ռազմական ու տնտեսական նշանակություն է ունենալու աշխատուժի ռեսուրսների ստեղծումն ի հաշիվ աշխատանքի արտադրողականության մակարդակի բարձրացման:

Պատերազմի ժամանակ երկրի տնտեսությունը նոր որակյալ կադրերով համալրելու համար հիմնական բազա են ընդհանուր և մասնագիտական կրթության հաստատությունները:

Որակյալ բանվորական և ինժեներատեխնիկական կադրերի պատրաստման խնդիրները լուծվում են վաղօրոք՝ խաղաղ ժամանակ, թեև պատերազմի ժամանակ էլ այդ գործընթացը պետք է շարունակվի:

Ժամանակակից պայմաններում գիտատեխնիկական առաջընթացի ազդեցությամբ դինամիկ կերպով փոփոխվում է աշխատուժի կառուցվածքը. աճում են մտավոր, ինժեներատեխնիկական աշխատանքի մասնաբաժինը, մասնագետների պատրաստման արժեքը: Ընդ որում, բարձր որակավորում պահանջող աշխատանքն ավելի մեծ չափով է կիրառվում ռազմական արտադրության ոլորտում, քան քաղաքացիական արտադրության մեջ:

Վերջին տասնամյակների տեղային պատերազմների փորձը ցույց է տալիս, որ մարդկային ռեսուրսների պատրաստումն ու օգտագործումը վճռորոշ ազդեցություն են գործում ռազմատնտեսական և զինված հակամարտության ելքի վրա: Պատրաստված մարդկային ռեսուրսները պետության ռազմատնտեսական ներուժի հիմքն են:

3.4. Բնակչության պատրաստումը Քաղաքացիական պաշտպանության և արդակարգ իրավիճակների ոլորտում: Ներկայումս մեծ պահանջներ են ներկայացվում Քաղաքացիական պաշտպանությանը (ՔՊ), արտակարգ իրավիճակներում (ԱԻ) գործելու բնակչության կարողությանը: Երկրի ցանկացած շրջանում գտնվող արդյունաբերական և վարչական կենտրոնների, հաղորդակցության ուղիների և այլ տնտեսական օբյեկտների վրա հզոր զինված ներգործության հնարավորությունը անցյալի համեմատությամբ էապես աճել է: Այս պայմաններում հուսալի ՔՊ-ն դառնում է պետության պաշտպանական հզորության կարևոր

գործոն: Պատերազմի ժամանակ, հատկապես՝ զանգվածային ոչնչացման զենքի կիրառման դեպքում, դրա հաջող գործառնումն ապահովելու համար պետք է ներգրավել զգալի մարդկային ներուժ, որն անհրաժեշտ է ինչպես ԶՊ ուժերը համալրելու, այնպես էլ ոչ ռազմականացված տարածքային և օբյեկտային կազմավորումներ ստեղծելու համար: Այսպես. երկրորդ համաշխարհային պատերազմի տարիներին Անգլիայում ԶՊ և հրշեջ ծառայության համակարգում աշխատելու համար գորակոչվել էր ավելի քան 0,5 մլն մարդ, Գերմանիայում վերականգնման խմբերում կար ավելի քան 1 մլն մարդ, Խորհրդային Միությունում տեղական ԶՊ կազմավորումներում ընդգրկված էր ավելի քան 1,3 մլն մարդ:

Ժամանակակից պատերազմի բնույթը, դրա վարման միջոցներն ու եղանակները ԶՊ-ի առջև դնում են ավելի լուրջ խնդիրներ: Դրանք լուծելու համար պահանջվում է ունենալ մեծ թվով լավ պատրաստված կադրեր ինչպես ԶՊ ղեկավար կազմում, այնպես էլ ավերածությունների, վարակի գոտիների և այլ բարդ պայմաններում գործելու համար:

Բնակչության պատրաստումը ԶՊ-ին և ԱԻ-ից պաշտպանությանը կազմակերպվում է անցկացվում է համապատասխան իրավական ակտերի և պլանային փաստաթղթերի հիման վրա: Այս ոլորտում բնակչության ուսուցումը՝ կախված խնդիրների լուծմանը նրա մասնակցության աստիճանից, ինչպես նաև գիտելիքների ու հմտությունների մակարդակին ներկայացվող պահանջներից, կարող է կատարվել ըստ խմբերի: Միջազգային փորձը վկայում է, որ ԶՊ և ԱԻ-ից պաշտպանության գծով ուսուցումը պետք է կազմակերպվի տվյալ ոլորտում պատրաստման միասնական պետական համակարգի շրջանակներում: Բացի այդ, պետք է կազմակերպվեն քարոզչական միջոցառումներ, իրազեկման ազդանշան տալու դեպքում պրակտիկ գործողությունների մշակման ուղղությամբ վարժանքներ, բնակչությանը բաժանվեն ԶՊ և ԱԻ-ից պաշտպանության թեմաներով հուշաթերթիկներ և ձեռնարկներ, պատրաստվեն հեռուստահաղորդումների և ռադիոհաղորդումների համապատասխան ծրագրեր:

Ընդհանուր առմամբ՝ ԶՊ և ԱԻ-ից պաշտպանության ոլորտում քաղաքացիների պատրաստումը այնպիսի միջոցառումների ընդգրկումն համալիր է, որոնք նպատակաուղղված են բնական, տեխնածին և ռազմական բնույթի ԱԻ-ների պայմաններում արդյունավետ գործողություններ կատարելուն ղեկավար կազմի և բնակչության պատրաստմանը:

4. Եզրակացություններ և ՀՀ բնակչության պատրաստման համակարգի կատարելագործման վերաբերյալ առաջարկություններ

Այսպիսով. մարդկային ռեսուրսները միշտ եղել են պետությունների տնտեսական և ռազմական հզորությունը, դրանց քաղաքական և ռազմաքաղաքական ուղեգծերի առանձնահատկությունները պայմանավորող կարևոր գործոններից մեկը: Կոնկրետացնելով այս դրույթը՝ կարող ենք նշել, որ՝

1. մարդկային գործոնը զգալի չափով կանխորոշում է զինված պայքարի

ձևերը և միջոցները: Դրա վիճակի, կառուցվածքի, դինամիկայի հետ անմիջա-
կանորեն կապված են զինված ուժերի գորահավաքային ծավալման ժամկետները,
մարտական գործողություններին նրանց պատրաստությունը և դրանք վարելու
ընդունակությունը,

2. մարդկային ռեսուրսների տարաբնույթ պահանջարկների ապահովման
հիմքում ընկած ժողովրդագրական գործընթացներն իրենց արտացոլումն են ստա-
նում օպերատիվ-ռազմավարական պլաններում, ժամանակային պարամետրների,
ռազմական անվտանգության համակարգի օպտիմալ կառուցվածքի որոշման, հա-
վանական կորուստների գնահատման հետ կապված հաշվարկումներում,

3. զինված ուժերի անձնակազմի պատրաստության մակարդակը, քանակա-
կան և կառուցվածքային պարամետրները, այն է՝ բանակի որակը, ռազմավարութ-
յան, աշխարհաքաղաքական խնդիրների լուծման կարևորագույն գործիքներն են,

4. ինչպես պատերազմի պայմաններում, այնպես էլ խաղաղ ժամանակ զին-
ված ուժերի և տնտեսության ճյուղերի ու ոլորտների միջև մարդկային ռեսուրսների
օպտիմալ բաշխման ապահովումը, աշխատուժի որակային պատրաստումն ու
արդյունավետ օգտագործումը, ռեզերվի կուտակումը եղել և մնում են ռազմական
անվտանգության ապահովման նպատակով պետության վարած գործունեության
հանգուցակետեր:

Կարելի է առանձնացնել պաշտպանությանը պետության բնակչության պատ-
րաստման համակարգի կատարելագործման հետևյալ հինգ հանգուցակետերը:

*Առաջին. ապահովել զինված ուժերի համար կադրերի կրթական, մասնագի-
տական, հարույկ պատրաստման բարձր մակարդակ, ինչը պայմանավորված է
բոլոր գորատեսակների սպառազինության մեջ ներառվող համակարգերի աճող
բարդությամբ: Այսպես. գորակոչային թվակազմի կրթական մակարդակի անկումը
(օրինակ՝ անգրագետ և տարրական կրթությամբ անձանց թվի աճումը) էապես
դժվարացնում է ժամանակակից ռազմական տեխնիկային տիրապետումն ու նվա-
զեցնում կիրառման արդյունավետությունը, մեծացնում է կորուստների քանակը:*

*Երկրորդ. համալրման մեթոդներն ու բանակում ծառայության փոփոխությունը
համապատասխանեցնել ուսուցանված ռեզերվի կուտակման խնդիրներին:*
Ծառայության ժամկետների երկարացումը (անցում պայմանագրային համակար-
գին) նվազեցնում է գորահավաքային ռեզերվի կուտակման հնարավորությունը:
Ժամկետների կրճատումը, հակառակը, մեծացնում է դրանք, բայց պահանջում է
պատրաստման ավելի նպատակաուղղված և ինտենսիվ մեթոդների կիրառում
(այլապես կրնկնի զինվորական մասնագիտությունների ուսուցման որակը):

*Երրորդ. հաշվի առնել ժամանակի գործոնի հույժ կարևորությունը: Ժամա-
նակակից պատերազմներում գորքերի և ուժերի խմբավորումները պետք է ծավալ-
վեն ամենակարճ ժամկետներում, ինչն ավելի է բարդացնում համալրման, ինչպես
նաև պետական ու ռազմական կառավարման մարմինների առջև դրված խնդիր-
ների լուծումը:*

Չորրորդ. հաշվի առնել կորուստների լրացման և զինվորական կազմավո-

րունների թվաքանակի անմասն խնդրի կապը կառուցվածքային հարցերի լուծման, առաջին հերթին առաջադասար, գերակայող մասնագիտություններով, հարկապես՝ հրամանատարական կադրերով զորքի սպահովման հետ: Թիկունքի վրա օդատիեզերական միջոցների ներգործության, պայքարի ոչ ավանդական միջոցների կիրառման հնարավորությունը ենթադրում է տարաշարժի, գործողություններում պատեհաժամ ճշգրտում կատարելու, ոչ կադապարային որոշումներ կայացնելու կարողության ձևավորում:

Հիմնգերրդը. *հաշվի առնել այն հանգամանքը, որ աշխարհի ռեսուրսները ռազմական փնտրության փարրն են և զինված ուժերի նյութական կարիքների սպահովման նպատակով ռազմական արտադրության ընդլայնման հիմնական պայմաններից մեկը:* Արդի ռազմական արտադրության համար պահանջվում է բարձր որակավորում ունեցող աշխատուժ, իսկ դրա համար անհրաժեշտ է ապահովել մարդկային ռեսուրսների օպտիմալ բաշխում և այդ գործընթացի պետական կարգավորման խստացում:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. «Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության ռազմավարություն»։ «Հայկական բանակ» ռազմագիտական հանդեսի հատուկ թողարկում, 2007:
2. «Հայաստանի Հանրապետության ռազմական դոկտրին»։ «Աշխատանքային տեսքեր» 2007, հմ. 4:
3. «Պաշտպանության մասին» ՀՀ օրենքը (<http://www.arlis.am/DocumentView.aspx?docid=38877>):
4. «Войны XXI века». М., ВА ГШ, 2000.
5. Ю. А. Мощенко. Подготовка страны к обороне. Уч. пособие. М., ВА ГШ, 2000.
6. В. В. Назаров. Подготовка государства к обороне (лекция). М., ВА ГШ, 2002.
7. В. И. Фролов. Основы военного строительства государства (лекция). М., ВА ГШ, 2004.
8. Г. В. Кириленко. Подготовка людских ресурсов к войне. Материал для проведения семинарских занятий. М., ВА ГШ, 1987.
9. «Военная безопасность страны и вооруженные силы: проблемы и пути их решения». М., ВА ГШ, 1995.
10. П. В. Соколов. Война и людские ресурсы. М., 1961.
11. В. Ф. Федоров, А. В. Погорелов, О. Ю. Кобызев, В. А. Байбородин. Проблемы подготовки и накопления мобилизационных людских ресурсов. «Военная мысль», 2003, № 7.
12. Дж. К. Алисон. Тенденции и проблемы в области международной безопасности. SIPRI, 2003.

ОСНОВНЫЕ НАПРАВЛЕНИЯ ПОДГОТОВКИ НАСЕЛЕНИЯ
ГОСУДАРСТВА К ОБОРОНЕ

А. М. ДАВТЯН, полковник, начальник Оперативного управления ГШ ВС РА

РЕЗЮМЕ

Людские ресурсы являются одним из важнейших факторов, определяющих экономическую и военную мощь государств.

Основными задачами своевременного и качественного решения проблемы подготовки людских ресурсов к обороне являются: научно обоснованное определение количественных и качественных характеристик личного состава для комплектования войск; разработка основ функционирования экономики и деятельности Гражданской обороны в условиях военного времени; подготовка людских ресурсов для возмещения потенциальных потерь и наращивания сил; дополнительное привлечение населения в ходе войны к организованному общественному труду; обеспечение качественного мобилизационного планирования людских ресурсов с учетом перспективного развития и размещения производительных сил.

THE BASIC DIRECTIONS OF PREPARATION
OF THE STATE'S POPULATION FOR DEFENSE

*A. M. DAVTYAN, Colonel, Head of the Operation Board of the Main Staff
of the RA Armed Forces*

SUMMARY

Human resources are one of the most important factors determining states' economic and military might.

The basic tasks of a timely and qualitative solution to the problem of the preparation of human resources for defense are: scientifically grounded determination of quantitative and qualitative characteristics of the staff for the troops' recruitment; elaboration of principles of economy functioning and activity of the Civil defense in conditions of war time; preparation of human resources for compensating potential losses and increasing power; additional involvement of the population during a war in the organized social labour; ensuring qualitative mobilization planning of human resources with the account of a prospective development and distribution of productive force.

ՊԵՏՈՒԹՅՈՒՆԸ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆԸ ՊԱՏՐԱՍՏԵԼՈՒ
ԻՐԱՎԱԿԱՆ ՀԻՄՔԵՐԻ ԿԱՏԱՐԵԼԱԳՈՐԾՈՒՄԸ
ՊԱՇՏՊԱՆԱԿԱՆ ԲԱՐԵՓՈԽՈՒՄՆԵՐԻ ՀԱՄԱՏԵՔՍՈՒՄ

Վ. Պ. ԱՎԵՏԻՍՅԱՆ, փոխգնդապետ, ՀՀ ՊՆ ԱՌՀԻ-ի «Հայկական բանակ»
նազմագիտական հանդեսի գլխավոր խմբագրի տեղակալ-իրավաբան



Օրե՛նք սիրե, ժողովու՛րդ, օրե՛նք սիրե.
սահմանադրության երեսից մի՛ փախչիր, որ քեզ
համար նոր ամրակապ մի լաստափայտ է ...
ապավինի այդ օրինագիր լաստին,
որ քո վերջին ապավենն է:
Մկրտիչ Ա Վանեցի (Խրիսյան Հայրիկ)

**1. «Պատրաստում պաշտպանությանը» հասկացու-
թյունը:** Հաշվի առնելով այն հանգամանքը, որ «պաշտ-
պանությանը պատրաստումը» «պաշտպանություն»

համակարգի ենթահամակարգ է, փորձենք նախ սահմանել «պաշտպանություն»
հասկացությունը*:

Հայտնի է, որ որևէ հասկացություն սահմանելու համար անհրաժեշտ է նա-
խապես ճշտել այդ հասկացությամբ բնորոշվող երևույթի «սահմանները»՝ դրան
ներառող և շրջապատող (հարակից) երևույթներից սահմանազատելու միջոցով:
Ժամանակակից ընկալմամբ պետության պաշտպանությունն իր հերթին պետու-
թյան անվտանգության ենթահամակարգ կամ մաս է¹, ուստի դրա սահմանման
խնդիրը լուծելու համար անհրաժեշտ կլինի այն սահմանազատել անվտանգու-
թյան մնացած մասերից:

Քանի որ հողվածն իրավական բնույթի է, ապա որպես նման սահմանազատ-
ման գործիք հարկ ենք համարում օգտագործել միայն միջազգային ու ներպե-
տական հիմնարար իրավական ակտերով նախատեսված չափանիշները:

Այդ ակտերի, մասնավորապես, ՄԱԿ-ի Կանոնադրության համաձայն, պե-
տության անհատական կամ կոլեկտիվ ինքնապաշտպանության իրավունքի իրա-
ցումը նախատեսվում է միայն զինված հարձակման դեպքում²:

* Սույն հողվածի շրջանակներում «պաշտպանության նախապատրաստման» իրավական հիմքե-
րի ուսումնասիրությունը ևս կատարվելու է «պաշտպանության» իրավական հիմքերի համատեքստում:

¹ Բազմաթիվ պետությունների սահմանադրություններում, օրենքներում և ռազմավարական
փաստաթղթերում, ինչպես նաև միջազգային իրավական հիմնարար ակտերում, եթե նույնիսկ այդպիսի
ուղիղ սահմանում չկա, ապա դրանց իմաստից միանշանակ բխում է պաշտպանությունը որպես ան-
վտանգության մաս դիտելու հանգամանքը: Ավաճող մասնավորապես հիմնավորվում է ՀՀ Սահմանա-
դրության (8.2-րդ և 49-րդ հոդվածներ), ՄԱԿ-ի Կանոնադրության (43-րդ և 51-րդ հոդվածներ), ինչպես
նաև «ՀՀ ազգային անվտանգության ռազմավարության» և «ՀՀ ռազմական դոկտրինի» դրույթների
բովանդակությամբ:

² Տես ՄԱԿ-ի Կանոնադրության 51-րդ հոդվածը:

ՈՒՍՏՈՒ ԱՅՂ ԱԿՏՈՒՅՄԱՆ ՉԻՆՎԱԾ ԽԱՐԾԱԿԱՆԱՆ ԽԱՆՈՒՄԱՆՆԵՐ «ԱՅԱՂԱԿԱՆՈՒՅՄՈՒՆ» «ԱՆՎՈՒՄԱՆՈՒՅՄՈՒՆ» մնացած մասերից սահմանազատելու չափանիշ է*։ Այլ կերպ ասած՝ «ԱՅԱՂԱԿԱՆՈՒՅՄՈՒՆ» «ԱՆՎՈՒՄԱՆՈՒՅՄՈՒՆ» այն մասը կազմող ենթահամակարգ է, որի տարրերը որևէ կերպ (անմիջականորեն կամ միջնորդավորված) հարաբերվում են այլ պետության ՉԻՆՎԱԾ ԽԱՐԾԱԿԱՆՈՒՄՆԵՐ։ Տվյալ չափանիշը կարելի է համարել հիմնական, քանի որ հնարավորություն է ընձեռում հստակ կերպով ուրվագծելու «ԱՅԱՂԱԿԱՆՈՒՅՄՈՒՆ» հասկացության ձևաչափը և միաժամանակ պատասխանում է այն հարցին, թե *ինչից* է անհրաժեշտ պաշտպանվել։

Սակայն ցանկացած երևույթի, այդ թվում՝ «ԱՅԱՂԱԿԱՆՈՒՅՄՈՒՆ», ամբողջական ընկալման համար անհրաժեշտ է պարզել նաև դրա բովանդակային առումը բնորոշող չափանիշները։

Դիտարկվող պարագայում այդպիսիք են այն չափանիշները, որոնք հնարավորություն են ընձեռում իմանալու, թե *ինչը* և *ինչպես* է պետք պաշտպանել կամ, այլ խոսքով, ցույց են տալիս պաշտպանության առարկան (բնակչությունը, տարածքը, ինքնիշխանությունը)** և դրա պաշտպանության միջոցներն ու եղանակները։

Բնակչությունը, տարածքը և ինքնիշխանությունը պաշտպանելը՝ որպես պետության ու հասարակության բազմաշերտ և բազմավեկտոր գործունեություն, պարտադրաբար պետք է բաղկացած լինի նախապատրաստման ու կատարման

* ՄԱԿ-ի Կանոնադրությունը մշակելու ժամանակ այլ պետության ՉԻՆՎԱԾ ԽԱՐԾԱԿԱՆՈՒՄԻՑ ԲԱԿԻ, չկային մեր ժամանակներին բնորոշ այնպիսի անդրազգային, այդ թվում՝ ահաբեկչական, սպառնալիքներ, որոնց հակադարձման դեպքում օբյեկտիվորեն, ինքնապաշտպանության բնական իրավունքի ուժով, անհրաժեշտ է լինում օգտագործել պետության անվտանգային, այդ թվում՝ ռազմական, ներսփ մի գզայի մասը։ ՈՒՍՏՈՒ ՄԱԿ-ի Կանոնադրությունում չէին կարող սահմանվել ինքնապաշտպանության իրավունքի դրսևորման ձևով դրանց հակադրելու մասին դրույթներ։ ՄԱԿ-ի Կանոնադրությունը մշակելու ժամանակ չէր կարող նախատեսվել նաև համապատասխան սպառնալիքների զարգացումները արդի տեխնոլոգիաների գործադրմամբ որոշակի ճշգրտությամբ կանխատեսելու հնարավորությունը, ուստի չէին կարող նաև այդպիսի հնարավորության «շահագրգիռ կիրառումը» բացառող համապատասխան իրավական կարգավորումներ նախատեսվել։ Այդուհանդերձ, վերը նշված սպառնալիքներին հակադարձելու, ինչպես նաև նշված «շահագրգիռ կիրառումների» նպատակով պետության ՉԻՆՎԱԾ ՈՒՇԵՐՆ օգտագործելու դեպքերն արդեն իրողություն են։ Սակայն հարկ ենք համարում փաստել, որ ոչ միայն նման «իրողությունները», այլև դրանք հիմնավորող միջազգային և ներպետական իրավական ակտերը, մասնավորապես՝ ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդի համապատասխան որոշումները և որոշ պետությունների ռազմական դոկտրինները, որպես այդպիսիք կայացել են ոչ առանց որոշ գերտերությունների/ուժային կենտրոնների՝ ՄԱԿ-ի Կանոնադրության և միջազգային իրավունքի այլ հիմնարար ակտերի «յուրովի» մեկնաբանության և համաշխարհային քաղաքական կոնյունկտուրայում ունեցած որոշիչ ազդեցության։ Ելնելով նշվածից, չնայած «պաշտպանություն» հասկացության գործնականում ավելի լայն իմաստին, սույն հոդվածում այն դիտարկվում է ՄԱԿ-ի Կանոնադրության 51-րդ հոդվածով սահմանված «ինքնապաշտպանություն» հասկացության սահմաններում ու դրա ծավալով։

** Տարբեր պետությունների (օրինակ՝ Հայաստան, Էստոնիա, Լատվիա, Լիտվա, Ռուսաստան) իրավական համակարգերում պաշտպանության առարկան կազմող բաղադրիչները արտահայտվում են դրանց որոշակիորեն տարբեր ձևակերպումներով, սակայն դրանց, ինչպես նաև միջազգային իրավունքի՝ խնդրին վերաբերող համընդհանուր մոտեցումն ու սկզբունքների համադրումից պարզ է դառնում, որ պաշտպանության առարկայի բաղադրիչները նույնանում են պետության հիմնական հատկանիշների հետ, որոնք են՝ բնակչությունը, տարածքը (որի փոխկապված բաղադրիչներն են տարածքային ամբողջականությունը և սահմանների անձեռնմխելիությունը) և ինքնիշխանությունը։

փուլերից և ընդգրկի որոշակի ձևերով իրականացվող անհրաժեշտ միջոցառումների ու միջոցների համալիր:

Վերը շարադրվածի տեսակետից դիտարկելով «պաշտպանություն» հասկացության սահմանումն ըստ «Պաշտպանության մասին» ՀՀ օրենքի (այսուհետև՝ Օրենք)³ ինքնըստինքյան կհանգենք մի շարք հարցերի, որոնց պատասխաններն Օրենքում չկան:

Օրենքի 3-րդ հոդվածի համաձայն՝ *«պաշտպանությունը հանդիսանում է ռազմական անվտանգության համակարգը, ՀՀ փարածքը, հասարակությունն ու փնտրեսությունը պաշտպանության նախապայտրաստելու և ՀՀ անկախությունը, փարածքային ամբողջականությունը, պետական սահմանի անջեռնմիջեցումներն ու անվտանգությունը պաշտպանելու ռազմական, քաղաքական, փնտրեսական, տեղեկատվական, սոցիալական, իրավական և այլ միջոցների ու միջոցառումների, ինչպես նաև ռազմական անվտանգության միջազգային երաշխիքների սպաստակով մեխանիզմների կիրառման համալիր գործունեության համակարգ»:*

Ակնհայտ է, որ այս բնորոշումն առնվազն չի պատասխանում այն հարցերին, թե *ինչից և ինչը* պետք է պաշտպանել:

Ինչ վերաբերում է *ինչպես*-ին, ապա այն ըստ Օրենքի «*ռազմական, քաղաքական, փնտրեսական, տեղեկատվական, սոցիալական, իրավական և այլ միջոցների ու միջոցառումների, ինչպես նաև ռազմական անվտանգության միջազգային երաշխիքների սպաստակով մեխանիզմների կիրառման համալիր գործունեությունն է*»^{*}:

Այդ գործունեությունը կարելի է բաժանել զինված հարձակմանը դիմակայելուն պետությունը պատրաստելու (պասիվ պաշտպանության պատրաստում) և զինված հարձակումը³ կասեցնելու, հետ մղելու ու դրա հետևանքները չեզոքացնելու (ակտիվ պաշտպանություն) փուլերի:

Միաժամանակ պետք է նկատի ունենալ, որ այդ փուլերը հնարավոր երկու՝ **խաղաղության և պատերազմի** ռազմաքաղաքական իրավիճակներից մեկի կամ մյուսի պարագայում միմյանց նկատմամբ գերակայության առումով փոխատեղվում են: Խաղաղության իրավիճակում պաշտպանության փուլը որպես կանոն բացակայում է, եթե հաշվի չառնենք պատերազմի իրավիճակի չհանգեցնող հնարավոր փոքրամասշտաբ բախումներն ու հակամարտությունները:

^{*} Այս սահմանման մեջ «Ռազմական անվտանգության միջազգային երաշխիքների սպաստակով մեխանիզմների կիրառման համալիր գործունեություն» արտահայտության ներառումը անհասկանալի և անտեղի է: Եթե խոսքը վերաբերում է միջազգային քաղաքական և իրավական գործունեության ոլորտին, ապա այդ մասին սահմանման մեջ հիշատակվում է, իսկ եթե խոսքը վերաբերում է միջազգային պարտավորությունների կատարմանը, մասնավորապես, խաղաղապահ գործողություններին մասնակցելու ձևով, ապա դա զինված ուժերի օգտագործման ձևերից մեկն է, որն իրականացվում է միջազգային քաղաքական գործունեության համատեքստում՝ միջազգային իրավական ակտերին համապատասխան: Այն սահմանման մեջ ներառելն իմաստ չունի նաև այն պատճառով, որ չի առնչվում Հայաստանի Հանրապետության վրա զինված հարձակման հանգամանքին:

³ Ըստ ՀՀ Սահմանադրության 55-րդ հոդվածի 13-րդ կետի և «Ռազմական դրության իրավական ռեժիմի մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի՝ արդեն տեղի ունեցած զինված հարձակումը և դրա անմիջական վտանգի առկայությունը հանգեցնում են միևնույն իրավական հետևանքներին:

Ինչևէ, այս կամ այն չափաբաժիններով և դերային ու գործառության մշակութային դրանց համագործակցություն է: Բացի այդ, պաշտպանության պատրաստման փուլը երկակի բնույթի է. այն առկա է ու համապատասխանաբար դրսևորվում է ինչպես պասիվ, այնպես էլ ակտիվ պաշտպանություններին պատրաստվելիս:

Օրենքի սահմանումը չի նախատեսում մի կարևոր հանգամանք ևս, որի մշումը նպատակահարմար է պաշտպանության բնագավառի իրավական համակարգը հստակեցնելու առումով: Դա ՀՀ դաշնակիցների վրա զինված հարձակման դեպքն է, որը կարող է դաշնակցային հարաբերություններ սահմանող միջազգային պայմանագրերին համապատասխան գնահատվել որպես ՀՀ-ի վրա զինված հարձակում:

Բացի վերը նշվածից, Օրենքի սահմանմամբ երևույթը (տվյալ դեպքում՝ «պաշտպանությունը») բացատրվում է նույն երևույթով. «**պաշտպանությունը** հանդիսանում է **պաշտպանության** նախապատրաստելու և **պաշտպանելու** համակարգ (ընդգծումները մերն են. – Վ. Ա.)», ինչն անթույլատրելի է:

Վերը նշվածի հիման վրա «**պաշտպանություն**» հասկացության իրավական սահմանումը կարող է ձևակերպվել հետևյալ կերպ.

«պաշտպանությունը պետության ռազմական անվտանգության համակարգը, տարածքը, հասարակությունն ու տնտեսությունը պետության (կամ իր դաշնակիցների) բնակչության, տարածքի (տարածքային ամբողջականության և սահմանների անօրոգիականության) և ինքնիշխանության վրա զինված հարձակմանը դիմակայությանը, դրա կասեցմանը, հեղհանմանն ու հետևանքների չեզոքացմանը պատրաստելուն, ինչպես նաև այդպիսի զինված հարձակումը կասեցնելուն, հեղհանելուն ու դրա հետևանքները չեզոքացնելուն նպատակաուղղված ռազմական, քաղաքական, տնտեսական, տեղեկության, սոցիալական, իրավական և այլ միջոցների ու միջոցառումների համալիր կիրառման համակարգ է»:

Ըստ այդմ էլ «պատրաստում պաշտպանությանը» հասկացությունը կարող է սահմանվել որպես «**պետության ռազմական անվտանգության համակարգը, տարածքը, հասարակությունն ու տնտեսությունը պետության (կամ իր դաշնակիցների) բնակչության, տարածքի (տարածքային ամբողջականության և սահմանների անօրոգիականության) և ինքնիշխանության վրա զինված հարձակմանը դիմակայությանը, կասեցմանը, հեղհանմանը և հետևանքների չեզոքացմանը պատրաստելուն նպատակաուղղված ռազմական, քաղաքական, տնտեսական, տեղեկության, սոցիալական, իրավական և այլ միջոցների ու միջոցառումների համալիր կիրառման համակարգ**»:

2. Պետությունը պաշտպանությանը պատրաստելու իրավական հիմքերի ընդհանուր բնութագիրը: Պետությունը պաշտպանությանը պատրաստելու իրավական հիմքերն ամփոփված են միջազգային և ներպետական հիմնարար իրավական ակտերի այն դրույթներում, որոնք սահմանում կամ պայմանավորում

են պետությունը պաշտպանությանը պատրաստելու հիմնական կանոնները:

Միջազգային իրավական ակտերից կարելի է առանձնացնել վերը հիշատակված ՄԱԿ-ի Կանոնադրությունը:

ՄԱԿ-ի Կանոնադրության 51-րդ հոդվածում սահմանված՝ զինված հարձակումից անհատական կամ կոլեկտիվ ինքնապաշտպանության իրավունքը, 43-րդ հոդվածում սահմանված միջազգային անվտանգության ու խաղաղության պահպանման նպատակով կազմակերպության անդամ պետությունների համապատասխան պարտավորությունները (այդ թվում՝ անհրաժեշտ զինված ուժեր տրամադրելու) և դրանք իրականացնելու մեխանիզմը ինքնին ենթադրում են պաշտպանության միջոցներ ու համակարգեր ունենալու, պաշտպանությանը պատրաստվելու պետության իրավունքը:

Այդուհանդերձ, պաշտպանության բնագավառի, այդ թվում՝ պաշտպանությանը պատրաստման ոլորտի իրավական հիմքերն առավել ամբողջական և համակարգված կերպով ներկայացված են ներպետական իրավական ակտերում՝ Սահմանադրությունում և տվյալ բնագավառում հարաբերությունները կարգավորող օրենքների («Պաշտպանության մասին» «Ջորաիավաքային նախապատրաստության և գորահավաքի մասին», «Ջինապարտության մասին», «Պետական պահուստի մասին» և ՀՀ այլ օրենքներ) հիմնական դրույթներում:

Պետությունը պաշտպանելը և պաշտպանությանը պատրաստելը իրականացվում են որպես պետական կառավարման միջոցով կատարվող կազմակերպական գործունեություն, որի իրավական հիմքերը, որպես կանոն, Սահմանադրության մեջ և համապատասխան օրենքներում արտացոլված են պետական կառավարման մարմինների լիազորությունները սահմանող նորմերում:

Պաշտպանության բնագավառում պետական կառավարման մարմինների լիազորություններն ըստ Սահմանադրության

Ազգային ժողովի լիազորությունները, բացի պատերազմի և խաղաղության հարցերը որոշելու և Նախագահի լիազորությունները վերահսկելու կոնկրետ դեպքերից, անուղղակի բնույթի են: Ազգային ժողովը պաշտպանության բնագավառում կառավարման գործառույթն իրականացնում է համապատասխան օրենքներ ընդունելու, այդ թվում՝ պաշտպանական ծախսեր ներառող պետական բյուջեն հաստատելու միջոցով:

Հանրապետության Նախագահի լիազորությունները պաշտպանության կազմակերպման բնագավառում գլխադաս են:

Հանրապետության Նախագահի՝ որպես պետության գլխի, պետության անկախության, տարածքային ամբողջականության և անվտանգության երաշխավորի, զինված ուժերի գերագույն գլխավոր հրամանատարի, պաշտպանության բնագավառում այլ պետական մարմինների գործունեությունը համակարգողի, և, դրանցով հանդերձ, պաշտպանական քաղաքականության առաջավարի լիազորությունները նրան դարձնում են պաշտպանության կազմակերպման «բուրգի» զագաթ:

Կառավարության լիազորությունները պետական կառավարման բոլոր բնագավառներում գործառնությանն առումով բաժանվում են երկու հիմնական խմբի՝ «անմիջական իրականացում» (ուղղակի և անբողջական գործառնություններ) և «իրականացման ապահովում» (անուղղակի, աջակցման և մասնակի գործառնություններ)*:

Սահմանադրության 89-րդ հոդվածի 6-րդ կետի տառացի մեկնաբանության համաձայն՝ կառավարությունն ապահովում է պետության պաշտպանության իրականացումը և չի իրականացնում բուն պաշտպանությունը: Պաշտպանության ապահովումն այնպիսի գործողությունների և միջոցառումների իրականացում է, որոնք կոչված են սպասարկելու և ապահովելու պաշտպանության բնականոն գործընթացը:

Ասվածից հետևում է նաև, որ պաշտպանության նախարարը, որպես կառավարության անդամ, պետք է ունենա կառավարության լիազորությունների ծավալից ու սահմաններից բխող և դրանցով սահմանափակված լիազորություններ:

Պաշտպանության բնագավառում պետական կառավարման մարմինների լիազորություններն ըստ այդ բնագավառի ՀՀ օրենքների

Ինչպես պաշտպանական բարեփոխումներին նախորդող ժամանակահատվածում, այնպես էլ բարեփոխումների ընթացքում մեծածավալ աշխատանք է կատարվել պաշտպանության բնագավառի իրավական կարգավորումների համակարգը ձևավորելու և զարգացնելու նպատակով: Մշակվել և ընդունվել են տասնյակ օրենքներ և այլ իրավական ակտեր, որոնց համակարգաստեղծ և կարգավորիչ դերն ու նշանակությունը էական ու որոշիչ են եղել ՀՀ պաշտպանական համակարգի կայացման ու հզորացման գործում:

Չնայած այս ամենին՝ պաշտպանության բնագավառում գոյություն ունեցող իրավական կարգավորումների համակարգը հայեցակարգային բնույթի մի շարք լուրջ հակասություններ ունի Սահմանադրության հետ, ինչը, օրենքների և այլ իրավական ակտերի սահմանադրականության պահանջին հակասելուց զատ, էապես նվազեցնում է պետության պաշտպանության կազմակերպման արդյունավետությունը:

Բնագավառի ՀՀ օրենքներից մեծ մասի նորմերի համաձայն՝ կառավարությունը կատարում է ոչ միայն Սահմանադրությամբ իրեն վերապահված «պաշտպանության իրականացման ապահովման», այլև՝ բուն «պաշտպանության

* Որպես *ուղղակի և անմիջական գործառնություններ*՝ Կառավարությունը Ազգային ժողովի հավանությանն է ներկայացնում իր ծրագիրը, նրա հաստատմանը՝ պետական բյուջեի նախագիծը, կառավարում է պետական սեփականությունը, իրականացնում է պետական քաղաքականությունը ֆինանսատնտեսական, վարկային և հարկային, տարածքային զարգացման, գիտության, կրթության, մշակույթի, առողջապահության, սոցիալական ապահովության և բնության պահպանման բնագավառներում: Իսկ որպես *անուղղակի, աջակցման և մասնակի գործառնություններ*՝ ապահովում է պետական բյուջեի կատարումը, հանրապետության պաշտպանության, ազգային անվտանգության, արտաքին քաղաքականության իրականացումը, հասարակական կարգի պահպանությունը, միջոցներ ձեռնարկում օրինականության ամրապնդման, քաղաքացիների իրավունքների և ազատությունների ապահովման ուղղությամբ:

իրականացման» գործառույթներ: Ավելին. Օրենքով կառավարության անդամին՝ պաշտպանության նախարարին, վերապահված են զինված ուժերի անմիջական ղեկավարի (փաստացի՝ գլխավոր հրամանատարի) լիազորություններ, որոնք դուրս են գալիս կառավարության լիազորությունների շրջանակներից և գերազանցում են դրանք՝ քաղաքական պաշտոնյային և քաղաքացիական անձին՝ պաշտպանության նախարարին, վերածելով հրամանատարական շղթայի օղակի:

Սահմանադրության իմաստով նույնիսկ կառավարության անդամ նախարարի՝ պետական կառավարման մարմին լինելու հանգամանքը վիճելի է, մինչդեռ ընդամենը պաշտպանության նախարարի գործունեության իրականացումն ապահովելու նպատակով ստեղծված պետական կառավարչական հիմնարկը՝ պաշտպանության նախարարությունը, Օրենքի և պաշտպանության բնագավառի այլ օրենքների հիման վրա օժտված է նախարարի լիազորությունները գերազանցող և դրանք պայմանավորող պետական իշխանության իրականացման լիազորություններով:

Հենց այս հակասություններն են, որ թույլ չեն տալիս իրապես տարանջատել պաշտպանության նախարարի և զինված ուժերի գլխավոր շտաբի պետի, պաշտպանության նախարարության և գլխավոր շտաբի լիազորությունները պաշտպանության բնագավառում: Իսկ լիազորությունների ոչ հստակ տարանջատվածությունն օրյեկտիվորեն հանգեցնում է ոչ արդյունավետ կառավարման, և, դրա հետևանքով, պաշտպանության կազմակերպման չհամակարգված գործունեության:

3. Պաշտպանության բնագավառի իրավական ակտերի սահմանադրականությունը՝ որպես այդ բնագավառի արդյունավետ գործունեության նախապայման ու երաշխիք, և դրանք Սահմանադրությանը համապատասխանեցնելը՝ որպես բնագավառի բարեփոխման իրավական գերխնդիր: Պաշտպանության կազմակերպման նման բարդ ու դժվարին գործունեության արդյունավետությունը պայմանավորված է դրա ներդաշնակության ու սիներգիկության աստիճանով:

Որպես պետական գործունեության ձև՝ այն տեղի է ունենում իրավական կարգավորումներին համապատասխան, որոնց կառուցակարգային ներդաշնակությունն ու դրանով հանդերձ՝ առավելագույն սիներգիզմը կարելի է ապահովել միայն դրանք ըստ միասնական սկզբունքների ու կանոնների շարակարգելու պարագայում: Այդպիսի սկզբունքների և կանոնների համապարփակ համակարգը Սահմանադրությունն է:

ՀՀ Սահմանադրության 6-րդ հոդվածի համաձայն՝ «Սահմանադրությունն ունի բարձրագույն իրավաբանական ուժ, և նրա նորմերը գործում են անմիջականորեն: Օրենքները պետք է համապատասխանեն Սահմանադրությանը: Այլ իրավական ակտերը պետք է համապատասխանեն Սահմանադրությանը և օրենքներին: ...Նորմարիվ իրավական ակտերն ընդունվում են Սահմանադրության և օրենքների հիման վրա և դրանց իրականացումն ապահովելու նպատակով»: Սահմանադրության 6-րդ հոդվածի և այլ համապատասխան նորմերի պահանջների նպատակը ոչ միայն իրավական աստիճանակարգության ձևական

պահպանումն է, այլև առաջին հերթին ներդաշնակ, դինամիկ, գործուն, արդյունավետ ու ինքնագարգացող այնպիսի իրավական համակարգի ստեղծումն ու կատարելագործումը, որը կարողանա ապահովել ինչպես պետության, հանրության ու անհատի հավասարակշռված ու կայուն զարգացումը, այնպես էլ այդ համատեքստում՝ պետության բավարար ու լիարժեք պաշտպանունակությունը: Հետևաբար՝ պաշտպանական բարեփոխումների համատեքստում ինչպես պետության պաշտպանության, այնպես էլ այն պաշտպանությանը պատրաստելու արդյունավետ իրավական կարգավորումների և արդյունավետ կառավարվող ու գործող պաշտպանական համակարգերի ձևավորումը հնարավոր է ապահովել միայն Սահմանադրության մեկնակետից և դրա հիման վրա:

Ռխտի անհրաժեշտ է, որպես սույն հոդվածի բնաբան բերված՝ Վեհափառ Հայրապետի պատգամին անսալով, նախ հասկանալ Սահմանադրությունը, գիտակցել և ընդունել նրա աներկբայությունն ու իրավական գերակայությունը, այնուհետև «նոստալգիկ» և «մոդայիկ» ընկալումներից ազատ վիճակում «զծագրել» պաշտպանության բնագավառի իրավական հայեցակարգը և դրան համապատասխան ձևավորել այդ բնագավառի իրավական համակարգը: Ընդամին դա պետք է արվի ազգային շահերի գերակայության տեսանկյունից:

УСОВЕРШЕНСТВОВАНИЕ ПРАВОВЫХ ОСНОВ ПОДГОТОВКИ ГОСУДАРСТВА К ОБОРОНЕ В КОНТЕКСТЕ ОБОРОННЫХ РЕФОРМ

*В. П. АВЕТИСЯН, подполковник, заместитель главного редактора
военно-научного журнала «Айкакан банак» ИНСИ МО РА—юрист*

РЕЗЮМЕ

Оборона государства и его подготовка к обороне являются организационной деятельностью, осуществляемой органами государственного управления.

Однако некоторые концептуальные, системообразующие положения, определяющие их полномочия согласно Закону РА «Об обороне», а также другим законам и правовым актам в области обороны, в основном по части Правительства и Министра Обороны РА, не соответствуют установленным Конституцией РА правовым основам по организации обороны и подготовки к ней.

Учитывая, что достаточный уровень эффективности организации и синергизма в деятельности по обеспечению обороноспособности государства может быть достигнут только при иерархически правильно построенной, гармоничной системе правовых регулятивов, главной правовой задачей в контексте оборонных реформ становится приведение (формирование по недостающей части) указанной системы (в том числе и в сфере подготовки к обороне) в соответствие с Конституцией. При чем, данный процесс должен осуществляться с учетом фундаментальных национальных интересов.

THE IMPROVEMENT OF LEGAL BASES OF THE STATE'S
PREPARATION FOR DEFENSE
IN THE CONTEXT OF DEFENSE REFORMS

*V. P. AVETISYAN, Lieutenant-Colonel, Deputy Editor-in-Chief of the
Defense-Academic Journal «Haikakan Banak» of the INSS, MoD, RA*

SUMMARY

The state's defense and its preparation for defense are an organizational activity being implemented by the public administration bodies.

However, some conceptual, system-forming provisions determining their powers according to the RA Law «On Defense» as well as other laws and legal acts in the field of defense, mainly on the part of the RA Government and Defense Minister, do not correspond to the legal bases on the defense organization and preparation, which are set by the RA Constitution.

Taking into account that the sufficient level of the efficiency of organized and synergetic activity on ensuring the state's defense capability can be provided only at the hierarchically well-formed, harmonious system of legal regulatives, bringing (forming by the missing part) the mentioned system (including also in the sphere of preparation for defense) to conformity with the Constitution becomes the main legal task in the context of defense reforms. Thus, the given process should be implemented in terms of fundamental national interests.

ԱԿՏԻՎ ՄԱՐՏԱԿԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ
ԶԻՆԾԱՌԱՅՈՂՆԵՐԻ ՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ՊԱՏՐԱՍՏՈՒՄԸ՝
ՈՐՊԵՍ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆԸ ՊԵՏՈՒԹՅԱՆ
ՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԿԱՐԵՎՈՐ ԲԱՂԱԳՐԻԶ

Վ. Հ. ՄԱՐԳԱՐՅԱՆ, գնդապետ, հոգեբանական գիտությունների թեկնածու,
դոցենտ, ՀՀ ՊՆ ԱՌՀԻ-ի «Հայկական բանակ» ռազմագիտական հանդեսի
գլխավոր խմբագրի տեղակալ



Պաշտպանությանը պետության պատրաստման կարևոր տարրն է ՁՈՒ-ի համակողմանի պատրաստումը, որն ի թիվս այլ հիմնական բաղադրիչների ներառում է զինծառայողների պատշաճ մակարդակով հոգեբանական կայունության ապահովումը: Վերջին տասնամյակների տեղային պատերազմներում և հակամարտություններում մարտական գործողությունների

վարման փորձը հնարավորություն տվեց արդի պահանջներին համապատասխան ճշգրտելու հոգեբանական պատրաստման հիմնական խնդիրները, ուղղությունները և եղանակները:

Հոգեբանական պատրաստումը այնպիսի միջոցառումների համալիր է, որոնք ուղղված են զինված պայքարի ժամանակակից միջոցների և մարտի հոգեծին գործոնների նկատմամբ զինծառայողների հոգեբանական կայունության, մարտական խնդիրների կատարման համար անհրաժեշտ հուզականային հատկությունների, էքստրեմալ պայմաններում գոյատևման համար անհրաժեշտ հմտությունների ձևավորմանը, ինչպես նաև մարտի անհայտ տարրերի հետ բախման հավանականության նվազեցմանը:

Հոգեբանական պատրաստման հիմնական նպատակը մարտական ստրեստի* նկատմամբ վարժեցնովի հակազդման ստեղծումն է, այսինքն՝ զինծառայողի այնպիսի պատրաստումը, որ այդ ստրեստը դառնա նրա գործունեությունը ոչ թե կազմալուծող (արգելակող), այլ խթանող գործոն:

Զինծառայողների հոգեբանական պատրաստումը ենթադրում է ցանկացած իրավիճակում կարող գործողությունների անցնելու ունակության ձևավորում ու ամրապնդում¹:

Անձնակազմի հոգեբանական պատրաստման հիմքում դրված են՝

1. խելամիտ վերաբերմունքը այն փորձություններին, որոնց կարող են բախվել մարտի դաշտում՝ մարտական գործողությունների ժամանակ,

* Ստրեստները ստրես առաջացնող գործոններ են:

¹ Stu C. Додолян, А. Степанов. Психологическая готовность к выполнению поставленных задач. «Ориентир», 2002, № 6:

2. հավանական հակառակորդի, նրա մարտական հնարավորությունների և զինված պայքարի միջոցների մասին անհրաժեշտ տվյալների բազան:

Ջինժառայողը պետք է հստակ գիտակցի, որ վտանգը կարող է հանգեցնել ներքին լարվածության, ինչը բացասաբար կանդրադառնա իր գործունեության վրա: Ներքին լարվածությունը կարող է երևան գալ ճնշման, կամ ընդհակառակը՝ հոգեկան պրոցեսների, նախկինում ձեռք բերված գիտելիքների և հմտությունների ակտիվացման ձևով:

Անձնակազմի հոգեբանական կոփումը ապահովում է՝

–լարված նյարդահոգեբանական վիճակում ինքնատիրապետում,

–այդ լարվածությունը օգտագործելու կարողություն՝ գործողությունների ակտիվությունը և նպատակաուղղվածությունը մեծացնելու համար:

Ջարգացած պետությունների բանակներում հոգեբանական պատրաստումը մարտական պատրաստման և, ընդհանուր առմամբ, պաշտպանության համակարգում կիրառվող հատուկ միջոցառումների համալիր է: Այդ միջոցառումները նպաստում են, նախ, այն հատկությունների ձևավորմանը, որոնք համապատասխանում են զինվորական կոլեկտիվի կողմից զինժառայողի անձին ներկայացվող պահանջներին, երկրորդ, այնպիսի մարտական վարպետության ձևավորմանը, որը համապատասխանի ժամանակակից մարտի ռեալ հոգեբանական պահանջներին:

Հոգեբանական պատրաստման տեսակներն են ընդհանուր, հատուկ և նպատակային պատրաստումները²:

Ընդհանուր հոգեբանական պատրաստումը անձնակազմի հոգեկանի կոփումն է ժամանակակից պատերազմի բնույթին համապատասխան: Այն հիմնվում է քաղաքական գիտակցության զարգացման, հայրենասիրության ձևավորման, հաղթանակի հասնելու կամքի ու վստահության, մարտական ակտիվության և ինքնագոհությանը պատրաստության սերմանման վրա:

Ընդհանուր հոգեբանական պատրաստման գործում մեծ դեր է խաղում զինժառայողների համակողմանի ծանոթացումը ժամանակակից մարտի բնույթին և հոգեբանական գործոններին: Կարևոր է անձնակազմի զինումը «Ջինվորական հոգեբանության հիմունքներ» առարկայով նախատեսվող գիտելիքների նվազագույն պաշարով, ընդամին հարկ է մեծ ուշադրություն հատկացնել հոգեբանական կոփմանը վերաբերող գիտելիքներին, որպեսզի յուրաքանչյուր զինժառայող կարողանա ինքնուրույնաբար ձևավորել ու զարգացնել այն հատկությունները, որոնք նրա մարտական ակտիվության և կայունության հիմքն են:

Այսպիսով՝ ընդհանուր հոգեբանական պատրաստումը ենթադրում է այն ընդհանուր խնդիրների լուծում, որոնք բխում են ժամանակակից պատերազմի առանձնահատկություններից և ընդհանուր առմամբ նույնն են ՋՈՒ-ի բոլոր տեսակների համար:

Հարուկ հոգեբանական պատրաստումը ենթադրում է զինժառայողի մեջ մեծ

² Տես А. В. Барабанщиков, В. П. Давыдов, Э. П. Утлик, Н. Ф. Фегенко. Военная психология и педагогика. М., 1986, сс. 115–117:

մարտական ակտիվության և հոգեբանական կայունության համար անհրաժեշտ հիմքերի ձևավորում, մասնավորապես՝ հուզական ստրեսի առաջացմանը նպաստող գործոնների վերլուծություն: Հատուկ հոգեբանական պատրաստման մի շարք խնդիրներ լուծվում են զենքի և ռազմական տեխնիկայի շահագործման ընթացքում, առավելապես՝ մարտական իրադրությունը մասնարկող պայմաններում: Լուծման ենթակա խնդիրների ծավալը պայմանավորված է զինվորական մասնագիտության առանձնահատկություններով, հետևաբար նաև՝ որոշակի հոգեֆիզիոլոգիական ֆունկցիաներով, որոնք անհրաժեշտ է նպատակաուղղված կերպով զարգացնել, որպեսզի մարտական իրավիճակներում առաջ չգա դրանց անկանոնությունը:

ԶՈՒ-ի համակարգում համապատասխան հատուկ հոգեբանական պատրաստում պետք է ստանա սպայական կազմը: Սպայի անբավարար հոգեբանական կոփումը կարող է հանգեցնել վտանգի դեպքում նրա մտածելու կարողության խաթարմանը, նպատակների և խնդիրների առաջնահերթության գիտակցման խախտմանը, որոնց հետևանքով երկրորդական հարցերը, ոչ էական մանրամասները կարող են հայտնվել նրա ուշադրության կենտրոնում³: Մարտում սպան երբեմն չի կարողանում կենտրոնանալ առաջադրված խնդրի վրա, նվազում է նրա մտածողության արագությունը, նրա ընդունած որոշումները լինում են ոչ ռացիոնալ: Մինչդեռ խաղաղ պայմաններում այդ նույն սպան գործում է հստակ ու վստահ: Կարևոր խնդիր է անձնակազմ դեկավարելու փորձի ձեռքբերումը այնպիսի պայմաններում, որոնք պատասխանատվության, լարվածության, ժամանակի սղության առումներով առավելագույնս մասնարկված են մարտական իրավիճակներին: Դա նպաստում է արտակարգ ու նորմալ պայմաններում մտածողական գործունեության տարբերությունները նվազագույնացնելուն:

Նպատակային հոգեբանական պատրաստումը մարտական հոգեվիճակի, կոնկրետ խնդրի լուծման համար հատուկ դիրքորոշման ձևավորումն է (նախապատրաստում մարտական գործողություններին, մարտական հեթապահությանը, պահակային ծառայությանը և այլն): Այդ գործընթացը կազմակերպվում է մինչ ակտիվ գործողություններ սկսելը՝ հոգեկանի ֆունկցիոնալ ակտիվության, աշխատունակության մեծացման միջոցով: Նպատակային հոգեբանական պատրաստումն իրականացվում է մարտական պատրաստման հետ մեկտեղ: Նպատակային հոգեբանական պատրաստման առանձնահատկությունն այն է, որ ներգործության օբյեկտներ են ոչ միայն զինծառայողի անհատական գիտակցությունը, այլև զինվորական կոլեկտիվի հոգեբանությունը. ձևավորվում է ընդհանուր կարծիք, մարտական տրամադրություն, ամրապնդվում է կոլեկտիվի հոգեբանական կառուցվածքը: Մարտական գործողությունների հոգեբանական ապահովումը նպատակաուղղված է զինծառայողների մեջ մեծ հոգեկան ակ-

³ Տես Վ. Հ. Մարգարյան, Զինվորի հոգեբանական պատրաստության հարցի շուրջ: Հոգեբանության և մանկավարժության արդիական հիմնախնդիրներ: «Հանրապետական գիտաժողովի նյութերի ժողովածու»: Գյումրի, 2003, էջ 54–57:

տիվության ձևավորմանն ու պահպանմանը, ավելորդ ներքին լարվածության վերացմանը, կարճատև հանգստի ռացիոնալ օգտագործմանը, ստրեսային գործոնների բացասական հոգեբանական հետևանքների ինքնուրույնաբար վերացմանը: Մարտական առաջադրանքի կատարումից հետո անհրաժեշտ է միջոցներ ձեռնարկել, որպեսզի վերականգնվի զինծառայողի հոգեկանի հավասարակշռությունը, հաջողությունների դեպքում կանխվի ինքնավերահսկողության կորուստը, անհաջողությունների դեպքում՝ չեզոքացվեն ճնշող ազդեցությունները⁴:

Նշենք, որ հոգեբանական պատրաստման բովանդակությունը մարտական իրադրությանը զինծառայողի ակտիվ հակազդման խթանումն է: Հոգեբանական պատրաստման գործում կարևոր նշանակություն ունեն հատուկ վարժությունները, որոնք նախանշանակված են հոգեբանական խնդիրների լուծման համար: Վարժանքի շնորհիվ է, որ զինծառայողը, օրինակ, ձեռք է բերում հակառակորդի կրակի պայմաններում նպատակասլաց կերպով գործելու հմտություն, ընտելանում է մարտին բնորոշ վտանգներին, ձայներին, հաղթահարում է մթության վախը և այլ հոգեբանական դժվարություններ:

Եվ այսպես. զինծառայողների հոգեբանական պատրաստումն ուղղված է մարտական պատրաստության մակարդակի բարձրացմանը: Ընդ որում, լուծվում են հետևյալ խնդիրները.

1. ընդհանուր՝

– պատերազմի, հակառակորդի, նրա զինատեսակների (հատկապես՝ նոր), գործողության եղանակների մասին զինծառայողների շրջանում ճիշտ պատկերացումների ձևավորում,

- ֆիզիկական և հոգեբանական դիմացկունության ձևավորում,
- զինծառայողների հուզականային կայունության ձևավորում,

2. հատուկ՝

– մասնագիտական և մարտական հմտությունների կայունության մակարդակի բարձրացում,

– մարտի հոգեծին գործոնների ազդեցությանը ճիշտ հակազդելու հմտությունների ձևավորում,

3. մեթոդական՝

– անձնակազմի անդամների զինում հոգեկանի ինքնակարգավորման, իրենց հոգեվիճակների և վարքի կառավարման հնարներով և եղանակներով,

– սպայական կազմի զինում մարտում ենթակաների վրա ներգործելու հնարներով և եղանակներով:

Ըստ այդմ առանձնացվում է երկու տեսակի հոգեբանական պատրաստություն:

Ընդհանուր (տեսական) *հոգեբանական պատրաստությունը* ապահովվում է անձի կայուն հատկությունների համակարգով (գործունեության նկատմամբ դրա-

⁴ Տես А. Барабан. Влияние боя на психику воина. «Ориентир», 2004, № 6:

կան վերաբերմունք, կազմակերպվածություն, ուշադիրություն*, ինքնատիրապետում և այլն), փորձով, գիտելիքներով, հմտություններով, կարողություններով, որոնք անհրաժեշտ են տարբեր մարտական իրադրություններում արդյունավետ կերպով գործելու համար: Ընդամին հարկ չկա ընդհանուր հոգեբանական պատրաստությունը ձևավորելու ըստ յուրաքանչյուր նոր խնդրի առաջադրման:

Իրավիճակային (կարճատև) *հոգեբանական պատրաստությունը* զինծառայողի այն հատուկ հոգեբանական վիճակն է, որի դեպքում նա ակտիվ և արդյունավետ կերպով կարողանում է կատարել առաջադրված մարտական խնդիրները: Իրավիճակային պատրաստությունն ունի բարդ ու դինամիկ կառուցվածք և արտահայտում է մարդու մտավոր, հուզական, շարժառիթային ու կամային բնութագրերի միագումարությունը:

Ելնելով ստեղծված իրավիճակից՝ զինծառայողը տրամադրվում է իր գործողությունների կատարմանը և ըստ այդմ մտովի կառուցում է իրադարձությունների հնարավոր զարգացման պատկերը: Մարտական գործողություններն սկսվելուն պես նա ուշադրությամբ հետևում է իրավիճակի փոփոխություններին, գիտակցաբար կառավարում է ինքն իրեն:

Մարտին զինծառայողի հոգեբանական պատրաստությունը մարտական գործողություններին ստորաբաժանման պատրաստ լինելու հիմնական բաղադրիչներից մեկն է⁵:

Հոգեբանական պատրաստությունը ենթադրում է.

1. զինծառայողի կողմից հայրենիքի, հարազատների ճակատագրի համար պատասխանատվության գիտակցում, վստահություն իր ուժերի, իր հրամանատարների ու զինակիցների, սպառազինության ու մարտական տեխնիկայի նկատմամբ,

2. մարտնչելու, իր ուժերը փորձելու, հակառակորդին պարտության մատնելու ձգտում, իր թուլությունների հաղթահարում և այլն:

Մարտին զինծառայողի լիարժեք հոգեբանական պատրաստության արտաքին հատկանիշներն են՝

- հանգիստ վարքը,
- կոնկրտիվում բնականոն հարաբերությունների պահպանումը,
- հրամանների անսխալ, հստակ կատարումը,
- նորմալ ֆիզիոլոգիական վիճակը (շնչառություն, դեմքի գույն, անոթազարկի բնականոն հաճախականություն):

Հոգեբանական պատրաստության ձևավորման նպատակով կազմակերպվում են ուսումնամարտական վարժանքներ, որոնց ժամանակ առավելագույնս մանարկվում են մարտական իրադրության պայմանները:

Հոգեբանական պատրաստումը ռազմամանկավարժական գործընթացի

* Ռուսերեն *внимание* և *внимательность* տերմինների դիմաց հայերենում կիրառված են, համապատասխանաբար, «ուշադիրություն» և «ուշադիրության»:

⁵ Տես Ս. Դոխուլյան, Ա. Սյրեպանով, նշ. աշխ.:

տարր է և կարող է արդյունավետ լինել միայն այն դեպքում, երբ իրագործվում է մարտական ուսուցման ընթացքում, այսինքն՝ այն ժամանակ, երբ զինծառայողը լուծում է կոնկրետ խնդիրներ՝ կիրառելով իր գործունեությանը բնորոշ եղանակներ ու միջոցներ: Չէ՞ որ մարտական ուսուցումը կոչված է ձևավորելու կոնկրետ մասնագետի՝ էքսպերտի պայմաններում որոշակի գործողություններ կատարելու հմտությունը: Մակայն դա չի նշանակում, թե հոգեբանական պատրաստումը չունի իր առանձնահատուկ խնդիրները, ձևերը, մեթոդները, հնարները: Պարզապես դրանք պետք է ինտեգրվեն մարտական ուսուցմանը:

Հարկ է նշել, որ գորքերի հոգեբանական պատրաստման արդյունավետության մեծացման հիմնական ուղիներից մեկը կառավարման բոլոր օղակներում ուսուցման արդյունքների սկզբունքային վերլուծությունն է: Դա նպաստում է մրցակցության սկզբունքի զարգացմանը: Վերլուծություն պետք է կատարեն բոլոր մակարդակների հրամանատարները, որպեսզի պատեհաժամորեն ճշգրտվեն և կոնկրետացվեն ուսուցման նպատակներն ու խնդիրները, հաշվի առնվեն ամեն մի ստորաբաժանման պատրաստման առանձնահատկությունները, մեկ շաբաթվա կամ մեկ ամսվա կտրվածքով դրվեն հստակ միջանկյալ խնդիրներ: Արդյունքների ամփոփումը չպետք է լինի ձևական⁶:

Որպեսզի հոգեբանական պատրաստումն իրագործվի մարտական պատրաստման ընթացքում և լինի կառավարելի, անհրաժեշտ է՝

առաջին. պարապմունքների ժամանակ կարգավորել հոգեբանական ծանրաբեռնվածությունը՝ նպատակաուղղված ձևով վերաստեղծելով մարտի հոգեծին գործոնների ազդեցությունը (վտանգ, հանկարծակիություն, անորոշություն, ժամանակի սղություն և այլն),

երկրորդ. գնահատել հոգեբանական կայունության մակարդակը, այսինքն՝ վերահսկել զինծառայողի հոգեվիճակը, վարքը, գործողությունների արդյունքները և այլն:

Այս մոտեցման դեպքում որպես հոգեբանական պատրաստման հիմք կարող են ծառայել բարդ իրավիճակների մոդելները, այսինքն՝ ոչ թե առանձին ստրեստորները, այլ գործունեության մեջ օրգանապես ներառված հոգեբանական գործոնների համախումբը:

Տվյալ մոտեցումը իրագործելու համար անհրաժեշտ է հաղթահարել երկու դժվարություն: Առաջին դժվարությունը տեսական է. հարկ է պարզել կոնկրետ ոլորտներում զինծառայողների գործունեության հոգեբանական պայմանները: Երկրորդ դժվարությունը տեխնիկական է. անհրաժեշտ է մոդելավորել համապատասխան իրադրությունը:

Ինչ վերաբերում է արտասահմանյան առաջավոր փորձին, ապա, ՌԳ ՉՈՒ-ում, օրինակ, կուտակված է համագործային մարտի իրավիճակների մոդելավորման մեծ փորձ, մասնավորապես՝ կիրառվում են այնպիսի հնարներ, ինչպիսիք են՝

⁶ Տես *А. И. Скоробуѳ. Единая система боевой подготовки военнослужащих. «Военная мысль», 2004, № 2:*

- արգելագոտիների հաղթահարում հրազենային կրակի պայմաններում,
- հատուկ զգայական էֆեկտների ստեղծում (կրակահերթ, պայթյուն, աղաղակ, հոտ, դիակների և մարդու մարմնի տարբեր հատվածների կաղապարվածքներ (մուլյաժ) և այլն),
- երկարատև ու դժվար արշավներ և գործողություններ՝ առանց քնելու,
- անձնակազմի իրազեկում մեծ կորուստների մասին՝ շարքում գտնվողներին ներկայացվող պահանջների խստացմամբ:

Միևնույն ժամանակ, ռուսաստանցի մասնագետները նշում են, որ Ռ-Դ ՋՌԻ-ն ապահովված չէ մարտի բարդ իրավիճակների մոդելավորման համար անհրաժեշտ վարժասարքային-նմանարկումային սարքավորանքով⁷:

Տողերիս հեղինակը մշակել ու պատրաստել է հոգեախնայական հետազոտությունների համար նախատեսված հատուկ սարք*:

Տվյալ սարքի կիրառմամբ մոդելավորվել է լեռնային գոտում դարան մտած հակառակորդի գրոհը շարժվող ռազմական ավտոտեխնիկայի վրա և այդ պայմաններում հետազոտվել են անձնակազմի հոգեբանական բնութագրիչները: Գիտավորձին մասնակցած բոլոր զինծառայողներին ըստ արդյունքների կարելի է բաժանել հետևյալ երեք կարգախմբերի:

Առաջին կարգախումբը կազմում են այն զինծառայողները, որոնց մեջ շարժման ռեալ պայմաններում ստրես-գործոնի առկայությամբ նկատելի էր հարմարման հայտանիշ՝ մարդու օրգանիզմի հարմարվողական հակազդումը տարբեր գրգռիչների ազդեցությանը, այսինքն՝ նրանք հաջողությամբ հաղթահարում էին ստեղծված բարդ իրավիճակը առանց հակազդման դանդաղման և առանց սխալների, ընդ որում, բարդ հակազդման ժամանակի զգայական փուլը միջին հաշվով 0,12 վայրկյանով գերազանցում էր շարժումային փուլը:

Երկրորդ կարգախումբը կազմում են այն զինծառայողները, որոնց հակազդման զգայական ու շարժումային փուլերի տևողությունը հարմարման ընթացքում զգալի չափով մեծ էր առաջին կարգախմբի ցուցանիշների համեմատությամբ: Չնայած գործողություններում նկատվող որոշ անվստահության՝ նրանք ևս հաջողությամբ էին հաղթահարում ստեղծված բարդությունները:

Երրորդ կարգախումբը կազմում են այն զինծառայողները, որոնց ստրեսային վիճակը ներքին էներգետիկ ռեսուրսների մոբիլիզացման ժամանակ նյարդային համակարգի թուլության հետևանքով վերածվում էր դիստրեսային վիճակի. առկա էին վախ, խուճապ, մտածողության արդյունավետության կտրուկ անկում և, որպես կանոն, հակազդման ինչպես զգայական, այնպես էլ շարժումային փուլերի մեծ տևողություն:

⁷ Տես *Е. Г. Баранов, М. В. Мурашко, С. В. Мкртчян. Психологические основы боевой деятельности. М., 1999, с. 45:*

* Սարքի մասին ավելի հանգամանորեն տես *Վ. Հ. Մարգարյան, Ռեալ երթևեկության պայմաններում ստրես-գործոնի առկայությամբ վարորդի հակազդման ժամանակի չափումը: «ՀԲ», 1998, հմ. 4: Սարքը արտոնագրվել է ՀՀ Կառավարությանն առընթեր արտոնագրային վարչության կողմից (պատենտ հմ. 557):*

Գիտափորձին մասնակցած զինծառայողները հետազոտվեցին հատուկ մշակված հարցարանի միջոցով: Արդյունքների վերլուծության հիման վրա որոշվեց յուրաքանչյուր զինծառայողի հուզականության մակարդակը, ինչպես նաև արտածվեց նշված գործոններից հակազդման ժամանակի համահարաբերակցային կախման բանաձևը⁸:

Հարկ է նշել, որ զինծառայողի գործունեության հուսալիության խախտումը տեղի է ունենում առավելապես բարդ գործողությունների կատարման փուլում, աշխատանքի կրիտիկական ռեժիմների դեպքում, տեղեկության անորոշության և անսպասելի խնդրահարույց իրավիճակ ստեղծվելու պարագայում: Մեր հետազոտության տվյալների վերլուծությունը ցույց է տալիս, որ մասնագիտական գործունեության մեջ սխալ գործողությունների մեծ մասը տեղի է ունենում զգայալ նկատարակման մակարդակում: Այդ վերլուծությունը հնարավորություն ընձեռեց հայտնաբերելու հետևյալ օրինաչափությունը, որքան մեծ է էքստրենալ պայմաններում իրավիճակին հակազդելու ժամանակի զգայական փուլի տևողությունը, այնքան մեծ է սխալ գործողություն կատարելու հավանականությունը, որը պայմանավորված է մի շարք գործոններով, մասնավորապես՝

1. համապատասխան վերլուծիչների զգայունակության մակարդակով,
2. վերլուծիչների հարմարվողական հնարավորություններով,
3. տարբեր վերլուծիչների փոխգործության օրինաչափություններով,
4. գրգռիչների ֆիզիկական բնութագրիչներով, այսինքն՝ դրանց ներգործության ինտենսիվությամբ, տևողությամբ, տարանջատ կամ միաժամանակյա ներգործությամբ,
5. անհատի առանձնահատկություններով՝ ֆունկցիոնալ վիճակով, մասնագիտական պատրաստվածությամբ, շարժառիթավորման մակարդակով, կոնկրետ ոլորտում գործելու համար հոգեբանական և ֆիզիկական սահմանափակումների առկայությամբ⁹,
6. կոնկրետ գործողությունների կատարմանը պատրաստության մակարդակով:

Հասկանալի է, որ հոգեբանական պատրաստման հիմնական ուղղությունները կապված են մարտի գլխավոր հոգեծին գործոնների հետ: Այդ ուղղություններից հարկ է նշել՝

- բարդ իրավիճակներում աշխատունակության պահպանում,
- գործողությունների կատարում ժամանակի սղության և իրադրության հանկարծակի փոփոխության պայմաններում,
- գործողությունների կատարում անորոշության (տեղեկության պակասի) պայմաններում,
- հատուկ զգայական էֆեկտների կիրառում (հրաձգության, պայթյուն,

⁸ Տես նույն տեղում:

⁹ Տես Վ. Հ. Մարգարյան, Ռ-ազմական տեխնիկայի վարորդների գործունեության հոգեբանական բնութագրերի հետազոտություն: Հոգեբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսություն: Ե., 2001, էջ 88:

ինքնաթիռի և այլ մարտական տեխնիկայի շարժիչների շառաշյուն, ձայն, հրդեհ, սպանվածների և մարմնամասերի կաղապարվածքներ, վիրավորների ճիչ և այլն),

– գործողությունների կատարում տեղեկութային գերբեռնվածության պայմաններում,

– այնպիսի գործողությունների կատարում, որոնք հանգեցնում են ուժերի կորստի, առաջացնում են հոգնածություն,

– գործողությունների կատարում սպասման իրավիճակում,

– գործողությունների կատարում խառնաշփոթի, խուճապի պարագայում:

Այդ ուղղություններով մարտական ուսուցման կազմակերպման համար կարելի է կիրառել հետևյալ միջոցները.

– գործողությունների տեմպի արագացում, դրանց ժամկետների կրճատում,

– նպատակների թվի մեծացում,

– մարտավարական հնարների կիրառմամբ անսպասելի իրավիճակների ստեղծում,

– այնպիսի անկանխատեսելի խոչընդոտների ստեղծում, ինչպիսիք են մարտական հաշվարկից որևէ մեկին գործընթացից դուրսբերումը, անձնակազմին անժանոք գրգռիչների, հատուկ էֆեկտների կիրառումը, տեխնիկական սարքերի կամ դրանց առանձին տարրերի աշխատանքի խաթարման նմանարկումը,

– գործողությունների կատարում՝ անհրաժեշտ տվյալների անբավարարության, հակառակորդի հակազդեցության պայմաններում, մեծ ռիսկի հետ կապված իրավիճակներում,

– այնպիսի խնդիրների առաջադրում, որոնց լուծումը պահանջում է հոգեֆիզիկական ակտիվության մեծացում,

– առաջադրանքների կատարում նմանարկվող մարտական գործողությունների ինտենսիվության կտրուկ փոփոխումներով ստեղծված իրավիճակներում,

– մրցակցային իրավիճակների կիրառում,

– հետզհետե բարդացող խնդիրների առաջադրում:

Յուրաքանչյուր զինժառանգողի հոգեբանական կայունության ընթացիկ մակարդակի գնահատման պարամետրերն են՝

1. տրամադրվածությունը (ակտիվ, պասիվ, բացասական),

2. իր ուժերի նկատմամբ վստահությունը (լիարժեք, մասնակի, անվստահություն),

3. տարբեր իրավիճակներում միևնույն գործողությունների նույնականություն (առանց շեղումների, ոչ էական շեղումներով, էական շեղումներով),

4. տարբեր իրավիճակներում հոգեվիճակի կայունությունը՝ ըստ հետևյալ հատկանիշների.

– անոթազարկ, արյան ճնշում, էլեկտրասրտագիր,

– քրտնազատություն,

– բիբերի նեղացում կամ լայնացում, թարթում,

– շնչառության հաճախականություն, խորություն,

–մկանային ակտիվություն՝ դիմախաղ, կեցվածք, շարժումների բնույթ և լայնույթ,

–ձեռքերի, մարմնի այլ մասերի դող, ջերմաստիճանի կտրուկ տատանումներ:

Այսպիսով՝ մարտական գործողություններին զինծառայողների հոգեբանական պատրաստումը, որը պաշտպանությանը պետության պատրաստման կարևոր բաղադրիչն է, նպատակաուղղված է նրանց հոգեբանական կայունության ապահովմանը: Այն ենթադրում է անհատի վրա նպատակային ներգործություն գիտակցականի, ենթագիտակցականի և հուզականի մակարդակներում: ՌԻստի այդ պատրաստման գործընթացը լայն առումով չի կարող սահմանափակվել միայն զինված ուժերում ծառայության տարիներով, այլ պետք է ընդգրկի անձի սոցիալականացման ամբողջ շրջանը՝ մանուկ հասակից մինչև հասուն տարիքը: Այդ գործընթացը պետք է իրականացվի ազգի և պետության ամբողջ քարոզչական-դաստիարակչական ներուժի կիրառմամբ՝ դառնալով բոլոր պետական և հասարակական կառույցների համար կարևոր համազգային խնդիր:

ПСИХОЛОГИЧЕСКАЯ ПОДГОТОВКА ВОЕННОСЛУЖАЩИХ К АКТИВНЫМ БОЕВЫМ ДЕЙСТВИЯМ КАК ВАЖНАЯ СОСТАВЛЯЮЩАЯ ПОДГОТОВКИ ГОСУДАРСТВА К ОБОРОНЕ

В. Г. МАРГАРЯН, полковник, кандидат психологических наук, доцент, заместитель главного редактора военно-научного журнала «Айккан банак» ИНСИ МО РА

РЕЗЮМЕ

В статье рассмотрен комплекс мероприятий, направленных на формирование у военнослужащих психологической устойчивости к воздействию современных средств вооруженной борьбы и психогенных факторов боя, эмоционально-волевых качеств, необходимых для выполнения боевых задач, снижение вероятности столкновения с неизвестными элементами боя.

Психологическая подготовка может быть эффективной только при ее осуществлении в процессе боевой подготовки. Основой психологической подготовки должны быть модели трудных ситуаций, то есть – не изолированные боевые стрессоры, а совокупность органически включенных в деятельность психологических факторов.

В статье рассматриваются основные виды психологической подготовки (общая, специальная и целевая), виды психологической готовности военнослужащих (общая, ситуационная), а также основные направления психологической подготовки, связанные с наиболее значимыми факторами боя, и пути их реализации с применением конкретных упражнений и приемов.

Представлены параметры-критерии для оценки текущего уровня психологической устойчивости военнослужащего.

Подчеркивается, что эффективность психологической подготовки обеспечивается целевым психолого-педагогическим воздействием на

сознательном, бессознательном и эмоциональном уровнях, что предполагает осуществление такого воздействия в процессе всей социализации личности. Таким образом, психологическая подготовка военнослужащих к активным боевым действиям является общегосударственной задачей с использованием всего воспитательно-пропагандистского потенциала нации и государства, одной из важнейших составляющих подготовки государства к обороне.

SERVICEMEN'S PSYCHOLOGICAL TRAINING FOR ACTIVE
COMBAT ACTIONS AS AN IMPORTANT COMPONENT
OF THE STATE'S PREPARATION FOR DEFENSE

*V. H. MARGARYAN, Colonel, Candidate of Psychological Sciences,
Docent, Deputy Editor-in-Chief of the Defense-Academic Journal
«Haikakan Banak» of the INSS, MoD, RA*

SUMMARY

In the article a complex of measures is examined targeted at forming servicemen's psychological stability for impact of contemporary means of an armed struggle and psychogenic factors of a battle, their emotional and volitional qualities necessary for implementing combat tasks, as well as at reducing probability of a clash with unknown elements of a battle.

Psychological training can be efficient only when it is implemented in the process of combat training. The basis of psychological training should be the models of complicated situations, i. e. not isolated combat stressors, but the totality of organically inserted into the activity of psychological factors.

Basic types of psychological training (common, special and targeted), types of servicemen's psychological readiness (common, situational), as well as basic directions of psychological training, connected with more significant factors of a battle, and the ways of their realization with the use of concrete exercises and methods are examined in the article.

The parameters-criteria for estimating the current level of a serviceman's psychological stability are offered.

It is emphasized that the efficiency of psychological training is guaranteed by the targeted psychoeducational impact at the conscious, unconscious and emotional levels which assumes the implementation of such an impact in the process of the whole socialization of a person. Thus, servicemen's psychological training for active combat actions is an all-state task with the use of the whole educational-propagandistic potential of nation and state, and is one of the most important components of the state's preparation for defense.

**ՄԻՋՊԵՏԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՍՏԱՏՈՒՄԸ
ԵՎ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԵՎ ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ԴԱՇՆՈՒԹՅԱՆ ՄԻՋԵՎ 1991–1997 ԹԹ.**

Լ. Լ. ՈՒԼՈՒԲԱԲՅԱՆ, ԵՊՀ հայ ժողովրդի պատմության ամբիոնի դասախոս



1991 թ. դեկտեմբերի 8-ին Բելովեժսկում Բելառուսի, Ռուսաստանի և Ուկրաինայի ղեկավարները, արձանագրելով ԽՍՀՄ գոյության դադարեցումը, ստորագրեցին Անկախ Պետությունների Համագործակցություն (ԱՊՀ) ստեղծելու մասին համաձայնագիր, որին դեկտեմբերի 21-ին Ալմա Աթայի հռչակագրով միացան ևս ութ նախկին խորհրդային հանրապետություններ, այդ թվում՝ Հայաստանը¹:

Վարչական պայմանագրի կազմակերպության և Խորհրդային կայսրության փլուզումը հանգեցրեց արմատական աշխարհաքաղաքական փոփոխությունների ոչ միայն հետխորհրդային տարածքում, այլև ամբողջ աշխարհում: ԱՄՆ-ի և նրա գլխավորությամբ գործող ռազմաքաղաքական կազմակերպության՝ Հյուսիսատլանտյան դաշինքի (ՆԱՏՕ) ազդեցության աճումը ենթադրում էր ուժերի վերադասավորում նաև Հարավային Կովկասում, որտեղ տիրում էր անկայուն ռազմաքաղաքական իրավիճակ: Ռուսաստանի ազդեցության թուլացման հետևանքով այս տարածաշրջանում առաջացավ որոշակի «քաղաքական վակուում»:

Հարավկովկասյան նորանկախ հանրապետությունները թույլ էին և չէին կարող լրացնել այդ քաղաքական դատարկությունը: Նման իրավիճակը տարբեր պետությունների լայն հնարավորություններ էր ընձեռում Հարավային Կովկաս ներթափանցելու համար: Սուր պայքար ծավալվեց Ռուսաստանի, Թուրքիայի և Իրանի միջև:

Իրանը միշտ ձգտել է իր ազդեցությունը տարածելու Հարավային Կովկասում: Իրանի համար իր մեկուսացման ու շրջափակման ուղղությամբ ԱՄՆ-ի վարած քաղաքականության պայմաններում Հարավկովկասյան տարածաշրջան տնտեսական, քաղաքական ներթափանցումը այդ շրջափակումը հյուսիսային ուղղությամբ ճեղքելու միջոց էր: Դրանով նա նաև խոչընդոտում էր տարածաշրջանում թուրքական ազդեցության տարածմանը:

Թուրքիան, որն օգտվում էր Արևմուտքի աջակցությունից, շեշտելով հետխորհրդային թյուրքալեզու հանրապետությունների հետ լեզվական, պատմամշակութային, էթնիկական ընդհանրությունը, նպատակ ուներ առավելագույնս օգտվելու նախկին Խորհրդային Միության հարավային ծայրամասում, այդ թվում նաև Հա-

¹ Стu «Содружество» (Информационный вестник Советов глав государств и правительств СНГ). Минск, 1992, № 1, сс. 6–8, 15–16:

րավային Կովկասում, ստեղծված աշխարհաքաղաքական վակուումից, հաստատելու այնտեղ իր գերակայությունը: Այդ երկրում ակտիվ կերպով շրջանառության մեջ դրվեցին «նորօսանականությունը» և «նորպանթյունաբանությունը», որոնք կոչված էին Թուրքիայի համար ապահովելու նոր աշխարհաքաղաքական առանցքի և տարածաշրջանային տերության դեր: Նախկին ԽՍՀՄ հարավային շրջաններում Թուրքիայի ազդեցության տարածումը Արևմուտքը դիտում էր որպես այդ շրջաններ Ռուսաստանի «վերադարձը» կանխելու և մահմեդական տարածքներում իրանական ազդեցությանը դիմակայելու միջոց:

Հարավային Կովկասում իրենց ազդեցությունը տարածելու համար պայքարի մեջ մտան նաև ԱՄՆ-ը, որն սկզբնական շրջանում գործում էր Թուրքիայի միջոցով, իսկ հետագայում՝ անմիջականորեն, Արևմտյան Եվրոպայի երկրները, գլխավորապես՝ Ֆրանսիան, Մեծ Բրիտանիան, Գերմանիան:

Այս բոլոր պետությունները ձգտում էին Ռուսաստանին դուրս մղելու Հարավային Կովկասից և այստեղ հաստատելու իրենց տնտեսական, քաղաքական, ռազմական գերակայությունը: Առավել հավանական էր Թուրքիայի կողմից պանթյունաբանական ծրագրերի իրագործումը, ինչը նոր պայմաններում կրկին իրական էր դառնում և սպառնում ինչպես Հայաստանին, այնպես էլ Ռուսաստանի տարածքային ամբողջականությանը:

Պանթյունաբանությանը դիմակայելու առումով Հայաստանի և Ռուսաստանի, ինչպես նաև Իրանի շահերը համընկնում են: Եթե հաշվի առնենք, որ շատ հարցերում այս երեք պետությունների քաղաքական վեկտորները նույն ուղղվածությունն ունեն, ապա կարող ենք խոսել «Մոսկվա–Երևան–Թեհրան» առանցքի մասին:

Անկախության սկզբնական շրջանում նախկին խորհրդային հանրապետությունները չունեին հստակ արտաքին քաղաքական ռազմավարություն, սահմանված առաջնահերթություններ: Դա հանգեցնում էր արտաքին քաղաքական ուղեգծի տատանումների, ձեռնարկվող հակասական քայլերի: Հետխորհրդային առաջին տարիներին ՀՀ ղեկավարությունը հստակ դիրքորոշում չէր որդեգրել Ռուսաստանի նկատմամբ: Վերջինիս ղեկավարությունը ևս հստակ կողմնորոշում չունեի ինչպես Հայաստանի հետ հարաբերությունների հարցում², այնպես էլ առհասարակ Հարավային Կովկասի խնդիրներում: Անհրաժեշտ էր որոշակի ժամանակ, որպեսզի նորանկախ պետությունները կողմնորոշվեին միջազգային հարաբերությունների համակարգում, հստակեցնեին իրենց արտաքին քաղաքական ռազմավարությունը և առաջնահերթությունները:

Հայաստանի արտաքին քաղաքական կառույցների կազմակերպման հետ մեկտեղ շրջանառության մեջ դրվեցին «բոլոր հարևանների հետ բարիդրացիական հարաբերություններ ունենալու» և «չկան մշտական բարեկամներ, կան մշտական շահեր» բանաձևերը: Փորձ էր արվում ՀՀ անվտանգությունն ապա-

² Այդ մասին տես *N. Hovhannisyana. The foreign policy of Armenia. Yerevan, 1998, pp. 17–28; С. Кортунов. Россия ищет союзников. «Международная жизнь». М., 1996, № 5; А. М. Мигранян. Внешняя политика России: катастрофические итоги трех лет. «Внешняя политика и безопасность современной России (1991–1998)», т. 1, кн. 1. М., 1999, сс. 172–174:*

հովել բոլոր ուղղություններով երկխոսության ու համագործակցության պատրաստ լինելու և չեզոք կարգավիճակի հաշվին: Ազգային անվտանգության այդ բաղադրիչը դրվել էր ՀՀ արտաքին քաղաքական ուղեգծի հիմքում, այն գերազնահատվում էր Հայաստանի իշխանական վերնախավի կողմից: Թերագնահատվում էր երկրի տնտեսական, ռազմական հզորացման խնդիրը: Այդ է վկայում Լ. Տեր-Պետրոսյանի հետևյալ միտքը. «Հայաստանի գոյատևման անվտանգության ամենահուսալի երաշխիքը ոչ թե նրա տնտեսական կամ ռազմական հզորությունն է, այլ բոլոր հարևանների հետ նորմալ հարաբերություններ հաստատելը»³:

ՀՀ-ի և ՌԴ-ի միջև հարաբերությունները ձևավորվում էին ինչպես երկկողմ, այնպես էլ բազմակողմ (ԱՊՀ շրջանակներում) ձևաչափով:

Երկկողմ գործընկերային հարաբերությունների հաստատմանն ու զարգացմանը խոչընդոտում էին նաև այնպիսի գործոններ, ինչպիսիք էին տարածաշրջանային և համաշխարհային տերությունների շահերի բախումը, ՀՀ-ում և ՌԴ-ում տիրող ներքաղաքական անկայունությունը, ժողովրդավարական հաստատությունների չկայացածությունը և տնտեսական ճգնաժամը, հաղորդակցության կանոնավոր կերպով գործող ուղիների բացակայությունը:

Այդուհանդերձ, ՀՀ և ՌԴ ռազմաքաղաքական շահերի ընդհանրությունը, տնտեսական փոխգործության մեջ շահագրգռվածությունը, երկու ժողովուրդների միջև գոյություն ունեցող ավանդական կապերը, նրանց մշակույթների մերձավորությունն ի վերջո գերակայեցին վերը նշված հանգամանքներին ու գործոններին և կանխորոշեցին երկու պետությունների ռազմավարական գործընկերությունը:

ՀՀ-ի և ՌԴ-ի միջև միջպետական հարաբերությունների ձևավորման սկիզբը դրվեց երկու հանրապետությունների անկախության փոխադարձ ճանաչմամբ, ինչը տեղի ունեցավ 1991 թ. դեկտեմբերի 17-ին և 18-ին⁴:

Լ. Տեր-Պետրոսյանը և Բ. Ելցինը 1991 թ. դեկտեմբերի 29-ին ստորագրեցին Հայաստանի Հանրապետության և Ռուսաստանի Դաշնության միջև «Բարեկամության, համագործակցության և փոխադարձ անվտանգության» պայմանագիր⁵, որը երկու կողմերի համար առաջին միջպետական հիմնարար փաստաթուղթն էր: Այն դրեց երկու նորանկախ պետությունների միջև քաղաքական հարաբերությունների հիմքը:

Պայմանագրով նախատեսվում էին անվտանգության միասնական համակարգի ստեղծմանը, ՀՀ անվտանգության ապահովմանն ուղղված քայլեր: Դա մեծ նշանակություն էր ստանում հայ-ադրբեջանական հակամարտության և դրա հետ կապված բուրբական միջամտության սպառնալիքի պայմաններում: Այդ քայլերը միտված էին նաև պաշտպանելու Հարավային Կովկասում Ռուսաստանի աշխարհաքաղաքական շահերը, որոնք հաստատվել էին դարերի ընթացքում:

1992 թ. ապրիլի 3-ին՝ Ռուսաստանի արտգործնախարար Ա. Կոզիրևի Երևան

³ Լ. Տեր-Պետրոսյան, Ընտրանի: Ե., 2006, էջ 300:

⁴ Տես «Հայաստանի Հանրապետություն», 1991 թ. դեկտեմբերի 19:

⁵ Տես «Դիվանագիտական բանբեր» (ՀՀ արտաքին գործերի նախարարության բանբեր): Վենետիկ, 1993, հուլիս, էջ 10–13:

կատարած այցելության օրերին, ստորագրվեց համատեղ արձանագրություն Հայաստանի Հանրապետության և Ռուսաստանի Դաշնության միջև դիվանագիտական հարաբերությունների հաստատման մասին⁶: Սա կարևոր քաղաքական իրադարձություն էր, որակապես նոր մերձեցման խորհրդանիշ:

1992 թ. ամռանը ՀՀ-ի և ՌԴ-ի միջև կնքվեցին քաղաքական և ռազմական ոլորտներին վերաբերող մի շարք պայմանագրեր: Միջազգային ասպարեզում երկու պետությունների քաղաքական փոխգործոթյանն էր ուղղված օգոստոսի 21-ին Մոսկվայում երկու նախագահների ստորագրած «Միջազգային հարաբերությունների փոխադարձ հետաքրքրություններ կայացնող խնդիրների շուրջ քաղաքական խորհրդակցությունների մասին համաձայնագիրը»⁷:

Երկու պետությունների միջև ռազմաքաղաքական հարաբերությունների կարգավորման առումով կարևոր նշանակություն ունեին նաև այդ ժամանակ ստորագրված «ՀՀ տարածքում գտնվող ՌԴ զինված ուժերի իրավական կարգավիճակի մասին» և սեպտեմբերին ստորագրված «ՀՀ տարածքում գտնվող ՌԴ սահմանապահ զորքերի կարգավիճակի և նրանց գործունեության պայմանների մասին» պայմանագրերը⁸: Դրանք օրինականացնում և կանոնակարգում էին ԽՍՀՄ փլուզումից հետո Հայաստանում ռուսաստանյան զինված ուժերի ներկայությունը և գործունեությունը: Օրինական հիմունքներով ՌԴ ՉՌԻ-ի ներկայությունը ՀՀ-ում բխում էր վերջինիս շահերից, քանի որ հայկական բանակը և ազգային անվտանգության համակարգը դեռևս կազմավորման փուլում էին: Դա բխում էր նաև ՌԴ շահերից. ապահովում էր նրա ռազմաքաղաքական ներկայությունը տարածաշրջանում, իսկ ռազմավարական առումով՝ նաև ազգային անվտանգությունը:

ԱՊՀ շրջանակներում բազմակողմ համագործակցության առումով էական քաղաքական նշանակություն ուներ 1992 թ. մայիսի 15-ին Տաշքենդում ԱՊՀ անդամ վեց պետությունների, այդ թվում նաև ՀՀ-ի և ՌԴ-ի, կողմից կոլեկտիվ անվտանգության մասին պայմանագրի ստորագրումը, որն սկզբունքորեն նշանակում էր պաշտպանական դաշինք⁹: Փաստաթղթի առավել կարևոր դրույթը հետևյալն է. պայմանագրի մասնակից պետություններից մեկի դեմ ագրեսիան դիտվում է որպես ագրեսիա պայմանագրի բոլոր մասնակիցների դեմ՝ դրանից բխող բոլոր հետևանքներով¹⁰: Մի քանի տարի պահանջվեց, որ պայմանագրի հիման վրա ձևավորվի նրա մասնակիցների կոլեկտիվ անվտանգության համակարգը, իրական բովանդակությամբ լցվի այդ համակարգի ռազմական բաղադրիչը: Դրան նպաստեցին նաև պայմանագրի մասնակիցների միջև ձեռք բերված երկկողմ պայմանագրերը և պայմանավորվածությունները, այդ թվում նաև Հայաստանի և Ռուսաստանի միջև:

⁶ Տես «Հայաստանի Հանրապետություն», 1992 թ. ապրիլի 4:

⁷ Տես ՀՀ արտաքին գործերի նախարարության արխիվ. ց. 3, գ. 110, քք. 1–3:

⁸ Տես *Г. Тущенко*. Вооруженные силы и военно-политический курс Армении. «Армения: проблемы независимого развития». М., 1998, с. 560:

⁹ Տես «Содружество», 1992, № 5, сс. 9–11:

¹⁰ Տես նույն տեղում, էջ 9:

Երկու պետությունների միջև տնտեսական պայմանագրերի մեծ փաթեթ ստորագրվեց 1992 թ. սեպտեմբերի 30-ին Երևանում: Դրանցից նշենք ազատ առևտրի կազմակերպման, միասնական դրամական համակարգի և համաձայնեցված դրամավարկային ու տարադրամային քաղաքականություն վարելու, 1993 թ. առևտրատնտեսական համագործակցության մասին համաձայնագրերը¹¹: Այդ ժամանակահատվածում Վրաստանում տիրող անկայուն իրավիճակը, Ադրբեջանի կողմից Հայաստանի շրջափակումը խոչընդոտում էին Հարավային Կովկասում հաղորդակցության ուղիների աշխատանքին, ինչը բարդություններ էր առաջացնելու կնքված պայմանագրերի իրագործման համար: Այնուամենայնիվ, այդ փաստաթղթերը կարևոր նշանակություն ունեին երկու երկրների միջև առևտրատնտեսական կապերը զարգացնելու, բազմակողմանի համագործակցության պայմանագրաիրավական հիմքերն ընդլայնելու և ամրապնդելու համար:

Առևտրատնտեսական համագործակցության մասին պայմանագրեր ՀՀ և ՌԳ կառավարությունները կնքեցին նաև հաջորդ տարիներին¹²: Դա նպաստեց երկու երկրների միջև կայուն միջպետական առևտրատնտեսական հարաբերությունների հաստատմանը: 1996 թ. ՀՀ-ից ԱՊՀ երկրներ արտահանման ընդհանուր ծավալի 78,1 %-ը և այդ երկրներից Հայաստան ներմուծման ծավալի 46,4 %-ը բաժին էր ընկնում ՌԳ-ին, 1997 թ. առաջին կիսամյակում՝ համապատասխանաբար 74,1 % և 46,4 %¹³:

ՀՀ և ՌԳ առևտրատնտեսական համագործակցությանն ուղղված քայլեր ձեռնարկվում էին նաև ԱՊՀ շրջանակներում: ԱՊՀ անդամ պետությունների միջև առևտրատնտեսական կապերը խթանելու առումով կարևոր նշանակություն ունեւ ազատ առևտրի գոտու ստեղծման մասին 1994 թ. ապրիլի 15-ին Մոսկվայում ստորագրված համաձայնագիրը¹⁴:

Ռիսունմասիրվող ժամանակաշրջանում ՀՀ-ի և ՌԳ-ի միջև կառավարությունների և նախարարությունների մակարդակով կնքվեցին նաև պայմանագրեր գիտության, կրթության, մշակույթի բնագավառներում համագործակցության վերաբերյալ¹⁵:

1994 թ. Ռուսաստանը որոշակիորեն վերանայեց ու հստակեցրեց իր ռազմավարական շահերի տիրույթը՝ դիմելով մի շարք քայլերի, որոնք համաշխարհային հանրությունը որակեց որպես գերտերության կորցրած կարգավիճակի վերականգնման փորձ: Արտաքին քաղաքականության այս շրջադարձով էր պայմանավորված Հայաստանի հետ ավելի սերտ ռազմական համագործակցությանն ուղղված մի շարք պայմանագրերի կնքումը և ՀՀ տարածքում գորակայան հիմնելու մասին պայմանագրի նախապատրաստական աշխատանքների ակտիվացումը: Այդ շրջադարձով էր պայմանավորված նաև ԼՂՀ-Ադրբեջան հակամար-

¹¹ Տես «Գիվանագիտական բանբեր», 1993 թ. հուլիս, էջ 16–17:

¹² Տես «Бюллетень международных договоров». М., 1994, № 9, сс. 52–54 и 1995, № 8, сс. 28–30:

¹³ Տես «Статистический бюллетень» (Межгосударственный статистический комитет СНГ). Минск, 1997, № 4, с. 97:

¹⁴ Տես «Бюллетень международных договоров», 1994, № 9, сс. 10–18:

¹⁵ Տես նույն տեղում, էջ 91–96, 357–359, 684–688:

տությամբ գոտում ՌԳ-ի ակտիվ միջնորդությամբ 1994 թ. մայիսին հաստատված հրադադարը, որը, չնայած համընդհանուր հրադադարի մասին պայմանագրի կնքմանը նպատակաուղղված բանակցությունների բարդ ընթացքին՝ կապված ԵԱՀԽ և ՌԳ-ի տարածայնությունների հետ, մինչև օրս պահպանվում է:

ՌԽումնասիրվող ժամանակաշրջանում հայ-ռուսական միջպետական հարաբերություններն առանձնապես արդյունավետ էին զարգանում ռազմաքաղաքական ոլորտում՝ աստիճանաբար հասնելով ռազմաքաղաքական դաշինքի մակարդակի: Այդ դաշինքի անկյունաքարը Հայաստանում ռուսաստանյան զորակայանի մասին պայմանագիրն է: Այն ստորագրեցին ՀՀ և ՌԳ նախագահները 1995 թ. մարտի 16-ին Մոսկվայում¹⁶: Պայմանագրի համաձայն զորակայանի խնդիրներն են՝ ՌԳ ռազմավարական շահերի ապահովումը և ՀՀ ՋՌԻ-ի հետ համատեղ նախկին ԽՍՀՄ արտաքին սահմանի հատվածով ՀՀ անվտանգության ապահովումը: Փաստաթուղթն ստորագրող կողմերը նշեցին, որ այն ուղղված չէ որևէ երրորդ պետության դեմ և լիովին համապատասխանում է ՄԱԿ-ի և ԵԱՀԿ-ի նպատակներին ու սկզբունքներին¹⁷:

Պայմանագիրը մեծ նշանակություն ուներ և՛ ՀՀ-ի, և՛ ՌԳ-ի համար: Դրա շնորհիվ Հայաստանում ռուսական զորքերի ներկայության իրավական ձևակերպումը՝ ռազմակայանի կարգավիճակով, համապատասխանեցվեց ընդունված միջազգային նորմերին: Պայմանագիրը սահմանում էր Հայաստանի և Ռուսաստանի զինված ուժերի միջև փոխգործության շրջանակները, ամրապնդում երկու երկրների միջև համագործակցության իրավական հիմքերը, ԱՊՀ երկրների կոլեկտիվ անվտանգության համակարգը: Պայմանագրի կնքմամբ դրվում էին ՀՀ և ՌԳ ռազմաքաղաքական դաշինքի հիմքերը, որը Հայաստանի ազգային անվտանգության համակարգի բաղկացուցիչ մասն է¹⁸: Եթե հաշվի առնենք ՆԱՏՕ–Ռուսաստան հակասությունները, ՆԱՏՕ-ի ընդարձակումը դեպի արևելք, Ռուսաստանը մեկուսացնելու և թուլացնելու ծրագրերը, որոնք նախատեսվում էին այդ ժամանակ լայն տարածում գտած արևմտյան ազատականացման մոդելներով (տեսաբաններ Բեթվինսկի, Քիսինջեր, Հանթինգթոն), ապա տվյալ պայմանագիրը կարևոր նշանակություն ուներ Ռուսաստանի ընդհանուր աշխարհաքաղաքական շահերի պաշտպանության առումով:

ՀՀ-ի և ՌԳ-ի միջև ռազմավարական գործընկերության զարգացումը օրինաչափորեն տանում էր դեպի միջպետական դաշնակցային հարաբերությունների հաստատում: Դրա համար ամուր իրավական հիմք էր ստեղծում 1997 թ. օգոստոսի 29-ին Մոսկվայում նախագահներ Լ. Տեր-Պետրոսյանի և Բ. Ելցինի ստորագրած «Բարեկամության, համագործակցության և փոխադարձ օգնության մասին» պայմանագիրը¹⁹, որով ուժը կորցրած ճանաչվեց 1991 թ. դեկտեմբերի 29-ի պայ-

¹⁶ Տես «Дипломатический вестник». М., 1995, № 4, с. 36:

¹⁷ Տես նույն տեղում:

¹⁸ Տես «ՀՀ ազգային անվտանգության ռազմավարություն»: «Հայկական բանակ» ռազմագիտական հանդեսի հատուկ թողարկում, 2007, էջ 37:

¹⁹ Տես «ՀՀ միջազգային պայմանագրերի ժողովածու (1996–1998)»: Ե., 2002, հմ. 2, էջ 409–414:

մանագիրը: Պայմանագրով ամրագրվում էին երկու պետությունների քաղաքական, պաշտպանական, տնտեսական ոլորտներում համընկնող շահերի առկայությունը, համընդհանուր և տարածաշրջանային խնդիրների նկատմամբ մոտեցումների ընդհանրությունը:

Փաստաթղթի համաձայն՝ պայմանավորվող կողմերը պարտավորվում էին միմյանց հետ սերտորեն համագործակցել ՀՀ և ՌԴ ինքնիշխանության, տարածքային ամբողջականության պաշտպանության և անվտանգության ապահովման գործում: Նախատեսվում էր միմյանց ցուցաբերել «անհրաժեշտ օգնություն, ներառյալ ռազմական՝ ՄԱԿ-ի Կանոնադրության 51-րդ հոդվածին համապատասխան հավաքական ինքնապաշտպանության իրավունքի իրականացման կարգով»²⁰:

Պայմանագիրն ուղղված էր նաև երկու երկրների միջև տնտեսական ինտեգրման խորացմանը, զիտության ու մշակույթի տարբեր ոլորտներում կապերի ամրապնդմանը: Նրա գործողության ժամկետը 25 տարի է՝ հետագա 10-ամյա ժամանակահատվածներով երկարաձգելու հնարավորությամբ:

1997 թ. պայմանագիրն ամրապնդում է Ռուսաստանի Դաշնության և Հայաստանի Հանրապետության միջև ձեռք բերված քաղաքական փոխըմբռնման բարձր մակարդակը և իրավական հիմք ստեղծում երկու երկրների միջև ռազմավարական գործընկերության հետագա զարգացման համար:

Ռխումնասիրելով հայ-ռուսական միջպետական հարաբերությունները 1991–1997 թթ.՝ գալիս ենք այն եզրակացության, որ ԽՍՀՄ փլուզումից և անկախության ձեռքբերումից հետո ՀՀ-ի և ՌԴ-ի միջև հարաբերությունները միջազգային նոր պայմաններում, փոխադարձ հետաքրքրությունների և համընկնող շահերի փնտրտուքի բարդ ճանապարհ են անցել: Այդ հարաբերությունները զարգանում էին հետխորհրդային ամբողջ տարածքի և Հարավկովկասյան տարածաշրջանի ինտեգրային և ապահովագրային միտումների բարդ խաչաձևման ազդեցության տակ՝ բազմաթիվ քաղաքական, տնտեսական, սոցիալական, ռազմական գործոնների ֆոնի վրա: Խորհրդային Միության փլուզմանը հաջորդած առաջին երկու-երեք տարիներին ՀՀ և ՌԴ հարաբերություններում չկար համալիր մոտեցում երկկողմ համագործակցությանը: Երկու նորանկախ պետությունները չունեին հստակ մշակված արտաքին քաղաքական ռազմավարություն, փորձարկում էին քաղաքական տարբեր տեսություններ և բանաձևեր: Սակայն 1994–1995 թթ. բեկում տեղի ունեցավ: Չնայած դարավերջի միջազգային նոր պայմաններին՝ պատմական օրինաչափությունները շարունակում էին ազդել իրադարձությունների ընթացքի վրա: Երկու երկրների՝ դարերի ընթացքում ձևավորված քաղաքական, ռազմական, տնտեսական ռազմավարական շահերի ընդհանրությունը, երկու ժողովուրդների դարավոր բարեկամությունը հանգեցրին հայ-ռուսական հարաբերությունների աստիճանական սերտացմանը:

Ռխումնասիրվող ժամանակաշրջանում հաստատված հայ-ռուսական ռազմավարական դաշնակցային հարաբերությունները հետագա տարիներին շարունակե-

²⁰ Նույն տեղում, էջ 410:

ցին զարգանալ և պահպանվում են մինչ օրս՝ ավելի խորանալով ու ներառելով նոր ոլորտներ: Երկկողմ տնտեսական հարաբերությունների վերաբերյալ հարկ է նշել, որ վերջին տասնամյակի ընթացքում անընդհատ աճել են Հայաստանի տնտեսության մեջ ռուսական ներդրումները: Այսօր Հայաստանը և Ռուսաստանը, ԱՊՀ անդամ մի շարք պետությունների հետ, համատեղ ծրագրեր են մշակում և իրականացնում՝ համաշխարհային տնտեսական ճգնաժամին դիմակայելու նպատակով²¹:

ՀՀ-ի և ՌԳ-ի միջև ռազմավարական դաշնակցային հարաբերությունների պահպանման և ամրապնդման մասին է վկայում 2000 թ. սեպտեմբերին Մոսկվայում նախագահներ Ռ. Քոչարյանի և Վ. Պուտինի ստորագրած Հռչակագիրը՝ 21-րդ դարում Ռուսաստանի և Հայաստանի դաշնակցային փոխգործության մասին, որի հիմքում 1997 թ. օգոստոսի 29-ի պայմանագիրն է²²:

Վերջին տասնամյակում Ռուսաստանը, Հայաստանի համաձայնությամբ, միջոցառումներ է իրականացրել՝ ուղղված ՀՀ տարածքում տեղակայված իր ստորաբաժանումների հզորացմանը, լրացուցիչ սպառազինմանը և վերազինմանը: Այս առումով կարևոր նշանակություն ունեին հակաօդային պաշտպանության զորքերի խմբավորման հզորացումը, Ս-300Վ զենիթահրթիռային համալիրների տեղադրումը: Հայաստանը և Ռուսաստանը ԱՊՀ անդամ այն պետություններից են, որոնց նախաձեռնությամբ 2002 թ. ստեղծվեց Հավաքական անվտանգության պայմանագրի կազմակերպությունը (ՀԱՊԿ), որն ունի միջազգային, տարածաշրջանային կազմակերպության կարգավիճակ:

Ռուսաստանի ռազմական ներկայությունը Հայաստանում, հայ-ռուսական ռազմավարական գործընկերությունը այսօր էլ շարունակում են էական դեր խաղալ երկու պետությունների ազգային անվտանգության, տարածաշրջանում աշխարհաքաղաքական կայունության ապահովման գործում:

²¹ Տես «Внеочередное заседание Межгоссовета ЕврАзЕС» (<http://www.evrases.com/ru/main/messagepage/835/>):

²² Տես «Հայաստանի Հանրապետություն», 2000 թ. սեպտեմբերի 29:

ПОЛИТИЧЕСКАЯ ИСТОРИЯ

УСТАНОВЛЕНИЕ И РАЗВИТИЕ МЕЖГОСУДАРСТВЕННЫХ ОТНОШЕНИЙ МЕЖДУ РЕСПУБЛИКОЙ АРМЕНИЯ И РОССИЙСКОЙ ФЕДЕРАЦИЕЙ В 1991 – 1997 ГГ.

А. Л. УЛУБАБЯН, лектор кафедры истории армянского народа ЕГУ

РЕЗЮМЕ

В первые годы независимости правящие элиты Армении и России не имели четко выработанной внешнеполитической стратегии, что приводило к колебаниям их внешнеполитического курса. В начале исследуемого периода в отношениях между Республикой Армения и Российской Федерацией отсутствовал комплексный подход к развитию двустороннего сотрудничества.

Перелом произошел в 1994–1995 гг., когда политическое руководство обоих государств, в том числе и под влиянием исторических тенденций, пришло к пониманию общности политических, военно-стратегических, экономических интересов двух стран, безальтернативности курса на стратегическое партнерство. В исследуемый период армяно-российские отношения наиболее успешно развивались в военно-политической сфере, достигнув уровня военно-политического союза. Основой этого союза стал Договор о российской военной базе на территории Армении, подписанный 16 марта 1995 г. Постепенно высокий уровень двустороннего сотрудничества распространился на другие сферы межгосударственных отношений. Это было закреплено в августе 1997 г. подписанием Договора о дружбе, сотрудничестве и взаимной помощи. Договор 1997 г. поднял армяно-российские отношения на качественно новый уровень и стал юридической основой для дальнейшего развития стратегического партнерства между Арменией и Россией.

POLITICAL HISTORY

THE ESTABLISHMENT AND DEVELOPMENT OF INTERSTATE RELATIONS BETWEEN THE REPUBLIC OF ARMENIA AND THE RUSSIAN FEDERATION IN 1991–1997

L. L. ULUBABYAN, Lecturer at the Chair of Armenian History at the YSU

SUMMARY

In the first years of the Independence ruling elites of Armenia and Russia had no precisely elaborated foreign policy strategy that led to fluctuations of their foreign policy. In the beginning of the studied period there was no complex approach to developing bilateral cooperation in relations between the Republic of Armenia and the Russian Federation.

A sudden change occurred in 1994–1995, when the political leadership of both states, including under the influence of historical tendencies, came to understand a community of political, military-strategic, economic interests of two countries, an uncontested variant of the course towards strategic partnership. The Armenian–Russian relations were developing most successfully in the studied period in the military-political sphere, having reached a level of the military-political union. A basis of this union became the Treaty on the Russian military base in Armenia's territory, signed on the 16th of March, 1995. Gradually a high level of bilateral cooperation extended on other spheres of interstate relations. It was fixed in August, 1997 by signing the Treaty on friendship, cooperation and mutual aid. The Treaty of 1997 raised the Armenian–Russian relations on a qualitatively new level and became a legal basis for the further development of strategic partnership between Armenia and Russia.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՌԱՋԻՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՀՐԱՅԱՆԱԶԳԱՅԻՆ ԳՆԴԵՐԻ
ՁԻՆՎՈՐԱԿԱՆ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ

Մ. Լ. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ, պատմական գիտությունների դոկտոր

1918 թ. մայիսին՝ հայկական պետականության վերականգնման հետ միաժամանակ, կազմակերպվեցին նաև Հայաստանի առաջին հանրապետության Ձինված ուժերը, որոնց հիմքն էին կազմում Հայկական բանակային կորպուսի զորամասերը և ստորաբաժանումները: Հայկական բանակը համալրվում էր Հայաստանի խորհրդարանի ընդունած օրենքներով իսկական զինվորական ծառայության զորակոչվող, 18 տարին լրացրած քաղաքացիներով, որոնք չունեին համապատասխան պատրաստություն¹:



Պահպանվել է հայ զինուժի նվիրյալներ Գարեգին Նժդեհի և Շերամի մշակած «Ձինվորական մարզանք և կանոնադրություն Երևանյան 1-ին և 2-րդ հրացանաձիգ գնդերի. նվեր հայ քաջարի զինվորներին Նժդեհից և Շերամից» խորագրով զինվորական կանոնադրությունը²: Այն մի կարևոր փաստաթուղթ է, որը բովանդակում է հստակ կարգ, ուսանելի խորհուրդներ, ցուցումներ և առաջարկություններ:

Կանոնադրությունը բաղկացած է 8 բաժիններից: Առաջին բաժնում ներկայացված է զորաշարային կանոնադրությունը (հետևակային): Ընդգծվում է, որ «Դեկավարները իրենց կամքը յայտնում են ազդարարներով, նշաններով և հրամաններով: Ազդարարը բաժանում է երկու մասի՝ *նախապարաստական և կատարողական*: Նախապատրաստական մասը արտասանում է բարձր, իսկ կատարողականը կարճ և շեշտակի (արտասանված բարձր): Ազդարարողների տոնը պետք է լինի պարզ և ոգևորիչ: Նշանները տալիս են ձեռքով կամ սրով»²:

1-ին, 2-րդ և 3-րդ կետերում ներկայացված են զինվորի անհատական վարժություններն առանց հրացանի, հրացանով և սվինամարտի կանոնները:

4-րդ և 5-րդ կետերում շարադրված է թշնամուն հետ մղելու և հրացանի կոթով հարվածելու կարգը: Կանոնադրության 6-րդ կետում գետեղված է ջոկատային վարժությունների կատարման կարգը³:

¹ Տես Հայաստանի ազգային արխիվ, ֆ. 199, ց. 1, գ. 41, ք. 34:

² Կանոնադրությունը, որը հրատարակվել էր Երևանում 1918 թ., գիտական շրջանառության մեջ է դրվում առաջին անգամ:

³ «Ձինվորական մարզանք և կանոնադրություն Երևանյան 1-ին և 2-րդ հրացանաձիգ գնդերի. նվեր հայ քաջարի զինվորներին Նժդեհից և Շերամից», էջ 3:

³ Տես նույն տեղում, էջ 3–10:

Կանոնադրության 2-րդ բաժնում ներկայացված է զինվորական կարգապահական կանոնադրությունը: Նժդեհը և Շերամը շեշտում են.

«Ձինորական կարգապահությունը, որ կազմում է ամեն մի բանակի ուժը, պետք է աստիճանաբար ներշնչել զինորներին:

Ձինորական դիսցիպլինան կայանում է՝

Ա.— Ձինորական օրէնքներով նախորոշված կանոնների ճշտի կատարման:

Բ.— Մեծատրների հրամանները անտրտունջ և իր ժամանակին կատարելու:

Գ.— Աստիճանատրների պատուապահութեան մէջ (զինորական դիսցիպլինան) պահանջում է՝ բարեխիղճ և անձնուէր վերաբերմունք դէպի ծառայությունը և պարտականությունները:

Դ.— Ընկերական վերաբերմունք դէպի հաւասարները և պատշաճ վերաբերմունք դէպի քաղաքացիները:

Ե.— Անպատիժ չքողնել ստորադրեալների և ո՛չ մի զանցառությունը»:

«Ծառայութեան շահը - ասված է կանոնագրում - պահանջում է հրամանատարներից լինել արդարադատ, հայրաբար հոգալ իւր ստորադրեալների կարիքները, լինել նրանց խորհրդատուն, խուսափել անտեղի խստութիւնից, որը չի արդարացում ծառայութեան պահանջներով, և զարգացնել ու վառ պահել զինորների մէջ իրենց բարձր կոչման (հայրենիքի պաշտպանութեան) գիտակցութիւնը»⁴:

Այնուհետև Նժդեհը և Շերամը ներկայացնում են կարգապահական զանցառությունները, ինչպես նաև այն պատիժները, որոնց ենթակա են զինվորները, ութնապետերը, հիսնապետերը և փոխհիսնապետերը:

Այնտեղ ասված է՝

«Կարգապահական է կոչում այն պատիժը, որը տրուում է մեծատրների իշխանութեամբ, առանց դատի:

Կարգապահական պատիժների ենթակայ են այն բոլոր չնչին յանցանքները-զանցառությունները, որոնց համար յանցաւորը դատի չի ենթարկուում (պատուապահութեան դէմ մեղանշելը, աստիճանատրներին զինորական պատիւ չը տալը, հասարակական վայելչութեան և հանգստի խանգարումը)...

VI Ոչ կարգապահական յանցանքներ, որոնց համար զինորները հանձնուում են դատի

Ա.— Շարքերն առանց հրամանի լքելը.

Բ.— Ձինորական պիտույքները ծախելը.

Գ.— Դիտաւորեալ կերպով խմբի մէջ պառակտում առաջացնելը.

Դ.— Գողութիւն.

Ե.— Անբարոյականութիւն.

Զ.— Արբեցողութիւն»⁵:

Կարգապահության ամրապնդման համար հեղինակները մեծ ուշադրություն են դարձնում այն հանգամանքին, որ պաշտոնյաները և զորամասի հերթապահը պատշաճ կերպով կատարեն իրենց պարտականությունները:

⁴ Նույն տեղում, էջ 11–12:

⁵ Նույն տեղում, էջ 12–14:

«1—Չօրամասի հերթապահները և ժամապահները պետք է հսկեն, ամեն մեկը, իրենց պարտականությունների սահմանում - պետք է կատարեն այն բոլորը, ինչ որ հրամայում է ներքին ծառայությունը:

2—Պաշտօնեաներից ոչ մեկը իրատունք չունի իր պարտականությունները թողնելու առանց պատշաճ հրամանի:

3—Բոլոր հերթապահներին և ժամապահներին խստիւ արգելում է պաշտօնավարութեան ամբողջ ժամանակը շորերը կամ գէնքերը (դանակ, խշտիկ, ատրճանակ) հանել վրայից»⁶:

5-րդ կետով սահմանվում է հրամանատարին զորամասի հերթապահի զեկուցման կարգը:

8-րդ կետում սահմանվում է զորամասում նոր և հին հերթապահության ընդունման և հանձնման կարգը:

«9—Չօրամասի հերթապահը պատասխանատու է կարգ ու կարգապահութեան համար: Հերթապահութեան ժամանակ նա մի քանի անգամ, գլխաւորապէս գիշերը, պատում է բոլոր շինությունները հսկելով զինուորների և հերթապահների կարգապահութեան վրայ:

10—Նա հսկում է սենեակների մաքրութեան, լուսաւորութեան և օդափոխութեան վրայ:

11—Չօրամասի հերթապահը ամբողջ հերթապահութեան ժամանակը չպետք է հեռանայ զօրանոցից:

12—Նա նայում է և իր տեղակալին ուղարկում զանազան հերթախմբեր, որոնք նշանակուած են զօրամասից:

13—Նա հրամայում է ժամանակին տալ զանազան սիգնալներ ներքին ծառայությունների և վարժությունների համար:

14— Դաշի կամ ընթրիքի ժամանակ նա սեղանատուն է գնում, կամ ուղարկում իր օգնականին, կարգը պահպանելու համար:

15—Նա հսկում է բանտարկեալների օրինաւոր պահելու վրայ և թոյլատրում է տեսակցութիւն նոցա հետ:

16—Նա է ընդունում նոյնպէս մասնաւոր մարդկանցից զինուորների վրայ եղած զանգատները, գրելով անունը, ազգանունը և հասցեն:

17—Նա զօրամասում անկարգութիւնը զսպելու համար կարող է ձերբակալել մեղաւոր զինուորին, յայտնելով այդ մասին հրամանատարին»⁷:

Կանոնադրոյթյան 3-րդ և 4-րդ բաժիններում շարադրված են հրացանաձգութեան ուսուցման եղանակները և գնդակի վրիպման պատճառները: Ընդգծվում է, որ «Հրացանաձգութեան սկզբնական եղանակները պետք է զարգացնել աստիճանաբար»⁸: Շեշտվում է, որ «Հրացանը լցնելու արագութիւնը պետք է հասցնել ծայրահեղութեան, այնպէս որ այդ գործողութիւնը կատարուի մեքենաբար (չվրդովել

⁶ Նույն տեղում, էջ 14—15:

⁷ Նույն տեղում, էջ 16—17:

⁸ Նույն տեղում, էջ 19:

հրացանաձգին և չհեռացնել նրա ուշադրությունը նշանառութեան կէտից (նպատակից)»⁹:

Նժդեհի և Շերամի համոզմամբ.

«1—Հրացանաձգութիւնը՝ տեխնիկային կրակելու գիտակ (լաւ զինավարժ) բանակի համար ծառայում է որպէս լաւագույն միջոց, որպէսզի առաջ խաղացման դէպքում - սիւնի համար ճանապարհ բանայ, իսկ դիմադրութեան ժամանակ. ետ մղել նոյնիսկ (թշնամու) գերադաս ոյժը:

2—Հրացանաձգութեամբ լուրջ հետևանքի հասնելու համար, կռուի ժամանակ, անհրաժեշտ է—

Որպէսզի նպատակի ընտրութիւնը և կրակի տեսակների գործածութիւնը համապատասխանեն պատերազմական յարկի տակտիկական պահանջներին:

3—Կրակը ներգործական է—

Ա Երբ ղեկավարները կարող և հաստատ կերպով ղեկավարում են հրացանաձգութեան:

Բ Երբ հրացանաձիգները պահպանում են սառնասրտութիւն, դիսցիպլինա և անսխալ կրակելու ընդունակութիւն»¹⁰:

Այնուհետև Նժդեհը և Շերամը զգուշացնում են գնդակի վրիպման պատճառների մասին՝

«Կրակի միայն այն ժամանակ, երբ տեսնում ես թշնամուն և ճշտի չափել ես տարածութիւնը», ահա Նժդեհի և Շերամի պահանջը¹¹:

Կանոնադրության 5-րդ բաժնում շարադրված են հրացանաձիգ զինվորներին ներկայացվող պահանջները:

«1—Գիտակցի՛ր յիսնեակիդ գործողութիւնների նպատակը և մարտական խնդիրը:

2—Կապ պահպանի՛ր հարևաններիդ հետ և կարիք եղած դէպքում՝ օգնի՛ր նրանց:

3—Պահպանի՛ր բացարձակ լռութիւն:

4—Այն հեռաւորութեան վրայ, որ կարելի է գործածել մշտական ուղեցոյցը կրակի ինքնուրոյնաբար:

5—Երբ հարկաւոր է օգտուի՛ր ամրոցային գործիքներից:

6—Առաջխաղացման ժամանակ—թշնամու կրակի տակ վազիր կռացած, իսկ անհրաժեշտ եղած դէպքերում, առաջացի՛ր սողալով:

7—Հրամաններ ստանալու անկարելիութեան դէպքում, գործի՛ր անկախօրէն, աշխատելով իրագործել ընդհանուր նպատակը:

8—Վիրաւորուեց, սպանուե՞ց յիսնապետդ, անցի՛ր նրա տեղը»¹²:

9-րդ, 10-րդ, 11-րդ և 12-րդ կետերում շարադրված է հրացանաձիգ զինվորի

⁹ Նույն տեղում, էջ 19—20:

¹⁰ Նույն տեղում, էջ 20—21:

¹¹ Նույն տեղում, էջ 25:

¹² Նույն տեղում, էջ 26:

հարձակողական և պաշտպանողական մարտավարությունը, որի առանցքը տեղանքի ճիշտ օգտագործումն է:

13-րդ և 14-րդ կետերում ներկայացված է թշնամու վրա կրակ բացելու, իսկ 15-րդ կետում՝ գրոհ կազմակերպելու կարգը: Այնուհետև հրահանգվում է.

«16—Դիրքից-դիրք անցնելու ժամանակ «յառաջ վազ» ազդարարը լսելուն պես կանգնիր և արագօրէն վազիր (կռացած) դէպի ցոյց տուած առարկան:

17—«Կանգնիր» ազդարարը լսելուն պես պատկիր և յարմարուիր տեղին:

18—Յիսնապետիդ սուլիչի ձայնը լսելուն պես դադարեցրու կրակը և գլուխըդ դարձրու դէպի նա»¹³:

Կանոնադրության 6-րդ բաժնում ներկայացված են նշանառության կանոնները:

Կանոնադրության 7-րդ բաժնում շարադրված են հրամանատար–զինվոր հարաբերությունները, հրացանածիզ-զինվորին ներկայացվող պահանջները: Նժդեհի և Շերամի հանգամանք՝ պատերազմում թշնամուն հաղթելու համար հրացանածիզ զինվորը պետք է պահպանի երեք կարևոր պահանջներ՝ ճշտիվ կատարի իշխանավորների հրամանները, լինի արագաշարժ, խիզախ վերաբերմունք ցուցաբերի թշնամու նկատմամբ:

«1—Օղակապետը վերցնում է մի քանի զինուորներու և առանձին առանձին հարցնում է:

—Ի՞նչպէս կը յաղթես դիմացիդ թշնամուն.

—Առաջ կը խաղամ կրակելով, եթէ չկարողացայ սպաննել գնդակով, կսպաննեմ դանակով:

2—Օղակապետը հրամայում է զինուորի առաջ խաղալ ու ինքը դիտում է:

Ա—Ոտքի՛ մօտ է բռնած հրացանը,

Բ—Օգտու՞մ է տեղից թշնամուն չերևալու,

Գ—Ո՛րտեղ կանգ առաւ, ինչո՞ւ, և ո՞ր յենեց հրացանը.

Դ—Լա՞ւ է դիրքը, եթէ լաւ է ի՞նչու, եթէ վատ է, ի՞նչու,

3—Յետոյ բացատրում է կանգ առնելու պատճառները:

4—Օղակապետը դիտում է, թէ ի՞նչպէս է զինուորը որոշում տարածութիւնը, ի՞նչպէս է դնում ուղեցոյցը, ո՞ր է տանում նշանառութեան կէտը, ինկատի առնում է քամին և ուրիշ մթնոլորտային պայմաններ:

5—Օղակապետը հրամայում է յառաջանալ, և եթէ զինուորը կանգ առնէ բաց դաշտի մէջ, հարցնում է

—Ո՞ր դրութիւնից կը կրակես

—Որից կարելի է անխալ խփել, և որը թոյլ է տալիս չտեսնուիլ թշնամուց:

6—Եթէ առաջդ ունես ընկեր և նա առաջանում է, կօգնես նրան, և ի՞նչպէս:

—Այդ բոպէին կը կրակեմ, որ թշնամին հնարաւորութիւն չունենայ կրակելու ընկերոջս վրայ:

7—Օղակն. —Եթէ ընկերդ վիրաւորուեց, կամ սպանուեց, ի՞նչ կանես դու,


¹³ Նույն տեղում, էջ 27:

—Կը վերցնեն նրա փանփուշտները և առաջ կը խաղամ (չի թյլատրում մնալ զարնուած ընկերոջ մօտ):

8—Մինչև ե՞րբ պիտ առաջանաս,

—Չպէ՞տք է կանգնես:

—Մինչև որ յաթեն դիմացիմիս, առանց հրամանի կա՛նգ չեմ առնի»¹⁴:



Հատված փաստաթղթի բնագրից

47-րդ, 48-րդ, 49-րդ և 50-րդ կետերում նշվում է՝

«47— Հեծելազորքը գրոհում է, ի՞նչ պէտք է անել:

—Պառկել, որովհետև ձին չի մօտենում պառկած մարդուն.

Եթէ հնարատրութիւն ունենամ կը կրակեմ, իսկ եթէ ոչ՝ կաշխատեմ պառկել ձիատրի ձայն կողմը, որն աւելի ապահով է:

48—Քա՛մի քայլ հեռաւորութեան վրայ կարող ես կրակել:

—Մինչև 900 ամէն մի նպատակ, մինչև 600 հեծելազորքի վրայ, 400 պառկածների վրայ, 500 նրանց վրայ, որոնք ծնկի վրայ են:

49—Ե՞րբ է զինուորը պատրաստ կրակելու:

—Երբ պարզ կերպով տեսնում է նպատակը և ճշտօրէն չափել է տարածութիւնը:

50—Ընդհանրապէս ո՞վ է յաթում:

—Նա՛ որը նպատակ է դրել յաթել ինչ գնով էլ լինի»¹⁵:

8-րդ բաժնում շարադրված են զինվորական պատվանշաններ շնորհելու համար զինվորին ներկայացվող պահանջները: Չինվորական պատվանշան (Գեոր-

¹⁴ Նույն տեղում, էջ 30–31:

¹⁵ Նույն տեղում, էջ 36–37:

գիյան խաչ) ստանալու համար զինվորը մարտի ժամանակ պետք է կատարի հետևյալ կարևոր պահանջները.

«1– Ով թշնամու գրաւած ամրութիւնը վերցնելու ժամանակ անձնական անվախութեան և քաջութեան օրինակով քաջալերում է իր ընկերներին:

2– Ով յօժարական կերպով պատրաստակամութիւն է յայտնում մի վտանգաւոր, բայց կարևոր գործ ստանձնելու և յաջողութեամբ պսակում ստանձնած ձեռնարկութիւնը:

3– Ով կռում սեփական ձեռքով խլում է թշնամու դրօշակը (հետևակային կամ հեծելագօրական) կամ էլ յետ է խլում թշնամուց մեր թշնամու կողմից գրաւուած դրօշակը:

4– Ով կռում գերի կը վերցնի թշնամու շտապ-սպային կամ գորապետին:

5– Ով կռում կը փրկէ իր հրամանատարների կեանքը, յետ կը մղէ (կարգիլէ) նրան սպառնացող հարուածը կամ կազատէ նրան թշնամու ձեռքից:

6– Ով վիրաւորուած լինելով հանդերձ վերքը վիրակապելուց յետոյ իր ամբողջ սպառազինութեան պիտոյքներով կը վերադառնայ գօրամասը և կը մնայ մինչև ճակատամարտի վախճանը:

7– Ով վերջնական և վճռական գրոհի ժամանակ առաջինը կլինի բարձրացող թշնամու հողապատնէշի վրայ:

8– Ով իր սպաների վիրաւորուելուց կամ սպանուելուց յետոյ կանցնի նրանց տեղը, կընդունի ղեկավարութիւնը և պահպանելով կարգ ու կանոն գօրամասում, կը դիմադրէ թշնամուն:

9– Ով իր անձնական օրինակով կը քաջալերի ընկերներին և նրանց օգնութեամբ յետ կը խլէ՝ թշնամու կողմից գրաւուած մեր թնդանօթը:

10– Ով անձնական քաջութեան օրինակով յետ կը մղէ իր մարտկոցը ներս խուժած թշնամուն:

11– Ով հաւաքելով իր ընկերներին, նրանց օգնութեամբ, թշնամու կրակի տակ, կը փրկէ անպէտքացած կամ էլ ձիեր չունեցող մեր թնդանօթը»¹⁶:

Կանոնագրքում ընդգծված է, որ զինվորական պատվանշան ստանալու արժանանում են միմիայն այն զինվորները, որոնք, բացի քաջ լինելուց, օրինակելի են մասնա զինվորական կարգապահության տեսակետից¹⁷:

Ինչպես երևում է այս կանոնադրությունից, Նժդեհի ու Շերամի հիմնական նպատակն էր անկազմակերպ, չվարժված, իսկ երբեմն էլ ռազմական գործին բոլորովին անձանոթ մարդկանցից կազմված զորամասերը կարճ ժամկետում դարձնել միանգամայն վարժված, կարգապահ, մարտունակ: Կանոնադրության առանցքը քաջարի, Հայրենիքին անսահման նվիրված զինվորի դաստիարակությունն է, իսկ մարտավարության անկյունաքարը՝ տեղանքի ճիշտ օգտագործումը: Նժդեհի և Շերամի կանոնադրությունում գետնոված պատվիրանները, կարծում ենք, այսօր էլ չեն կորցրել իրենց արդիականությունը:

¹⁶ Նույն տեղում, էջ 37–39:

¹⁷ Տես նույն տեղում, էջ 39:

ВОЕННАЯ ИСТОРИЯ

**ВОЕННЫЙ УСТАВ СТРЕЛКОВЫХ ПОЛКОВ
ПЕРВОЙ РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ**

М. А. КАРАПЕТЯН, доктор исторических наук

РЕЗЮМЕ

Впервые в научное обращение вводится Устав для пехотных полков, разработанный в 1918 г. видным политическим и военным деятелем Армении Гарегином Нжде и Шерамом. В Уставе излагаются основные принципы уставных отношений между начальниками и подчиненными, приемы с винтовкой, без винтовки и штыкового боя, требования к дежурному составу полков, основные проступки солдат и меры наказания, а также перечень заслуг, за которые военнослужащие представлялись к наградам.

Основной целью данного Устава была трансформация в кратчайшие сроки неорганизованных подразделений, укомплектованных необученными, подчас совершенно незнакомыми с военным делом людьми, в организованные, дисциплинированные, боеспособные подразделения. В основе Устава лежала идея воспитания храброго, беззаветно преданного Отечеству, тактически грамотного воина.

MILITARY HISTORY

**THE MILITARY REGULATIONS OF RIFLE REGIMENTS
OF THE FIRST REPUBLIC OF ARMENIA**

M. L. KARAPETYAN, Doctor of Historical Sciences

SUMMARY

The Regulations for rifle regiments, elaborated in 1918 by Armenia's eminent political and military figure Garegin Njdeh and Sheram, are put into academic circulation for the first time. The main principles of statutory relations among chiefs and subordinates, techniques with and without a rifle and of bayonet fight, requirements to the duty staff of regiments, soldiers' main offences and punitive measures, as well as the list of merits for which servicemen were written up for awards – all these are stated in the Regulations.

The main goal of the given Regulations was the transformation of non-organized subdivisions recruited with people who were untrained, at times completely unknown with the military art, into organized, disciplined, efficient subdivisions. The idea of training a brave, utterly devoted to the Fatherland, tactically literate soldier lay in the basis of the Regulations.

ՀԱՄԱՐԻ ԲԱՌԱՐԱՆ

Ն. Ս. ՄԿՐՏՉՅԱՆ, կապիտան, Դ. Ս. ՉԻԼԻՆԳԱՐՅԱՆ, գնդապետ

ՀԱՅ-ՌՈՒՄԵՐԵՆ-ԱՆԳԼԵՐԵՆ ԲԱՌԱՐԱՆ

անճնավորում—персонификация; personification	կերպափոխում—трансформация; transformation
բազմազանեցում—диверсификация; diversification	կողմնորոշիչ—ориентир; guideline, landmark
բաղադրատարր—компонент; component	կրկնօրինակում—дублирование; duplication
բաղադրիչ—составляющая; constituent	համախումբ—1. совокупность, 2. совокупный; 1. totality, 2. total, 3. combined
էյուրակիր—портативный; portable	հավելած—прирост; increase
զգայարնկալում—перцептивное восприятие; perception	հոգեբանական կայունություն—психологическая устойчивость; psychological stability
զորահավաք—мобилизация; mobilization	հոգեծին գործոն—психогенный фактор; psychogenic factor
զորահավաքային—мобилизационный; mobilization	հոգեշարժումային—психомоторный; psychomotor
—զորահավաքային ծավալում—мобилизационное развертывание; mobilization deployment	ձևաչափ—формат; format
—զորահավաքային պատրաստում—мобилизационная подготовка; preparedness activity	ձևարկում—формализация; formalization
—զորահավաքային պլանավորում—мобилизационное планирование; mobilization planning	մարտանցում—форсирование; 1. forcing, 2. forced crossing
—զորահավաքային ռեզերվ—мобилизационный резерв; mobilization reserve	մյուս զորքերը—другие войска; other troops
թվակազմ—контингент; contingent	մշտազննում—мониторинг; monitoring
ինքնակարգավորում—саморегуляция; autoregulation	մոբիլիզացիոն—мобилизационный; mobilization
կազմակերպվածք—организационная структура; organizational structure	—մոբիլիզացիոն ծավալում—мобилизационное развертывание; mobilization deployment
կաղապարվածք—муляж; 1. model, 2. waxwork	—մոբիլիզացիոն պատրաստում—мобилизационная подготовка; preparedness activity
կառուցավորում—структурирование; structuring	—մոբիլիզացիոն պլանավորում—мобилизационное планирование; mobilization planning
կենսակայունություն—жизнестойкость; viability	—մոբիլիզացիոն ռեզերվ—мобилизационный резерв; mobilization reserve
կենսունակություն—жизнеспособность; vitality	

մոբիլիզացում—мобилизация; mobilization
 նախանշանակում—предназначение, назначение; 1. earmarking, 2. predestination
 նմանակ—аналог; analogue
 նմանարկում—имитация; imitation
 նմանարկումային—имитационный; simulation, imitating
 շարակարգ—эшелон; echelon
 շարժունակություն—мобильность; mobility
 որոշարկում—детерминирование; determination
 շափանիչ—критерий; criterion
 պահուստ—резерв; reserves
 պահուստավորում—резервирование; reservation
 պատեհաժամություն—своевременность; timeliness
 պատվաստանյութ—вакцина; vaccine
 պատրաստակունություն—выучка; 1. training, 2. skill, 3. preparedness
 պատրաստվածություն—подготовленность; preparedness
 պատրաստություն—готовность; readiness
 պատրաստուկ—препарат; preparation
 պատրաստում—подготовка; 1. preparation, 2. training
 —մարտական պատրաստում—боевая

подготовка; combat training
 —պետության պատրաստում պաշտպանությանը—подготовка государства к обороне; state's preparation for defense
 ռազմականացված բնակավայր—военизированное поселение; militarized settlement
 ռազմարշավ—кампания; campaign
 սարքավորանք—оборудование; 1. equipment, 2. technique
 սպառնալից շրջան—угрожаемый период; threat period
 վարժեցնովի հակազդում—заученная реакция; studied reaction
 տարածքային պաշտպանություն—территориальная оборона; territorial defense
 տարահանում—эвакуация; 1. evacuation, 2. towaway
 տեղական—местный; 1. local, 2. native
 տեղային—локальный; local
 ուշադիրություն—внимательность; attentiveness
 ուշադրություն—внимание; attention
 փոխգործություն—интероперабельность; interoperability
 փոխապատկերություն—конфигурация; configuration
 օգտապաշտական—утилитарный; utilitarian

РУССКО-АРМЯНСКИЙ СЛОВАРЬ

аналог—նմանակ
 вакцина—պատվաստանյութ
 внимание—ուշադրություն
 внимательность—ուշադիրություն
 военизированное поселение—ռազմականացված բնակավայր
 выучка—պատրաստակունություն
 готовность—պատրաստություն
 детерминирование—որոշարկում
 диверсификация—բազմազանեցում
 другие войска—մյուս զորքերը
 дублирование—կրկնօրինակում
 жизнеспособность—կենսունակություն

жизнестойкость—կենսակայունություն
 заученная реакция—վարժեցնովի հակազդում
 имитационный—նմանարկումային
 имитация—նմանարկում
 интероперабельность—փոխգործություն
 кампания—1. արշավ, 2. ռազմարշավ
 компонент—բաղադրատարր
 контингент—թվակազմ
 конфигурация—փոխապատկերություն
 критерий—շափանիչ
 локальный—տեղային

местный—տեղական
 мобилизационный—1. զորահավաքա-
 յին, 2. մոբիլիզացիոն
 —мобилизационная подготовка—
 1. զորահավաքային պատրաստում,
 2. մոբիլիզացիոն պատրաստում
 —мобилизационное планирование—
 1. զորահավաքային պլանավորում,
 2. մոբիլիզացիոն պլանավորում
 —мобилизационное развертывание—
 1. զորահավաքային ծավալում, 2. մոբի-
 լիզացիոն ծավալում
 —мобилизационный резерв—1. զորա-
 հավաքային ռեզերվ, 2. մոբիլիզացիոն
 ռեզերվ
 мобилизация—1. զորահավաք, 2. զորա-
 հավաքում, 3. մոբիլիզացում, 4. լարում
 мобильность—շարժունակություն
 мониторинг—մշտագննում
 муляж—կադավարվածք
 назначение—1. նշանակում, 2. *см. prep-*
назначение
 оборудование—1. սարքավորանք,
 2. սարքավորում
 организационная структура—կազմա-
 կերպվածք
 ориентир—կողմնորոշիչ
 персонафикация—անձնավորում
 перцептивное восприятие—զգայաբն-
 կալում
 подготовка—պատրաստում
 —боевая подготовка—մարտական
 պատրաստում

—подготовка государства к оборо-
 не—պետության պատրաստում պաշտ-
 պանությանը
 подготовленность—պատրաստվածու-
 թյուն
 портативный—դյուրակիր
 предназначение—նախանշանակում
 препарат—պատրաստուկ
 прирост—հավելած
 психогенный фактор—հոգեծին գոր-
 ծոն
 психологическая устойчивость—հո-
 գեբանական կայունություն
 психомоторный—հոգեշարժումային
 резерв—պահուստ
 резервирование—պահուստավորում
 саморегуляция—ինքնակարգավորում
 своевременность—պատեհաժամություն
 совокупность—համախումբ
 совокупный—համախումբ
 составляющая—բաղադրիչ
 структурирование—կառուցավորում
 территориальная оборона—տարած-
 քային պաշտպանություն
 трансформация—կերպափոխում
 угрожаемый период—սպառնալից
 շրջան
 утилитарный—օգտապաշտական
 формализация—ձևարկում
 формат—ձևաչափ
 форсирование—մարտանցում
 эвакуация—տարահանում
 эшелон—շարակարգ

ENGLISH-ARMENIAN DICTIONARY

analogue—նմանակ
 attention—ուշադրություն
 attentiveness—ուշադիրություն
 autoregulation—ինքնակարգավորում
 campaign—1. արշավ, 2. ռազմարշավ
 combined—1. միացյալ, 2. համախումբ
 component—բաղադրատարր
 configuration—փոխդասավորություն
 constituent—բաղադրիչ
 contingent—թվակազմ
 criterion—չափանիշ

determination—որոշարկում
 diversification—բազմազանեցում
 duplication—կրկնօրինակում
 earmarking—նախանշանակում
 echelon—շարակարգ
 equipment—սարքավորանք
 evacuation—տարահանում
 forced crossing—մարտանցում
 forcing—մարտանցում
 formalization—ձևարկում
 format—ձևաչափ

- guideline—1. ուղենիշ, 2. կողմնորոշիչ
 imitating—see *simulation*
 imitation—նմանարկում
 increase—1. ավելացում, 2. հավելանք
 interoperability—փոխգործություն
 landmark—see *guideline*
 local—1. տեղական, 2. տեղային
 militarized settlement—նազմականացված բնակավայր
 mobility—շարժունակություն
 mobilization—1. զորահավաք, 2. զորահավաքում, 3. մոբիլիզացում, 4. զորահավաքային, 5. մոբիլիզացիոն
 —mobilization deployment—1. զորահավաքային ծավալում, 2. մոբիլիզացիոն ծավալում
 —mobilization planning—1. զորահավաքային պլանավորում, 2. մոբիլիզացիոն պլանավորում
 —mobilization reserve—1. զորահավաքային ռեզերվ, 2. մոբիլիզացիոն ռեզերվ
 model—կադապարվածք
 monitoring—մշտազննում
 native—տեղական
 organizational structure—կազմակերպվածք
 other troops—մյուս զորքերը
 perception—զգայաբնկալում
 personification—անձնավորում
 portable—դյուրակիի
 predestination—նախանշանակում
 preparation—1. պատրաստում, 2. պատրաստուկ
 —state's preparation for defense—պետության պատրաստում պաշտպանությանը
 preparedness—1. պատրաստականություն, 2. պատրաստվածություն
 preparedness activity—1. զորահավաքային պատրաստում, 2. մոբիլիզացիոն պատրաստում
 psychogenic factor—հոգեծին գործոն
 psychological stability—հոգեբանական կայունություն
 psychomotor—հոգեշարժումային
 readiness—պատրաստություն
 reservation—պահուստավորում
 reserves—պահուստ
 simulation—1. նմանարկում, 2. նմանարկումային, 3. մոդելավորում
 skill—1. պատրաստականություն, 2. հրմտություն
 structuring—կառուցավորում
 studied reaction—վարժեցնովի հակազդում
 technique—սարքավորանք
 territorial defense—տարածքային պաշտպանություն
 threat period—սպառնալից շրջան
 timeliness—պատեհաժամություն
 total—համախումբ
 totality—համախումբ
 towaway—տարահանում
 training—1. պատրաստականություն, 2. պատրաստում
 —combat training—մարտական պատրաստում
 transformation—կերպափոխում
 utilitarian—օգտապաշտական
 vaccine—պատվաստանյութ
 viability—կենսակայունություն
 vitality—կենսունակություն
 waxwork—կադապարվածք

Ի գիտություն հեղինակների և ընթերցողների

ՀՀ ՊՆ Դ. Կանայանի անվան ազգային ռազմավարական հետազոտությունների ինստիտուտի «Հայկական բանակ» ռազմագիտական հանդեսն ընդգրկված է ԲՈՒՀ-ի կողմից հաստատված «Գիտություն-կան և թեկնածուական առենախոսությունների արդյունքների հրապարակման համար ընդունելի ամսագրերի ցանկում»:

Հոդվածները պետք է ներկայացվեն հայերեն լեզվով, երկու օրինակով՝ շարված 1,5 ինտերվալով, մինչև 10 համակարգչային էջ ծավալով, հոդվածին կից պետք է լինեն նրա ռուսերեն և անգլերեն ամփոփումները մինչև 2 էջ ծավալով:

Հեղինակները պետք է վկայակոչեն օգտագործված առավել կարևոր աղբյուրները:

Հեղինակները պատասխանատու են հոդվածներում բերվող փաստերի հավաստիության և գաղափարային պահանջների պահպանման համար:

Հեղինակների դիրքորոշումը պարտադիր չէ, որ համընկնի խմբագրության դիրքորոշման հետ:

Գիագրամները, սխեմաները, գծագրերը, նկարները, լուսանկարները պետք է լինեն հստակ, տպագրության համար պիտանի:

Հոդվածներում պետք է վերծանված լինեն օգտագործվող ռազմամասնագիտական հասպատումները:

Ձեռագրերը հետ չեն վերադարձվում:

Հոդվածները հրապարակվում են պարտադիր գիտական փորձաքննություն անցնելուց հետո:

Նյութերի մասամբ կամ ամբողջությամբ արտատպումը թույլատրվում է միայն խմբագրության գրավոր համաձայնությամբ:

К сведению авторов и читателей

Военно-научный журнал Института национальных стратегических исследований им. Д. Канаяна МО РА «Айкакан банак» включен в утвержденный ВАК-ом «Список приемлемых журналов для публикации результатов докторских и кандидатских диссертаций».

Статьи следует представлять на армянском языке, в двух экземплярах, в пределах 10 компьютерных страниц, напечатанных в 1,5 интервала, с приложением резюме на русском и английском языках объемом до 2-х страниц.

Авторы должны давать сноски на использованные наиболее важные источники.

Авторы ответственны за достоверность и несекретность фактов, приводимых в статьях.

Позиции авторов не обязательно совпадают с позицией редакции.

Диаграммы, схемы, чертежи, рисунки, фотоснимки должны быть исполнены в четком изображении, пригодными для печати.

В статьях должны быть раскрыты употребляемые военно-специальные аббревиатуры. Рукописи не возвращаются.

Статьи публикуются после прохождения обязательной научной экспертизы.

Перепечатка частично или полностью материалов допускается только с письменного разрешения редакции.

For the information of the authors and readers

Defense-academic journal «Haikakan banak» of Drastamat Kanayan Institute for National Strategic Studies of the Defense Ministry of the Republic of Armenia is included into «The list of acceptable magazines for the publication of the results of doctors and candidates' dissertations», affirmed by the Superior Attesting Commission.

The articles should be submitted in Armenian. Please, supply two copies. Articles are to be 1,5 spaced and should not exceed 10 computer pages in length. Provide Russian and English summaries (2 pages maximum).

Authors should give footnotes for the sources used.

Authors are responsible for the accuracy and the non-confidential nature of the facts given in the articles.

Opinions expressed herein are those of the authors and are not necessarily those of the editorial board.

Diagrams, schemes, drawings, pictures and photos should be of clear print quality.

Please explain special military acronyms.

Manuscripts are not returned.

Articles get published after obligatory scientific examination.

Partially or fully re-printing of materials is allowed only by written permission of the editorial staff.

ՀԱՅԿԱԿԱՆ ԲԱՆԱԿ

Ռազմագիտական խմբագրման բաժնի պետ՝ *Ջ. Դ. Ասաբրյան*
Թարգմանչության և խմբագրման բաժնի պետ՝ *Ա. Մ. Մովսիսյան*
Տեխնիկական բաժնի պետ՝ *Ա. Պ. Նազարեթյան*

Հայերեն տեքստերի խմբագիր՝ *Ա. Կ. Շահբազյան*
Ռուսերեն և անգլերեն տեքստերի խմբագիր՝ *Լ. Հ. Պասպիկյան*
Ձևավորող նկարիչ՝ *Հ. Գ. Սահակյան*
Լուսանկարիչ՝ *Ա. Դ. Ներսիսյան*

Տեխնիկական և գեղարվեստական խմբագրումը՝ *Ա. Պ. Նազարեթյանի*
Տեքստերի թարգմանությունը՝ *Ն. Ս. Սկրյուչյանի, Ա. Ջ. Պեյրոսյանի*
Համակարգչային ապահովումը՝ *Գ. Ս. Դադայանի, Վ. Ռ. Խալաֆյանի*
Սրբագրիչներ՝ *Ն. Հ. Բաղդասարյան, Ա. Հ. Սարուխանյան*

Խորհրդատվություն անգլերեն տեքստերի վերաբերյալ՝ *Ա. Հ. Հակոբյանի*


Լուսանկարչական ապահովումը՝
ՀՀ ՊՆ Տեղեկատվության և հասարակայնության հետ կապերի վարչություն

Խմբագրության հասցեն՝ Երևան, Կ. ՌԻՆեցու փողոց, 56/6, հեռ. 28-12-94, 23-29-71:
Էլ. փոստ՝ haykakanbanak@mail.ru

© ՀՀ ՊՆ Դ. Կանայանի անվ. ազգային ռազմավարական հետազոտությունների ինստիտուտի
«Հայկական բանակ» ռազմագիտական հանդես, 2009 թ.

Ստորագրվել է տպագրության 22.09.2009:
Թուղթը՝ օֆսեթային: Ձևաչափը՝ 70x100 1/16:
Տեքստը՝ 120 էջ + 4 էջ ներդիր:
Պայմանական տպագրական 9,75 մամուլ: Տպաբանակը՝ 500:
Տառատեսակը՝ «Թայմս» և «Բալթիկա»: Տպագրությունը՝ օֆսեթ:
Վկայական՝ 523: Դասիչ՝ 69263: ISSN 1829-0108:

Տպագրվել է «Ամարաս» տպարանում:



Արցախյան ազատամարտ.
դրվագ ինքնապաշտպանական ուժերի կազմավորման գործընթացից:
Կենտրոնում՝ Մոնթե Մելքոնյանը (Ավո)
ԼՂՀ, 1992 թ.



ՀԱՅԿԱԿԱՆ ԲԱՆԱԿ